



Financed by the
European Union under
the Recovery and Resilience Facility



ARMENQA

ԱՐԴՅՈՒՆԱՀԵՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ
ԵՎ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՄՇԱԿՈՒՄ

ԴԱՍԱԽՈՍԻ
ՁԵՌՆԱՐԿ



Co-funded by the
Tempus Programme
of the European Union



ARMENQA

TEMPUS «ԱՐՄԵՆՔԱ» ՆԱԽԱԳԻԾ
ԹԻՎ 543817-TEMPUS-1-2013-1-SE-TEMPUS-SMHES
«ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԵՎ
ՈԼՈՐՏԱՅԻՆ ԾՐՋԱՆԱԿՆԵՐԻ
ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ»

ԱՐԴՅՈՒՆԱՀԵՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ
ԵՎ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՄՇԱԿՈՒՄ

ԴԱՍԱԽՈՍԻ
ՁԵՌՆԱՐԿ

Ա. Բուդաղյան, Ա. Գրիգորյան

ԵՐԵՎԱՆ 2017

ՀՏԴ 378
ԳՄԴ 74.58
Ա 859

Ա. Բուդաղյան, Ա. Գրիգորյան
Խմբագիր՝ Մ. Սանթուրջյան


Ա 859 Արդյունահեն դասընթացների և կրթական ծրագրերի
մշակում. դասախոսի ձեռնարկ.- Եր.: 2017.- 284 էջ:

Սույն ձեռնարկը հասցեագրված է ՀՀ բուհերի ուսումնական գործընթացում ներգրավված բոլոր շահագրգիռ կողմերին՝ դասախոսական կազմին, կրթական ծրագրեր մշակող աշխատանքային խմբերին և վարչական անձնակազմին: Ձեռնարկում ներկայացված են արդյունահեն դասընթացների և կրթական ծրագրերի մշակման ժամանակակից մոտեցումներն ու եղանակները, դրանց ներկայացվող արդի պահանջներն ու չափանիշները, տրված են նաև օրինակներ և գործնական առաջադրանքներ:

ՀՏԴ 378
ԳՄԴ 74.58

© Բուդաղյան Ա., 2017

ISBN 978-9939-872-14-8



**Նախագիծը ֆինանսավորվել է Եվրոպական
Հանձնաժողովի աջակցությամբ:**

**Սույն հրապարակումը արտացոլում է
միայն հեղինակների տեսակետները, ուստի
Հանձնաժողովը պատասխանատվություն չի
կրում դրանում տեղ գտած տեղեկատվության
կիրառության համար:**

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....	6
-------------------	---

ԳԼՈՒԽ I. ԱՐԴՅՈՒՆԱՀԵՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ԵՎ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՄՇԱԿՈՒՄԸ	9
---	----------

1.1. Արդյունահեն կրթական ծրագրի նախագծման և մշակման սկզբունքները	12
1.2. Կրթական ծրագրի նպատակների սահմանումը	18
Օրինակներ	19
Գործնական առաջադրանքներ.....	24
1.3. Դասընթացի նպատակների սահմանումը	27
Օրինակներ	28
Գործնական առաջադրանքներ.....	32
1.4. Դասընթացի կրթական վերջնարդյունքների ձևակերպումը	35
Իմացության ձևերի Բլումի տաքսոնոմիան	42
Կրթական վերջնարդյունքների հիմնական բնութագրերը	58
Ինչպես ձևակերպել դասընթացի կրթական վերջնարդյունքները	62
Օրինակներ	69
Գործնական առաջադրանքներ.....	76
1.5. Ծրագրի կրթական վերջնարդյունքների ձևակերպումը	86
Ինչպես ձևակերպել ծրագրի կրթական վերջնարդյունքները	99
Գիտելիքի աստիճանական աճը կրթական ծրագրում.....	104
Օրինակներ	107
Գործնական առաջադրանքներ.....	115
1.6. Կրթական ծրագրի կառուցվածքի և բովանդակության որոշումը	124
Կրթական ծրագրի ուսումնական պլանի քարտեզը.....	126
Գործնական առաջադրանքներ.....	130
1.7. ECTS կրեդիտային համակարգը	136
ECTS կրեդիտային համակարգի հիմնադրույթները	138
Դասընթացին կրեդիտների հատկացումը	140

Օրինակներ	158
Գործնական առաջադրանքներ.....	161
ԱՄՓՈՓՈՒՄ	165

ԳԼՈՒԽ 2. ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ, ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ

ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԻ

ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ 167

2.1. Դասավանդման և ուսումնառության մեթոդները167

Օրինակներ

Գործնական առաջադրանքներ.....

2.2. Ուսանողների չափանիշահեն գնահատումը..... 184

Արդյունավետ գնահատման հիմնական սկզբունքները

Գնահատման չափանիշների ձևակերպումը

Գնահատման ձևերն ու մեթոդները և դրանց ընտրությունը.....

Գնահատման չափորոշիչները և դրանց սահմանումը.....

Գնահատման չափորոշիչների մակարդակների որոշումը.....

Գնահատման տեսակները.....

Ուսումնառության միջավայրը.....

Օրինակներ

Գործնական առաջադրանքներ.....

ԱՄՓՈՓՈՒՄ 238

ԳԼՈՒԽ 3. ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՓԱՍՏԱԹՂԹԱՅԻՆ

ՓԱԹԵԹԻ ԿԱԶՄՈՒՄԸ 239

3.1. Կրթական ծրագրի ստեղծման առաջարկի հայտը.....240

3.2. Կրթական ծրագրի մասնագիրը (սպեցիֆիկացիան).....244

3.3. Դասընթացի համառոտագիրը..... 257

ԱՄՓՈՓՈՒՄ 264

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ 265

ՏԵՐՄԻՆԱԲԱՆԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ 266

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ



*Կարևորագույն հարցը, որ պետք է
վրվի ուսանողին կամ շրջանավարտին
ոչ թե այն է, թե ինչ է նա արել որակա-
վորումը ստանալու համար, այլ թե ինչ
կարող է նա անել որակավորումը ստա-
նալուց հետո:*

Եվրոպայի խորհուրդ

Սույն ձեռնարկը հասցեագրված է ՀՀ բուհերի ուսումնական գործընթացում ներգրավված բոլոր շահագրգիռ կողմերին՝ դասախոսական կազմին, կրթական ծրագրերի ղեկավարներին, կրթական ծրագրեր մշակող աշխատանքային խմբերին, ամբիոնի վարիչներին, ֆակուլտետի և բուհի վարչական անձնակազմերին և այլն: Ձեռնարկի նպատակն է բոլոր այս շահագրգիռ խմբերին ծանոթացնել կրթական ծրագրերի մշակմանը ներկայացվող արդի միջազգային պահանջներին՝ տրամադրելով արդյունահեն կրթական ծրագրերի մշակման ժամանակակից եղանակներ և համապատասխան գործնական ուղենիշներ:

Արդյունահեն կրթական ծրագրերի մշակումը հատկապես կարևորվում է երկու հանգամանքով: Այն էապես դյուրացնում է ուսանողների կողմից ծրագրի ակնկալվող կրթական վերջնարդյունքների ձեռքբերումը և նպաստում ծրագրի հետագա գնահատման, հաստատման, մշտադիտարկման և վերանայման գործընթացների հաջող իրականացմանը: Մյուս կողմից, այն ապահովում է կրթական ծրագրի համապատասխանությունը ուսանողների, աշխատաշուկայի և հասարակության պահանջմունքներին:

Նոր կրթական ծրագրի նախագծումը և մշակումը հիմնված է հետևյալ հիմնական սկզբունքների վրա.

- ծրագիրն ունի հստակ սահմանված նպատակ և ակնկալվող կրթական վերջնարդյունքներ,
- ծրագրի ակնկալվող կրթական վերջնարդյունքները բավարարում են տվյալ առարկայական/մասնագիտական ոլորտում գործող ծրագրային չափորոշիչների և (կամ) ուղենիշների, բարձրագույն կրթության որակավորումների եվրոպական, ազգային և (կամ) ոլորտային շրջանակների (եթե այդպիսիք կան), ինչպես նաև մասնագիտական, օրենսդիր և ոլորտը կարգավորող իրավասու մարմինների/կառույցների ու գործատուների պահանջները,
- որոշված և նկարագրված են ծրագրի շրջանավարտների ապագա կարիերայի հնարավորությունները,
- սահմանված և նկարագրված են այն ձևերն ու մեթոդները, որոնց օգնությամբ ձևավորվելու և գնահատվելու են ծրագրի ակնկալվող կրթական վերջնարդյունքները,
- բացահայտված են ծրագիրն իրականացնելու համար անհրաժեշտ մարդկային և նյութական ռեսուրսները:



Կրթական ծրագրի մշակման հիմքում պետք է լինեն այս երեք հիմնական հարցերը.

1. Ի՞նչ պետք է սովորեն ուսանողները - ակնկալվող կրթական վերջնարդյունքներ:
2. Ի՞նչպե՞ս նրանք պետք է սովորեն - դասավանդման և ուսումնառության մեթոդներ, որոնք պետք է նպաստեն ուսանողների կողմից ակնկալվող կրթական վերջնարդյունքների հաջողությամբ ձեռքբերմանը:
3. Ի՞նչպե՞ս պարզել ուսումնառության արդյունքները ձեռք են բերվել, թե՞ ոչ - գնահատման ձևեր, որոնք չափում են ուսանողի կողմից ակնկալվող կրթական վերջնարդյունքների ձեռքբերման մակարդակը:

Արդյունահեն ծրագրի մշակումը ենթադրում է այս երեք բաղկացուցիչ խնդիրների տրամաբանական և համակարգված շաղկապումն ու լուծումը:

ԳԼՈՒԽ Ի. ԱՐԴՅՈՒՆԱՇԵՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ԵՎ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՄՇԱԿՈՒՄԸ




Կրթական ծրագրի մշակումը սկսվում է վերջինիս նպատակների սահմանումից, որին հաջորդում է ծրագրի կրթական վերջնարդյունքների ձևակերպումը, ապա ընտրվում են դասավանդման և ուսումնառության առավել արդյունավետ մեթոդներ, որոնք ուսանողներին հնարավորություն կընձեռեն հաջողությամբ ձեռք բերելու ծրագրի ակնկալվող կրթական վերջնարդյունքները: Հաջորդ քայլը գնահատման այն ձևերի որոշումն է, որոնք հնարավորություն կտան ուսանողներին լավագույնս դրսևորելու կամ ցուցաբերելու ձեռք բերած կրթական վերջնարդյունքները, իսկ դասախոսներին՝ համարժեք կերպով չափելու դրանք:

Հետևաբար, արդյունահեն կրթական ծրագիր կազմելու տեսանկյունից կարևոր նշանակություն ունի ծրագրի հետևյալ երեք հանգուցային տարրերի փոխհամաձայնեցվածությունը.

1. ծրագրի նպատակ և ակնկալվող կրթական վերջնարդյունքներ,
2. դասավանդման և ուսումնառության մեթոդներ, որոնք նպատակաուղղված են ուսանողի կողմից այդ կրթական վերջնարդյունքները հաջողությամբ ձեռք բերելուն,
3. գնահատում, որը չափում է ուսանողի կողմից այդ վերջնարդյունքների ձեռքբերման որակական և քանակական մակարդակը:

Ծրագրի մշակման գործընթացում այս երեք տարրերը պետք է դիտարկել համատեղ. ընտրված դասավանդման և ուսումնառության մեթոդները պետք է փոխկապակցված լինեն ծրագրի կրթական վերջնարդյունքների հետ և ընտրվեն այնպես, որ առավելագույնս օժանդակեն ուսանողի կողմից դրանց ձեռքբերմանը: Միաժամանակ, յուրաքանչյուր կրթական վերջնարդյունքի ձեռքբերումը պետք է գնահատվի այնպիսի մեթոդներով ու ձևերով, որոնք ուսանողին հնարավորություն կտան լավագույնս դրսևորելու (ցուցաբերելու) դրանց տիրապետման մակարդակը:



Նկար 1. Կրթական ծրագրի նախագծման, մշակման, իրականացման և որակի շարունակական բարելավման գործընթացների շրջափուլերը

Ծրագրի նպատակը և կրթական վերջնարդյունքները որոշելիս հարկավոր է նախ և առաջ կատարել ծրագրի սոցիալական կարիքի բացահայտում (ուսանողներ, գործատուներ և այլն) և հաշվի առնել տվյալ մասնագիտական (առարկայական) ոլորտի ծրագրային չափորոշիչների կամ կողմնորոշիչների, բարձրագույն կրթության որակավորումների եվրոպական, ազգային կամ ոլորտային շրջանակների, ինչպես նաև համապատասխան մասնագիտական կազմակերպությունների (ընկերակցություններ, միություններ և այլն), գործատուների և բարձրագույն կրթության ոլորտը կարգավորող իրավասու մարմինների (օրինակ՝ Կրթության և գիտության նախարարություն, Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն և այլն) պահանջները (տե՛ս սկար 1):

Կրթական ծրագիրը պետք է նախ և առաջ շրջանավարտներին պատրաստի հաջող աշխատանքային կարիերայի և ուսումը հաջորդ կրթական մակարդակում շարունակելու համար: Այդ նպատակի իրականացման համար անհրաժեշտ է, որ պարզորոշ ներկայացվի ծրագրի կապը աշխատաշուկայի, մասնագիտական կառույցների և հնարավոր գործատուների հետ, ապահովվի գործատուների ներգրավումը ուսումնական ծրագրի կրթական վերջնարդյունքների մշակման գործընթացում, բացահայտվեն արտադրական պրակտիկայի հնարավորությունները, կարևորվի շրջանավարտի ապագա աշխատանքին անմիջականորեն առնչվող մասնագիտական կարողությունների ուսուցումը, հստակեցվեն դասավանդող կազմի անհրաժեշտ մասնագիտական և մանկավարժական կարողությունները և այլն:

Կրթական ծրագիրը պետք է համապատասխանի նաև արտաքին (միջազգային, եվրոպական, տեղական) և ներքին (բուհական, ֆակուլտետային) ծրագրային չափորոշիչներին և/կամ կողմնորոշիչներին, արդյունքների և բովանդակության առումով համահունչ լինի այլ բուհերի (հատկապես միջազգային) նմանատիպ կրթական ծրագրերին, որպեսզի նաև նպաստի ծրագրի միջազգայնացմանը և ուսանողների շարժունությանը:

1.1. Արդյունահեն կրթական ծրագրի նախագծման և մշակման սկզբունքները



Յուրաքանչյուր կրթական ծրագրի մշակման հիմքում պետք է դրվի ծրագրի (որակավորման) պրոֆիլը: Որակավորման պրոֆիլը աշխատաշուկայում շրջանավարտի ապագա գրադվածության ընդհանուր նկարագիրն է, որն արտահայտում է հասարակության ներկայիս պահանջմունքները: Գործնականում հասարակության պահանջմունքները հիմնականում արտահայտում են ինչպես ուսանողներն ու սկադեմիական հանրու-

թյունը, այնպես էլ արտաքին շահագրգիռ կողմերը՝ գործատուները, շրջանավարտները և մասնագիտական հանրությունը: Այս խմբերից յուրաքանչյուրը որոշակի դեր ունի կրթական ծրագրի իրականացման արդյունքում ձևավորվող ընդհանրական և բուն մասնագիտական կոմպետենցիաների (կրթական վերջնարդյունքների) կազմի որոշման գործընթացում:

Ծրագրի պրոֆիլը սահմանում է վերջինիս նպատակներն ու խնդիրները, որոնք առավել հստակ կարելի է ձևակերպել ակնկալվող կրթական վերջնարդյունքների տեսքով: Ծրագրի պրոֆիլի հետ առնչվում են նաև ուսումնական պլանի կառուցվածքը և բովանդակությունը, դասավանդման, ուսումնառության և գնահատման ձևերն ու մեթոդները: Կրթական ծրագրի պրոֆիլը ներկայացնելու համար անհրաժեշտ են հետևյալ բնութագրերը.


1. կրթական ծրագրի և շնորհվող որակավորման պաշտոնական անվանումները,

2. ծրագրի տևողությունը տարիներով և ECTS կրեդիտներով,
3. որակավորման մակարդակը որակավորումների ազգային և եվրոպական շրջանակներում,
4. ծրագրի նպատակը,
5. ծրագրի կարևորագույն բնութագրերը (առարկայական ոլորտը, ընդհանուր կամ հատուկ ուղղվածությունը, առանձնահատկությունները և այլն),
6. շրջանավարտների զբաղվածության և հետագա ուսումնառության հնարավորությունները,
7. ծրագրի կրթական վերջնարդյունքները (ընդհանրական/փոխանցելի կամ բուն մասնագիտական):

Կրթական ծրագրի նախագծումը պետք է ուղեկցվի ուսումնառության յուրաքանչյուր շրջափուլի (բակալավր/մագիստրոս) նպատակների և կրթական վերջնարդյունքների նկարագրությամբ, ինչպես նաև ECTS կրեդիտներով արտահայտված ուսումնական բեռնվածության որոշմամբ:

Կրթական ծրագիրը մի յուրահատուկ «շերտավոր կարկանդակ» է, որտեղ յուրաքանչյուր «շերտ» և ամեն մի «կտոր» ամուր փոխկապակցված է մեկը մյուսի հետ թե՛ ուղղահայաց, թե՛ հորիզոնական կերպով (տե՛ս նկար 2): Սա նշանակում է, որ առանձին դասընթացի կամ մոդուլի ուսումնասիրման ընթացքում ձեռք բերված արդյունքները նպաստում են ծրագրի ընդհանուր վերջնարդյունքների ձեռքբերմանը՝ սերտ կապի մեջ լինելով ծրագրի այլ ուսումնական միավորների կրթական վերջնարդյունքների հետ: Հետևաբար, կրթական ծրագիրը ոչ թե պատահականորեն ընտրված դասընթացների հավաքակազմ է, այլ փոխկապակցված մի կոտ համալիր, որի նախագծման համար պահանջվում է միասնական մոտեցում: Սա վերաբերում է ոչ միայն ծրագրի միջուկը կազմող (պրոֆիլային) դասընթացներին և մոդուլներին, այլ նաև՝

ոչ հիմնական (ոչ պրոֆիլային) և կամընտրական դասընթացներին, որոնք պետք է նպաստեն ինչպես ծրագրի ընդհանրական, այնպես էլ բուն մասնագիտական վերջնարդյունքների ձևավորմանը:



Նկար 2. Կրթական ծրագրի միավորների փոխկապակցվածությունը

Կրթական ծրագրիը պետք է համապատասխանի արտաքին (միջազգային, եվրոպական, տեղական) և ներքին (բուհական, ֆակուլտետային) ծրագրային չափորոշիչների և/կամ կողմնորոշիչների պահանջներին, բովանդակային առումով համահունչ լինի նմանատիպ մասնագիտությունների այլ ճանաչված կրթական ծրագրերին, որպեսզի նպաստի նաև ուսանողների շարժունությանը և ծրագրի միջազգայնացմանը: Կրթական ծրագրերի մշակման համար որպես արտաքին կողմնորոշիչներ կարող են ծառայել հետևյալ աղբյուրները.

- ՀՀ բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին օրենքի պահանջները,

- բարձրագույն կրթության պետական կրթական չափորոշիչները,
- Հարատև (ցկյանս) ուսումնառության որակավորումների եվրոպական շրջանակը,
- Եվրոպական բարձրագույն կրթական տարածքի (ԵԲԿՏ) որակավորումների շրջանակը (Դուբլինյան բնութագրիչները)
- ՀՀ բարձրագույն կրթության որակավորումների ազգային շրջանակը,
- ՀՀ բարձրագույն կրթության որակավորումների ոլորտային (սեկտորիալ) շրջանակները (եթե առկա են տվյալ ոլորտում),
- համապատասխան մասնագիտական կազմակերպությունների, կառույցների, ընկերակցությունների, միությունների, օրենսդիր և ոլորտը կարգավորող մարմինների պահանջները և ցուցումները (եթե այդպիսիք կան),
- վերագգային մակարդակում սահմանված առարկայական կողմնորոշիչները (ինչպես, օրինակ, տարբեր առարկայական ոլորտների համար սահմանված բրիտանական ծրագրային հենանիշները/բենչմարկները, ճարտագիտական մասնագիտությունների ծրագրային հավատարմագրման ամերիկյան չափորոշիչները և այլն),
- ՀՀ-ում մասնագիտության կրթական ծրագրերի հավատարմագրման չափանիշները և չափորոշիչները,
- արտասահմանյան առաջավոր համալսարանների համանման կրթական ծրագրերը և առնչվող այլ փաստաթղթեր:

Կրթական ծրագրերի մշակման համար որպես ներքին կողմ-
նորոշիչներ կարող են ծառայել.

- բուհի կրթական ծրագրերին և դրանց իրականացմանն առնչվող չափորոշիչ փաստաթղթերը և կարգերը,
- բուհի զարգացման ռազմավարական ծրագրի համա-
պատասխան դրույթները,
- կոնկրետ կրթական ծրագրին առնչվող պաշտոնական
այլ փաստաթղթեր:

Արդյունահեն կրթական ծրագրերի նախագծման, մշակման,
իրականացման և որակի շարունակական բարելավման համար
անհրաժեշտ է (տե՛ս նկար 1).

1. Տվյալ կրթական մակարդակի (բակալավր/մագիստրոս)
և մասնագիտական ոլորտի համար որակավորումնե-
րի եվրոպական, ազգային և ոլորտային (սեկտորիալ)
շրջանակների պահանջների (նկարագրիչների) ուսում-
նասիրում:
2. Ծրագրի պրոֆիլի (մասնագիտական ուղղվածության)
նկարագրություն (առաքելություն, նպատակներ, խնդիր-
ներ, առանձնահատկություններ):
3. Ծրագրի սոցիալական կարիքի/պահանջարկվածության
բացահայտում բոլոր շահակիցների մասնակցությամբ
(աշխատաշուկայի ներկայացուցիչներ, ոլորտը կարգա-
վորող մարմիններ, ուսանողներ, դիմորդներ, ծնողներ և
այլն):
4. Ծրագրի ակադեմիական հիմնավորում տվյալ ոլորտի
մասնագիտական և գիտակրթական (այդ թվում՝ միջազ-
գային) հանրության հետ խորհրդատվական գործընթա-
ցի իրականացման միջոցով:

5. Ծրագրի շրջանավարտների ապագա կարիերայի հնարավորությունների բացահայտում, սահմանում և նկարագրություն:
6. Անհրաժեշտ ռեսուրսների բացահայտում (դասախոսական և օժանդակ կազմեր, ենթակառուցվածքներ, ուսումնառության ռեսուրսներ, օժանդակ ծառայություններ և այլն):
7. Ծրագրի կրթական վերջնարդյունքների կազմի որոշում (բուն մասնագիտական և ընդհանրական)՝ որակավորումների եվրոպական, ազգային և ոլորտային շրջանակներին համահունչ:
8. Ծրագրի կառուցվածքի և բովանդակության ձևավորում (ուսումնական պլան, դասընթացներ/մոդուլներ, կրեդիտներ և այլն)՝ ըստ սահմանված կրթական վերջնարդյունքների:
9. Ուսանողի կողմից ծրագրի ակնկալվող կրթական վերջնարդյունքների ձեռքբերումը չափելու (գնահատելու) ձևերի և չափանիշների մշակում:
10. Ակնկալվող կրթական վերջնարդյունքներին համապատասխան՝ դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրություն:
11. Ծրագրի մշակման և իրականացման որակի գնահատման, ապահովման ու շարունակական բարելավման համակարգի ներդրում՝ հետադարձ և առաջանցիկ կապի մեխանիզմների կիրառմամբ:

Սույն ձեռնարկում ավելի մանրամասն կներկայացվեն կրթական ծրագրի մշակման և իրականացման համար անհրաժեշտ վերոնշյալ 2-րդ, 7-րդ, 8-րդ, 9-րդ և 10-րդ քայլերը:

1.2. Կրթական ծրագրի նպատակների սահմանումը



Կրթական ծրագրի նպատակները լայն և ընդհանրական ձևակերպումներ են ուսուցման և դասավանդման մտադրությունների վերաբերյալ: Դրանք սովորաբար ընդհանուր գծերով մատնանշում են, թե ինչ է դասավանդվելու ծրագրի շրջանակներում: Նպատակները սովորաբար կարևորվում և ձևակերպվում են դասախոսի տեսանկյունից՝ մատնանշելով ծրագրի ամենակարևոր դրույթները, ընդհանուր ուղղվածությունը և բնութագրական առանձնահատկությունները:

Բոլոր կրթական ծրագրերը պետք է ունենան հստակ սահմանված նպատակներ՝ ձևակերպված հակիրճ և շարադրված ուսանողին հասկանալի լեզվով: Դրանք ընդհանուր գծերով նկարագրում են այն մասնագիտական որակները, որոնք ձեռք են բերում ծրագիրն ավարտող ուսանողները:

Սովորաբար, 2-4 նպատակների թվարկումը միանգամայն բավարար է կրթական ծրագրի ընդհանուր դրույթները և բնութագրական առանձնահատկությունները ներկայացնելու համար: Ցանկալի է նպատակների ձևակերպումը սկսել հետևյալ ելակետային դրույթով՝ «*Ծրագրի նպատակն է...*», ինչին հաջորդում է կոնկրետ նպատակների թվարկումը՝ առանձին կետերով: Նպատակների ձևակերպումը կարելի է սկսել հետևյալ բայերով՝ *գարգացնել, սպահովել, օժանդակել, փրկելիցսնել, ծանոթացնել, ձևավորել, օժտել, պատրաստել, նախապատրաստել, փրամանդրել, խթանել, աջակցել և այլն:*

Օրինակներ

Ստորև ներկայացվում են բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերի նպատակների սահմանման (ձևակերպման) մի քանի օրինակներ:

Օրինակ 1. «Բիզնես տեղեկատվության կառավարում» բակալավրի ծրագիր

Ծրագրի նպատակները

Ծրագրի նպատակն է ուսանողներին տրամադրել.

1. Տեղեկատվության կառավարման համակարգերի մշակման հիմնախնդիրների վերաբերյալ գիտելիքներ և իմացություն:
2. Տեղեկատվության կառավարման համակարգերի ընտրության, մշակման, կառավարման և օգտագործման համար անհրաժեշտ գործնական մասնագիտական կարողություններ (օր.՝ տվյալների բազաների նախագծում, արհեստական բանականության մեթոդների կիրառում, մոդելավորում և ծրագրավորում):
3. Վերլուծական, գնահատման, մոդելավորման և այլ կարևոր կարողություններ, որոնք կարող են օգտագործվել շրջանավարտի մասնագիտական կարիերայի ընթացքում՝ տեղեկատվության կառավարման համակարգերի մշակման և օգտագործման ժամանակ:

Օրինակ 2. «Հոգեբանություն» բակալավրի ծրագիր

Ծրագրի նպատակները

Ծրագրի նպատակն է.

1. Ուսանողներին տրամադրել հոգեբանության ոլորտի հիմնարար գիտելիք՝ ապագա մասնագիտական գործունեությանը համապատասխան, նրանց ծանոթացնել հոգեբանության տեսական և մեթոդաբանական մոտեցումներին:
2. Խթանել ուսանողների մեջ քննադատական մտածողությունը, տեսությունը և պրակտիկան համադրելու և գնահատելու ունակությունը:
3. Օժտել ուսանողներին արդյունավետ կերպով գրավոր և բանավոր հաղորդակցվելու կարողություններով:
4. Խրախուսել ուսանողների ինքնուրույն աշխատանքը և պրակտիկ փորձի վրա հիմնված ուսումնառությունը:

Օրինակ 3. «Իրավագիտություն և գործարարություն» բակալավրի ծրագիր

Ծրագրի նպատակները

Ծրագրի նպատակն է.

1. Ուսանողներին տրամադրել խոր և համակողմանի գիտելիք ՀՀ և Եվրոպական միության իրավունքի հիմնարար սկզբունքների վերաբերյալ, ներառյալ գործարարության ոլորտին առնչվող իրավական խնդիրները (աշխատանքային օրենսդրություն, բիզնեսի կազմակերպման օրենսդրություն և այլն):
2. Ուսանողներին ծանոթացնել բիզնեսի վարման կարևորագույն դիսցիպլիններին և գործառնություններին:
3. Ուսանողներին ներկայացնել ինչպես կառավարման առաջնորդության, այնպես էլ բիզնեսի և հասարակության էթիկական հիմնախնդիրները:

Օրինակ 4. «Լրագրություն և մեդիա հաղորդակցություն»
բակալավրի ծրագիր

Ծրագրի նպատակները

Ծրագրի նպատակն է.

1. Օժանդակել ուսանողներին՝ զարգացնելու ժամանակակից լրագրության և մեդիա հաղորդակցության ոլորտում իրենց տեսական գիտելիքները և գործնական հմտությունները:
2. Զարգացնել ուսանողների աշխատանքային գործունակությունը՝ իրենց ուսումնաստության ոլորտին և մակարդակին համապատասխան, օգնել նրանց՝ կիրառելու մասնագիտական կարողությունները արդի հասարակության հաղորդակցման տարբեր ոլորտներում:

Օրինակ 5. «Ֆինանսներ և բանկային գործ» մագիստրոսի ծրագիր

Ծրագրի նպատակները

Ծրագրի նպատակն է.

1. Զարգացնել ուսանողների մասնագիտական կարողությունները՝ տրամադրելով խորացված ուսուցում բանկային գործի և ֆինանսների բնագավառում, տալ խոր տեսական հենք՝ տեղական և միջազգային բանկային գործի, ֆինանսների և տնտեսագիտության ժամանակակից հիմնախնդիրները հասկանալու, մեկնաբանելու և վերլուծելու համար:
2. Զարգացնել ուսանողների հմտությունները՝ առաջավոր թվային մեթոդները բանկային գործի և ֆինանսների կառավարման պրակտիկայում կիրառելու համար:


3. Ուսանողներին ունակ դարձնել փորձարկելու և գնահատելու բանկային, ֆինանսական և տնտեսագիտական մոդելները՝ օգտագործելով մի շարք հետազոտական մեթոդներ, տվյալներ և վերլուծության ձևեր:
4. Օժտել ուսանողներին այնպիսի գիտելիքներով և կարողություններով, որոնք անհրաժեշտ են բանկային ներդրումների և կորպորատիվ ֆինանսների բնագավառում, ինչպես նաև ֆինանսական շուկաներում մասնագիտական գործունեություն ծավալելու համար:

Օրինակ 6. «Համակարգչային ցանցեր» մագիստրոսի ծրագրի

Ծրագրի նպատակները

Ծրագրի նպատակն է ուսանողներին տրամադրել.

1. Համակարգչային ցանցերի նախագծման և մշակման հետ կապված իրավական, սոցիալական, էթիկական և մասնագիտական հիմնախնդիրների վերաբերյալ գիտելիք և իմացություն:
2. Ժամանակակից համակարգչային ցանցերի հետազոտական հիմնախնդիրների վերաբերյալ մանրամասն գիտելիք և իմացություն, ինչպես նաև գործնական հմտություններ՝ դրանց նախագծման, մշակման, կիրառության, աշխատանքի, անվտանգության և սպասարկման վերաբերյալ:
3. Ժամանակակից հաղորդակցության ցանցերի և դրանց օժանդակ ծառայությունների նախագծման, մշակման, իրականացման և անվտանգության ապահովման ընթացքում օգտագործվող մոտեցումների, մեթոդների և համակարգերի համեմատական գնահատման ունակություն:

- 
4. Վերլուծական և/կամ հաշվարկային մեթոդների օգնությամբ գնահատել լարային և անլար համակարգչային ցանցերի արտադրողականությունը, ինչպես նաև կառավարել հաղորդակցության ամբողջական նախագծի իրականացումը:
 5. Ինքնուրույն հետազոտություն կատարելու համար պահանջվող կարողություններ, ինչպես նաև գործնական նախագծեր կատարելու օգնությամբ խնդիրներ լուծելու մեթոդներ:

Գործնական առաջադրանքներ

Սահմանել կրթական ծրագրի նպատակները բակալավրի և մագիստրոսի մեկական ծրագրերի համար: Ծրագրի նպատակների սահմանումը սկսել հետևյալ ձևակերպումով՝

«Ծրագրի նպատակն է ...»,

այնուհետև առանձին կետերով թվարկել կոնկրետ նպատակները, սկսելով հետևյալ կամ նմանատիպ այլ բայերով՝ *գարգացնել, ապահովել, օժանդակել, օժտել, տեղեկացնել, ծանոթացնել, ձևավորել, պատրաստել, նախապատրաստել, տրամադրել, խթանել, աջակցել և այլն:*

Առաջադրանք – 1.

Սահմանել _____
մասնագիտության **բակալավրի** կրթական ծրագրի նպատակները:

Ծրագրի նպատակները

Ծրագրի նպատակն է _____

1. _____

2. _____

3. _____

4. _____

Առաջադրանք – 2.

Սահմանել _____
մասնագիտության **մագիստրոսի** կրթական ծրագրի նպատակները:

Ծրագրի նպատակները

Ծրագրի նպատակն է _____

1. _____

2. _____

3. _____

1.3. Դասընթացի նպատակների սահմանումը



Դասընթացի (ուսումնական մոդուլի) նպատակները լայն և ընդհանրական ձևակերպումներ են ուսուցման և դասավանդման մտադրությունների վերաբերյալ: Դրանք սովորաբար ընդհանուր գծերով մատնանշում են, թե ինչ է ուսուցանելու դասախոսը տվյալ դասընթացի շրջանակներում: Նպատակները սովորաբար սահմանվում (ձևակերպվում) են դասախոսի տեսանկյունից՝ ներկայացնելով դասընթացի ամենակարևոր դրույթները և առանձնահատկությունները:

Բոլոր դասընթացները պետք է ունենան հստակ սահմանված նպատակներ՝ ձևակերպված հակիրճ և շարադրված ուսանողին հասկանալի լեզվով: Դրանք ընդհանուր գծերով նկարագրում են այն գիտելիքները և կարողությունները, որոնք ձեռք են բերում դասընթացին մասնակցող ուսանողները:

Սովորաբար, 1-3 նպատակների թվարկումը միանգամայն բավարար է դասընթացի ընդհանուր դրույթները և առանձնահատկությունները ներկայացնելու համար: Ցանկալի է նպատակների ձևակերպումը սկսել հետևյալ ելակետային դրույթով՝ «Դասընթացի նպատակն է...», որին հաջորդում է կոնկրետ նպատակների թվարկումը՝ առանձին կետերով: Նպատակների սահմանումը կարելի է սկսել հետևյալ բայերով՝ *զարգացնել, սպահովել, օժանդակել, տեղեկացնել, ծանոթացնել, ձևավորել, օժտել, պատրաստել, նախապատրաստել, տրամադրել, խթանել, աջակցել և այլն:*

Օրինակներ

Ստորև ներկայացվում են դասընթացի (ուսումնական մոդուլի) նպատակների սահմանման (ձևակերպման) մի շարք օրինակներ:

Օրինակ 1. «Համեմատական քերականություն» դասընթաց.

Դասընթացի նպատակները

Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել հնդեվրոպական լեզվաընտանիքի ցեղակից լեզուների համեմատական ուսումնասիրության և նախալեզվի վերականգնման սկզբունքներին ու մեթոդներին, ցեղակից լեզուների ծագումաբանական ընդհանրություններին և օրինաչափ համապատասխանություններին, վերականգնված հնդեվրոպական նախալեզվի հիմնական առանձնահատկություններին և այլն:

Օրինակ 2. «Հայ գրական լեզվի պատմություն» դասընթաց.

Դասընթացի նպատակները

Դասընթացի նպատակն է ուսանողներին ներկայացնել հայ գրական երեք լեզուների՝ գրաբարի, միջին հայերենի, երկճյուղ աշխարհաբարի՝ արևելահայ և արևմտահայ, զարգացման ընդհանուր ուղղությունը և փոփոխությունների տրամաբանությունը ժամանակակից հետազոտական մեթոդների միջոցով:

Օրինակ 3. «Մերձավոր Արևելքի երկրների պետական կարգը» դասընթաց.

Դասընթացի նպատակները

Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել նորագույն շրջանում Մերձավոր և Միջին Արևելքի երկրների պետական կառավարման համակարգերի առանձնահատկություններին, այդ երկրների սահմանադրություններին, նրանցում տեղ գտած փոփոխություններին:

Օրինակ 4. «Լեզվաբանության հիմունքներ» դասընթաց.

Դասընթացի նպատակները

Դասընթացի նպատակն է ուսանողներին ներկայացնել լեզվի էության, գործառության ու զարգացման հիմնական օրինաչափությունները, աշխարհի լեզուների հնչյունական, բառային, ձևաբանական և շարահյուսական համակարգերի ընդհանուր առանձնահատկությունները, լեզուների դասակարգման հիմնական սկզբունքները, աշխարհի լեզուներն ու նրանց բաշխումն ըստ լեզվաընտանիքների և ըստ կառուցվածքային տիպերի:

Օրինակ 5. «Գերմաներեն լեզու -1» ուսումնական մոդուլ.

Դասընթացի նպատակները

Այս ուսումնական մոդուլի նպատակն է ուսանողին տալ ելակետային գիտելիքներ գերմաներենի հնչյունական, բառային և քերականական համակարգի մասին՝ այդպիսով ստեղծելով անհրաժեշտ հիմք լեզվի ուսումնասիրության հետագա փուլերի համար: Առանձին ուշադրություն է հատկացվում գերմաներենի արտասանական նորմերին, բառակազմական կաղապարներին և շարահյուսական կառույցների ձևավորմանը:

Օրինակ 6. «Եվրոպական քաղաքացիական հասարակություն» դասընթաց.

Դասընթացի նպատակները

Դասընթացի նպատակն է ուսումնասիրել Եվրոպական քաղաքացիական հասարակության տեսական և կիրառական նշանակություն ունեցող հիմնահարցերի համեմատական վերլուծությունները, ինչպես նաև ԵՄ անդամ երկրներում քաղաքացիական հասարակության համակարգի կայացման օրինաչափությունները:

Օրինակ 7. «Միկրոպրոյեկտային գործունեություն» դասընթաց.

Դասընթացի նպատակները

Դասընթացի նպատակն է ուսանողներին հաղորդել խորացված և մաթեմատիկորեն հիմնավորված գիտելիքներ միկրոտնտեսագիտական հասկացությունների և օրինաչափությունների վերաբերյալ, ինչպես նաև սովորեցնել մաթեմատիկական մոդելների և մեթոդների կիրառմամբ վերլուծել սպառողների և ձեռնարկությունների վարքը, հավասարակշռության և օպտիմումի ձևավորման խնդիրները՝ շուկայական տարբեր մոդելների շրջանակներում:

Օրինակ 8. «Ոչ գծային ֆիզիկայի հիմունքներ» դասընթաց.

Դասընթացի նպատակները

Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել ինչպես բնական, այնպես էլ հումանիտար գիտությունների բնագավառներում լայնորեն տարածված ոչ գծայինությունների նկարագրական մեթոդների հետ, ինչպես նաև պատկերացում ձևավորել այնպիսի երևույթների մասին, ինչպիսիք են դետերմինացված քառսը, բիֆուրկացիաները և այլն:

Օրինակ 9. «Էկոլոգիական մենեջմենթ» դասընթաց.

Դասընթացի նպատակները

Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել էկոլոգիական կառավարման տեսական հիմնահարցերին, ձեռնարկություններում էկոլոգիական մենեջմենթի համակարգի մշակման և ներդրման գործընթացներում առկա խնդիրներին, դրանց լուծման մեխանիզմներին, ինչպես նաև այս ոլորտի միջազգային ISO ստանդարտների մշակման և տեղայնացման առանձնահատկություններին:

Գործնական առաջադրանքներ

Սահմանել բակալավրի և մագիստրոսի մեկական կրթական ծրագրերի բաղկացուցիչ դասընթացի (ուսումնական մոդուլի) նպատակները: Դասընթացի նպատակների սահմանումը սկսել հետևյալ ձևակերպումով՝

«Դասընթացի/ուսումնական մոդուլի նպատակն է ...»,

այնուհետև առանձին կետերով թվարկել կոնկրետ նպատակները, օգտագործելով հետևյալ կամ նմանատիպ այլ բայեր՝ *զարգացնել, ապահովել, օժանդակել, օժտել, տեղեկացնել, ծանոթացնել, ձևավորել, պարբերաբար, նախապարբերաբար, տրամադրել, խթանել, աջակցել և այլն:*

Առաջադրանք – 3.

Սահմանել _____
բակալավրի կրթական ծրագրի դասընթացի նպատակները:

Դասընթացի/ուսումնական մոդուլի նպատակները.

Դասընթացի նպատակն է _____

1. _____

2. _____

3. _____

Առաջադրանք – 4.

Սահմանել _____

մագիստրոսի կրթական ծրագրի դասընթացի նպատակները:

Դասընթացի/ուսումնական մոդուլի նպատակները.

Դասընթացի նպատակն է _____

1. _____

2. _____

3. _____

1.4. Դասընթացի կրթական վերջնարդյունքների ձևակերպումը



Գոյություն ունեն դասընթացի կամ այլ ուսումնական մոդուլի մշակման և իրականացման (մատուցման) երկու տարբեր մոտեցումներ, որոնք նկարագրված են ստորև:

1. Առաջինը ավանդական կամ դասախոսակենտրոն մոտեցումն է, որը բնութագրվում է հետևյալ գործոններով.
 - սկսվում է դասընթացի բովանդակության նկարագրությամբ,
 - նկարագրվում է, թե ինչ է ուսուցանելու (ինչ է մատուցելու) դասախոսը դասի ընթացքում,
 - ինչպես են ուսանողները յուրացնելու մատուցված նյութը (բովանդակությունը),
 - դասընթացի նկարագրությունը սահմանափակվում է միայն բովանդակության շարադրումով,
 - հստակ չէ, թե ինչ պետք է գիտենա և կարողանա անել ուսանողը դասընթացի ավարտին:
2. Երկրորդը կոչվում է ուսանողակենտրոն կամ արդյունահեն մոտեցում, որը բնութագրվում է հետևյալ գործոններով.
 - սահմանում է դասընթացի ակնկալվող կրթական վերջնարդյունքները, որոնք կարելի է չափել,

- գործընթացում հատկապես կարևորվում է, թե ինչ են գիտենալու և կարողանալու անել ուսանողները դասընթացի ուսումնասիրման արդյունքում,
- սահմանում է, թե ինչ է անելու ուսանողը (ինչպես է սովորելու) ակնկալվող վերջնարդյունքները ձեռք բերելու համար,
- դասընթացի կրթական վերջնարդյունքները դրսևորելի (ցուցաբերելի) են, ինչը թույլ է տալիս հիմնավորված գնահատում կատարել:

Դասախոսակենտրոն ուսուցում



Շեշտադրվում է դասավանդումը, այսինքն, ինչ է անում դասախոսը դասի ընթացքում: Ուսանողի գիտելիքները նկարագրող բայեր՝ *գիտենալ, հասկանալ, ծանոթ լինել, տիրապետել* և այլն:

Ուսանողակենտրոն ուսուցում



Շեշտադրվում են վերջնարդյունքները, այսինքն, թե ինչ ենք ակնկալում ուսանողից դասընթացի ավարտին: Ուսանողի գիտելիքները նկարագրող բայեր՝ *որոշել, թվարկել, վերարտադրել, վերլուծել, հաշվարկել, նախագծել* և այլն:

Այստեղ կարևորագույն հարցը ոչ թե այն է, թե ինչ պետք է ուսուցանվի դասընթացը հաջողությամբ ավարտելու համար, այլ

այն, թե ինչ է գիտենալու և կարողանալու անել ուսանողը դասընթացի ավարտին, այսինքն՝ ինչ կրթական վերջնարդյունքներ է ձեռք բերելու:

Իսկ ինչ է կրթական վերջնարդյունքը: Կան բազմաթիվ սահմանումներ, որոնցից մի քանիսը ներկայացված են ստորև.

- *Կրթական վերջնարդյունքները հստակ սահմանումներ են, թե ինչ պետք է իմանա և կարողանա անել ուսանողը ուսումնառության արդյունքում:*
- *Կրթական վերջնարդյունքները սահմանում են, թե ինչ է սկսկալվում, որ ուսանողը կկարողանա անել ուսումնառության արդյունքում:*
- *Կրթական վերջնարդյունքները հստակ ձևակերպումներ են, թե ինչ ենք մենք ուզում, որ մեր ուսանողներն իմանան, հասկանան կամ կարողանան անել դասընթացի ավարտին:*
- *Կրթական վերջնարդյունքները ձևակերպումներ են, որոնք սահմանում են, թե ինչ կհմանան կամ կկարողանան անել սովորողներն ուսումնառության արդյունքում: Դրանք սովորաբար արտահայտվում են որպես գիտելիք, կարողություններ կամ հմտություններ:*
- *Կրթական վերջնարդյունքները հստակ նկարագրություններ են, թե ինչ պետք է իմանա, հասկանա և ունակ լինի անել ուսանողն ուսումնառության արդյունքում:*
- *Կրթական վերջնարդյունքը ձևակերպում է, թե ինչ է սկսկալվում, որ սովորողը գիտենա, հասկանա և կարողանա անել ուսումնառության շրջանի ավարտին, և ինչպես է այդ արդյունքը դրսևորվելու:*

Ներկայացված սահմանումներում կարևորվում են կրթական վերջնարդյունքների հետևյալ բնութագրերը.

1. Կրթական վերջնարդյունքներն առավել կարևորում են ուսանողի կրթական ձեռքբերումները, քան դասախոսի դասավանդումը:
2. Կրթական վերջնարդյունքները շեշտադրում են, թե՛ հատկապես ինչ կարող է դրսևորել կամ ցուցաբերել ուսանողն ուսումնառության արդյունքում:

Ներկայումս կրթական վերջնարդյունքների ամենատարածված և եվրոպական շրջանակներում պաշտոնապես ընդունված ձևակերպումը հետևյալն է.

Դասընթացի կամ ուսումնական ծրագրի ավարտին սովորողից ակնկալվող գիտելիքի, կարողությունների և հմտությունների սահմանված ձևաչափի նկարագրություն, որը ցույց է տալիս, թե ուսումնառության ավարտին հատկապես ինչ պետք է գիտենա, հասկանա և կարողանա անել սովորողը:

Կրթական վերջնարդյունքները կարող են վերաբերել ինչպես առանձին վերցրած դասընթացին (ուսումնական մոդուլին), այնպես էլ ամբողջ ծրագրին:


Կրթական վերջնարդյունքների վերաբերյալ սահմանումից տեսնում ենք, որ առավել կարևորվում է սովորողը, քան դասախոսը, ասինքն՝ շեշտադրվում է սովորողի գիտելիքը և ինչ-որ բան անելու կարողությունը:

Դասընթացի (ուսումնական մոդուլի) կրթական վերջնարդյունքները ուսանողին հնարավորություն են տալիս տեղեկանալու, թե նա ինչ պետք է իմանա, հասկանա և կարողանա անել դասընթացի ավարտին և, միևնույն ժամանակ, մատնանշում են,

թե հատկապես ինչպես է նա գնահատվելու: Կրթական վերջնարդյունքները նկարագրում են, թե ինչ պետք է կարողանա անել ուսանողը դասընթացի հաջող ավարտին՝ իր գիտելիքը և իմացությունը, կարողությունները և հմտությունները դրսևորելու համար: Դասընթացի կրթական վերջնարդյունքները ձևակերպվում են այնպես, որ պարզորոշ ցույց տան, թե ուսանողը հատկապես ինչպե՞ս է դրսևորելու իր իմանալը, հասկանալը և կարողանալը: Դրանք շարադրվում են այնպես, որ հասկանալի լինեն ուսանողներին, իսկ ուսանողների կողմից դրանց ձեռքբերումը հնարավոր լինի արժանահավատորեն գնահատել: Կրթական վերջնարդյունքները պետք է լինեն իրատեսական և չափելի:

Կրթական վերջնարդյունքները պարզապես դասախոսի ցանկությունների թվարկում չեն: Դասընթացի (ուսումնական մոդուլի) կրթական վերջնարդյունքները միտված են ուսումնառության, այլ ոչ թե դասավանդման ընթացքին, ուստի դրանք սահմանում են ոչ թե այն, թե ինչ կարող է մատուցել դասախոսը, այլ այն, թե ինչ պետք է սովորի ուսանողը: Այդ վերջնարդյունքները պլանավորելիս և ձևակերպելիս անհրաժեշտ է հաշվի առնել, որ դրանք պետք է լինեն գնահատելի: Հարկավոր է ուշադրություն դարձնել նաև այն հանգամանքին, թե դասընթացի (ուսումնական մոդուլի) կրթական վերջնարդյունքներն ինչպե՞ս են ինտեգրված ամբողջական ծրագրի վերջնարդյունքներին:

Այսպիսով, պարզ է դառնում, որ դասընթացի (կամ կրթական ծրագրի) վերջնարդյունքները սկզբունքորեն տարբերվում են նպատակներից: Դասընթացի նպատակը լայն և ընդհանրական ձևակերպում է դասավանդման մտադրությունների մասին և ցույց է տալիս, թե ինչ է պատրաստվում սովորեցնել դասախոսը դասընթացի (կամ ծրագրի) շրջանակներում: Դրանք սովորաբար ձևակերպվում են դասախոսի տեսանկյունից: Իսկ կրթական վերջնարդյունքները հստակ կերպով սահմանում են, թե ինչ է սովորելու ուսանողը դասընթացի (կամ ծրագրի) շրջանակներում և շարադրվում են ուսանողի տեսանկյունից:



Կրթական վերջնարդյունքները տարբերվում են նաև կոմպետենցիաներից: Կոմպետենցիան սովորողի գիտելիքի, կարողությունների և հմտությունների կամայական դրսևորումն է, իսկ կրթական վերջնարդյունքն ակնկալվող կոմպետենցիայի սահմանված ձևաչափի նկարագրությունն է, որը հնարավորություն է տալիս չափել դրանց ձեռքբերման/դրսևորման մակարդակը: Կոմպետենցիաները գրվում են շատ ընդհանրական ձևով.

Օրինակ.

- *օտար լեզվով հաղորդակցվելու հնարություն,*
- *որոշումներ կայացնելու ունակություն,*
- *նախագծեր մշակելու և կառավարելու կարողություն,*
- *տարբեր աղբյուրներից տեղեկատվություն գտնելու և վերլուծելու ունակություն*

և այլն:

Կրթական վերջնարդյունքների օգտագործումը ի տարբերություն բովանդակային մոտեցման՝ ունի մի շարք առավելություններ.

- հստակ պատկերացում է տալիս ուսանողների ակնկալվող կրթական ձեռքբերումների և դրանց դրսևորման ձևերի մասին,
- հնարավորություն է տալիս չափելու ուսումնառության արդյունքների ձեռքբերման որակը և մակարդակը,
- որպես ընդհանուր «արդարաժույթ» ավելի հասկանալի և ընկալելի է թե՛ ազգային, և թե՛ միջազգային (հատկապես եվրոպական) մակարդակներում:


Կրթական վերջնարդյունքների հետ անմիջականորեն կապված են նաև դասընթացի կառուցվածքը և բովանդակությունը, դասավանդման ռազմավարությունը և մեթոդները, ուսումնառության

կազմակերպման և գնահատման ձևերն ու չափանիշները, ուսումնական միջավայրը և ռեսուրսները և այլն: Կրթական վերջնարդյունքները հիմք են ստեղծում նաև դասընթացի (կամ կրթական ծրագրի) գնահատման համար:

Իսկ ինչպես գրել կրթական վերջնարդյունքներ և ինչպես ձևակերպել (շարադրել) դրանք: Այս հարցին պատասխանելու համար նախ անդրադառնանք իմացության ձևերի դասակարգման Բլումի տաքսոնոմիային:

Իմացության ձևերի Բլումի տաքսոնոմիան

Բենիամին Բլում (1913-1999)



Ուսումնառության գործընթացում իմացության դրսևորումներն ըստ բարդության մակարդակների առաջին անգամ դասակարգել է ամերիկացի գիտնական Բենիամին Բլումը՝ 1956թ-ին: Իմացության ձևերի այդ հիերարխիկ դասակարգումն այնուհետև կոչվել է Բլումի տաքսոնոմիա (*տաքսոնոմիա* նշանակում է դասակարգում), որն ունի 6 մակարդակ ըստ աճող բարդության՝ սկսած փաստերի պարզ հիշողությունից և վերարտադրությունից ստորին մակարդակում, մինչև վերլուծություն և

գնահատում՝ բարձրագույնում (տե՛ս աղյուսակ 1): Այսօր Բլումի տաքսոնոմիան նաև կրթական վերջնարդյունքների դասակարգման և ստորադասման ամենարձեղունված ձևերից մեկն է, որտեղ յուրաքանչյուր մակարդակի կրթական վերջնարդյունքի նկարագրման համար առաջարկվում է բայերի որոշակի ցանկ: Այն մի օգտակար գործիք է, որը կրթական վերջնարդյունքների ձևակերպման համար տրամադրում է պատրաստի կառուցվածքներ և համապատասխան բայերի ցանկ: Բլումը բացահայտեց, որ *իմանալը* կամ *գիտենալը* ներառում են 6 հաջորդական մակարդակ (նկար 3)՝ դասավորված որոշակի հիերարխիայով: Նա դիտարկում էր *իմանալը* որպես մի գործընթաց, որտեղ նախորդ արդյունքները հիմք ենք հանդիսանում իմացության ավելի բարդ մակարդակներ զարգացնելու համար:

Բլումի տաքսոնոմիան ստեղծված է *իմացական* ոլորտի համար («իմանալ» կամ «մտածել») և չի տարածվում այսպես կոչված *զգայական* և *պսիխոմոտորային* ոլորտների վրա:

Քանի որ տաքսոնոմիան առաջարկում է որոշակի բայերի ցանկ, որոնք բնութագրում են իմացական ոլորտի տարբեր մակարդակներում իմացություն դրսևորելու կամ ցուցաբերելու անձի ունակությունը, ուստի այդ բայերի ցանկը կրթական վերջնարդյունքներ ձևակերպելու և գրելու բանալի կարող է հանդիսանալ:



Նկար 3. Իմացության դրսևորման ձևերի Բլումի տաքսոնոմիան

Աղյուսակ 1. Կրթական վերջնարդյունքների դասակարգման ու ստորադասման Բլումի տաքսոնոմիան և վերջնարդյունքների նկարագրման համար առաջարկվող բայերը

	Մակարդակ	Իմացության ձևերը	Համապատասխան բայերը (ցանկն ամբողջական չէ)
Գիտելիք և իմացություն	1	Գիտելիք – որոշակի փաստերի և տվյալների հիշողություն և վերարտադրություն	<i>Արտահայտել, պատմել, նկարագրել, ընտրել, ներկայացնել, վերարտադրել, ուրվագծել, թվարկել, անվանել, հիշել, վերհիշել, մտապահել, ցույց տալ, գրանցել և այլն</i>
	2	Իմացություն – փաստերը և տվյալները հասկանալու և մեկնաբանելու ունակություն	<i>Պարզաբանել, մեկնաբանել, որոշել, սահմանել, ձևակերպել, բացատրել, հակադրել, քննարկել, ճանաչել, հիմնավորել, ընտրել, մատչանշել, լուսաբանել, դասակարգել և այլն</i>
Կարողություններ	3	Կիրառություն – առաջադրանքի կամ խնդրի կատարման համատեքստում գիտելիքի և իմացության կիրարկում	<i>Կիրառել, օգտագործել, կիրարկել, կատարել, գործածել, լուծել, մշակել, ընտրել, գտնել, կառուցել, հաշվարկել, գործնականում իրականացնել և այլն</i>
	4	Վերլուծություն – տեղեկատվության կամ փաստերի համեմատում, բաղկացուցիչ մասերի կամ իմաստների բաժանում՝ դրանց իմաստը, նշանակությունը և փոխհարաբերությունը հասկանալու նպատակով	<i>Համեմատել, համադրել, հակադրել, բաժանել, տրոհել, տարանջատել, տարբերակել, մասնատել, մասերի բաժանել, տարրալուծել, ուսումնասիրել, քննել, զննել, քննարկել, վերլուծել, մեկնաբանել, հարաբերել, կապ հաստատել և այլն</i>

	Մակար-դակ	Իմացության ձևերը	Համապատասխան բայերը (ցանկն ամբողջական չէ)
Կարողություններ	5	Մինթեզ – տեղեկատվության կամ փաստերի նորովի համակցում՝ ցանկալի հատկանիշներով նոր ամբողջություն ստանալու նպատակով	<i>Նախագծել, մշակել, սրեղծել, կազմել, սրանալ, դուրս բերել, սինթեզել, կառուցել, միավորել, պատրաստել, բացահայտել, որոշել, հայտնագործել, վերափոխել, համակցել, միավորել, միացնել, ի մի բերել, ամփոփել, համակարգել, վերաձևակերպել, ընդհանրացնել և այլն</i>
	6	Գնահատում – առկա տեղեկատվության կամ փաստերի հիման վրա դատողություններ և եզրահանգումներ անելը և արդյունքների արժևորումը	<i>Արժևորել, գնահատել, հարաբերել, համեմատել, համադրել, հակադրել, դասակարգել, տարբերակել, դասել, չափել, հաշվել, ընտրել, քննադատել, որոշել, եզրահանգել, հեղուկություններ անել, ենթադրել, եզրակացնել և այլն:</i>

Այժմ դիտարկենք Բլումի տաքսոնոմիայի յուրաքանչյուր մակարդակն առանձին - առանձին:



1. Գիտելիք – որոշակի փաստերի և տվյալների հիշողություն և վերարտադրություն: Ուսման, աշխատանքի կամ անձնական փորձառության ընթացքում տեղեկատվության յուրացման արդյունք, որը փաստերի, տվյալների, սկզբունքների և տեսությունների ամբողջություն է: Բնութագրվում է ըստ խորության, ընդգրկույթի, բարդության և տեսակի: Գիտելիքի դրսևորման ձևերից են հիշելը, մտապահելը, վերարտադրելը և այլն:



- Սովորաբար նկարագրվում է գործողության/ակտիվ բայերի գործածությամբ, ինչպես օրինակ.
- ✓ արտահայտել
 - ✓ պատմել
 - ✓ նկարագրել
 - ✓ ընտրել
 - ✓ ներկայացնել
 - ✓ վերարտադրել
 - ✓ ուրվագծել
 - ✓ թվարկել
 - ✓ անվանել
 - ✓ հիշել
 - ✓ վերհիշել
 - ✓ մտապահել
 - ✓ ցույց տալ
 - ✓ գրանցել և այլն:

Գիտելիքի դրսևորման օրինակներ.



- Թվարկել ռեֆլեքսների տեսակները
- Վերարտադրել դասական մեխանիկայի օրենքները ...
- Նկարագրել թոքախտի ախտանիշները
- Պատմել հնագույն կելտերի ծագման արանությունը
- Ներկայացնել ինժեներական նախագծման փուլերը
- Կրկնել Բուլյան հանրահաշվի օրենքները և արսիոմաները ...



2. Իմացություն – առկա գիտելիքը, փաստերը, տվյալները կամ ուսումնասիրած տեղեկատվության իմաստը հասկանալը և մեկնաբանելը: Բնութագրվում է ըստ խորության, ընդգրկույթի և բարդության: Գիտելիքի դրսևորման ձևերից են պարզաբանելը, բացատրելը, մեկնաբանելը և այլն:



- Սովորաբար նկարագրվում է գործողության/ակտիվ բայերի գործածությամբ, ինչպես օրինակ.
- ✓ պարզաբանել
 - ✓ մեկնաբանել
 - ✓ որոշել
 - ✓ սահմանել
 - ✓ ձևակերպել
 - ✓ բացատրել
 - ✓ հակադրել
 - ✓ քննարկել
 - ✓ ճանաչել
 - ✓ հիմնավորել
 - ✓ ընտրել
 - ✓ մատնանշել
 - ✓ լուսաբանել
 - ✓ դասակարգել և այլն:

Իմացության դրսևորման օրինակներ.



- Տարբերակել քաղաքացիական և քրեական օրենքները ...
- Սահմանել էլեկտրոնային կոմերցիայի նպատակները և մասնակիցներին....
- Քննարկել մատերիայի ատոմային և ալիքային կառուցվածքները ...
- Ձևափոխել թվերի համակարգը տասնորդականից երկուականի և հակառակը
- Բացատրել 1-ին համաշխարհային պատերազմի սոցիալական, տնտեսական և քաղաքական ազդեցությունը ...
- Դասակարգել ռեակցիաները որպես իզոթերմիկ և էնդոթերմիկ....
- Մեկնաբանել հունական և հռոմեական մշակույթի ազդեցությունը արևմտյան քաղաքակրթության վրա



ԳԻՏԵԼԻՔ




ԻՄԱՑՈՒԹՅՈՒՆ

Գիտելիքը կարևոր է: Բայց գիտելիքը ոչինչ է առանց իմացության: Բոլորս գիտենք, որ նույնիսկ ամենամեղմ գեփյուղը կարող է բավականությամբ լուսավորել մանկան դեմքը: Բայց երբ դուք բավականաչափ իմացություն ունեք քամու վերաբերյալ, որպեսզի սանձեք նրա ողջ հզորությունը, դուք կարող եք լուսավորել քաղաքներ: **Դա իմացությունն է:**

(THE WALL STREET JOURNAL)



3. Կիրառություն – առաջադրանքի կամ խնդրի կատարման համատեքստում գիտելիքի և իմացության կիրարկում: Կարող է դիտարկվել որպես գիտելիքը և իմացությունը որոշակի պայմաններում կամ նոր իրադրություններում կիրարկելու (գործածելու) և խնդիրներ լուծելու ունակություն: Բնութագրվում է ըստ հմտության և բարդության: Կիրառության դրսևորման ձևերից են օգտագործելը, կատարելը, գործածելը և այլն:



➤ Սովորաբար նկարագրվում է գործողության/ակտիվ բայերի գործածությամբ, ինչպես օրինակ.

- ✓ կիրառել
- ✓ օգտագործել
- ✓ կիրարկել
- ✓ կատարել
- ✓ գործածել
- ✓ լուծել
- ✓ մշակել
- ✓ ընտրել
- ✓ գտնել
- ✓ կառուցել
- ✓ հաշվարկել
- ✓ գործնականում իրականացնել և այլն:


Կիրառության օրինակներ.



- Կիրառել գենետիկայի և գենոմիկայի մեթոդները կենսաբանության և բժշկության ոլորտներում
- Օգտագործել կլինիկական կենսաքիմիայի ժամանակակից մեթոդները և աշխատել համապատասխան սարքավորումների հետ
- Թարգմանել ժամանակակից արարելի կարճ տեքստեր ...
- Կատարել տարբեր կարգի քերականական կառուցվածքների երկկողմանի փոխակերպումներ ...
- Գործածել հաղորդակցման առանձին ոլորտներին բնորոշ բառապաշարը, բառերերը և քերականական կազմությունները
- Հաշվարկել մեքենամասերի հոգնածային ամրությունը՝ վերջավոր էլեմենտների մեթոդի օգնությամբ ...
- Գործադրել լեզվական գիտելիքները և անգլերեն բանավոր և գրավոր խոսքի հմտությունները հաղորդակցման տարբեր ոլորտներում ...



4. Վերլուծություն – տեղեկատվության, փաստերի կամ նյութի համեմատում, բաղկացուցիչ մասերի կամ իմաստային բաղադրիչների տրոհում՝ դրանց նշանակությունը, իմաստը, և/կամ կառուցվածքային կապերն ու փոխհարաբերությունը վեր հանելու և հասկանալու նպատակով: Բնութագրվում է ըստ խորության և ընդգրկույթի: Վերլուծության դրսևորման ձևերից են համեմատելը, ուսումնասիրելը, զննելը և այլն:



➤ Սովորաբար նկարագրվում է գործողության/ակտիվ բայերի գործածությամբ, ինչպես օրինակ.

- ✓ համեմատել
- ✓ համադրել
- ✓ հակադրել
- ✓ բաժանել
- ✓ տրոհել
- ✓ տարանջատել
- ✓ տարբերակել
- ✓ մասնատել
- ✓ մասերի բաժանել
- ✓ տարրալուծել
- ✓ ուսումնասիրել
- ✓ քննել
- ✓ զննել
- ✓ քննարկել
- ✓ վերլուծել
- ✓ մեկնաբանել
- ✓ հարաբերել
- ✓ կապ հաստատել և այլն:

Վերլուծության օրինակներ.



- Վերլուծել և համադրել էլեկտրոնային բիզնեսի տարբեր մոդելները ...
- Քննարկել էներգիայի փոխակերպման պրոցեսների տնտեսական և բնապահպանական ազդեցությունները ...
- Բացահայտել և հաշվարկել սխալանքի աղբյուրները չափումների գործընթացում ...
- Դասակարգել տարբեր ժանրերի և տարբեր ժամանակաշրջանների տեքստերի լայն շարքեր ...
- Վերլուծել և մեկնաբանել գերմանախոս երկրների քաղաքական կառուցվածքն ու տնտեսության բնորոշ գծերը ...
- Հետազոտել կառավարման հանգուցային խնդիրները կոնկրետ արտադրության կամ ընկերության դեպքում ...



5. Սինթեզ (համադրություն)

– տեղեկատվության, փաստերի, նյութերի առանձին տարրերի նորովի համակցում (միավորում)՝ ցանկալի հատկանիշներով նոր ամբողջություն ստանալու կամ նորը ստեղծելու նպատակով: Բնութագրվում է ըստ բարդության և տեսակի: Սինթեզի դրսևորման ձևերից են ստանալը, մշակելը, ստեղծելը և այլն:



➤ Սովորաբար նկարագրվում է գործողության/ակտիվ բայերի գործածությամբ, ինչպես օրինակ.

- ✓ նախագծել
- ✓ մշակել
- ✓ ստեղծել
- ✓ կազմել
- ✓ ստանալ
- ✓ դուրս բերել
- ✓ սինթեզել
- ✓ կառուցել
- ✓ միավորել
- ✓ պատրաստել
- ✓ բացահայտել
- ✓ որոշել
- ✓ հայտնագործել
- ✓ վերափոխել
- ✓ համակցել
- ✓ միավորել
- ✓ միացնել
- ✓ ի մի բերել
- ✓ ամփոփել
- ✓ համակարգել
- ✓ վերաձևակերպել
- ✓ ընդհանրացնել և այլն:

Մինթեզի օրինակներ.




- Առաջարկել լուծումներ բարդ էներգետիկ համակարգերի կառավարման համար ...
- Մշակել ուսումնառության և դասավանդման նոր մոտեցումներ, որոնք արդյունավետ են տվյալ միջավայրում
- Ստանալ միջավայրի աղտոտիչների կենսաքայքայման և կենսաբանական վերականգնման նոր եղանակներ և կատարելագործել գոյություն ունեցողները ...
- Կառուցել արդյունավետ ալգորիթմներ կամ տվյալների բազաներ
- Ստեղծել ինտերակտիվ կայքէջեր և ցանցային կիրառություններ
- Մինթեզել նախապես տրված հատկություններով օրգանական միացություններ ...



6. Գնահատում (արժևորում)

- առկա տեղեկատվության կամ փաստերի հիման վրա դատողություններ և եզրահանգումներ անելը և արդյունքները արժևորելը: Բնութագրվում է ըստ ընդգրկույթի և տեսակի: Գնահատման դրսևորման ձևերից են արժևորելը, համեմատելը, չափելը և այլն:



➤ Սովորաբար նկարագրվում է գործողության/ակտիվ բայերի գործածությամբ, ինչպես օրինակ.

- ✓ արժևորել
- ✓ գնահատել
- ✓ հարաբերել
- ✓ համեմատել
- ✓ համադրել
- ✓ հակադրել
- ✓ դասակարգել
- ✓ տարբերակել
- ✓ դատել
- ✓ չափել
- ✓ հաշվել
- ✓ ընտրել
- ✓ քննադատել
- ✓ որոշել
- ✓ եզրահանգել
- ✓ հետևություններ անել
- ✓ ենթադրել
- ✓ եզրակացնել
- ✓ եզրահանգել և այլն:

Գնահատման օրինակներ.



- Համադրել դեղերի արդյունավետությունը, գնահատել դրանց կողմնակի ազդեցությունները և բացասական դրսևորումները ...
- Համեմատել մարքեթինգային ռազմավարությունները էլեկտրոնային բիզնեսի տարբեր մոդելների համար ...
- Արժևորել սպորտի և ֆիզդաստիարակության դերակատարությունը՝ երիտասարդ սերնդի առողջության ամրապնդման գործում ...
- Չափել գլոբալ տաքացման ազդեցությունը բնության հավասարակշռության վրա ...
- Գնահատել ԵՄ մշակութային ինտեգրմանը միտված ռազմավարությունները և նախագծերը
- Ի մի բերել Մ. Ֆարադեյի հիմնական ներդրումը էլեկտրամագնիսական ինդուկցիայի բնագավառում ...

Կրթական վերջնարդյունքների հիմնական բնութագրերը



Կրթական վերջնարդյունքները ձևակերպելիս և գրելիս պետք է պահպանել որոշ կանոններ, որոնք անհրաժեշտ են կրթական վերջնարդյունքները համընթեռնելի, հասկանալի և չափելի դարձնելու համար: Դրանք ներկայացված են ստորև.

1. Օգտագործել **ակտիվ (գործողության) բայ**, որը համաձայն Բլումի տաքսոնոմիայի՝ հստակ մատնանշում է կրթական վերջնարդյունքի տեսակը՝ գիտելիք և իմացություն, դրանց կիրառությունը, կարողություններ (վերլուծելու, գնահատելու, սինթեզելու), տարբեր հմտություններ և այլն:
2. Տալ **լրացումը**, որը մատնանշում է տվյալ կրթական վերջնարդյունքի թեման կամ առարկան: Վերջինս կարող է լինել ինչպես շատ կոնկրետ, այնպես էլ ընդհանուր, վերաբերել գիտելիքի նեղ կամ ընդհանուր բնագավառի:
3. Նշել կրթական վերջնարդյունքի ձեռքբերման ակնկալվող **մակարդակն** ըստ բարդության աստիճանի, **չափը** կամ **ծավալը**՝ ըստ ընդգրկույթի և այլն:
4. Ներկայացնել այն **համատեքստը** կամ տիրույթը, որում տրված է լրացումը (թեման):

Ներկայացնենք պատշաճ ձևակերպված կրթական վերջնարդյունքների մի քանի օրինակներ Բլումի տաքսոնոմիայի յուրաքանչյուր մակարդակի համար:

Օրինակ-1. Գիտելիք

Դասընթացի հաջող ավարտին ուսանողն ունակ կլինի՝

«Ընդհանուր գծերով վերարտադրելու հայկական մամուլից վերցված քաղաքական նյութերի բովանդակությունը»:

Այս կրթական վերջնարդյունքի հիմնական բնութագրերը ներկայացված են հետևյալ աղյուսակում.

Ակտիվ/գործողության բայ	Լրացում (թեմա/ առարկա)	Մակարդակ/ չափ	Համատեքստ/ տիրույթ
Վերարտադրել	քաղաքական նյութերի բովանդակությունը	ընդհանուր գծերով	հայկական մամուլից վերցված

Օրինակ-2. Իմացություն

Դասընթացի հաջող ավարտին ուսանողն ունակ կլինի՝

«Համակարգված կերպով նկարագրելու (քացադրելու) մարդու օրգանիզմի առանձին ֆիզիոլոգիական ֆունկցիաները և դրանց կարգավորման մեխանիզմները»:

Այս կրթական վերջնարդյունքի հիմնական բնութագրերը ներկայացված են հետևյալ աղյուսակում.

Ակտիվ/գործողության բայ	Լրացում (թեմա/ առարկա)	Մակարդակ/ չափ	Համատեքստ/ տիրույթ
Նկարագրել	առանձին ֆիզիոլոգիական ֆունկցիաները և դրանց կարգավորման մեխանիզմները	համակարգված կերպով	մարդու օրգանիզմի

Օրինակ-3. Կիրառություն

Դասընթացի հաջող ավարտին ուսանողն ունակ կլինի՝

«Ճշգրտորեն գործածելու հաղորդակցման առանձին ոլորտներին բնորոշ բառապաշարը, բառեզրերը և քերականական կազմությունները»:

Այս կրթական վերջնարդյունքի հիմնական բնութագրերը ներկայացված են հետևյալ աղյուսակում.

Ակտիվ/գործողության բայ	Լրացում (թեմա/առարկա)	Մակարդակ/չափ	Համատեքստ/տիրույթ
Գործածել	բառապաշարը, բառեզրերը և քերականական կազմությունները	ճշգրտորեն	հաղորդակցման առանձին ոլորտներին բնորոշ

Օրինակ-4. Վերլուծություն

Դասընթացի հաջող ավարտին ուսանողն ունակ կլինի՝

«Համակողմանիորեն վերլուծելու կառավարման հանգուցային խնդիրները կոնկրետ արտադրության կամ ընկերության դեպքում»:

Այս կրթական վերջնարդյունքի հիմնական բնութագրերը ներկայացված են հետևյալ աղյուսակում.

Ակտիվ/գործողության բայ	Լրացում (թեմա/առարկա)	Մակարդակ/չափ	Համատեքստ/տիրույթ
Վերլուծել	կառավարման հանգուցային խնդիրները	համակողմանիորեն	կոնկրետ արտադրության կամ ընկերության դեպքում

Օրինակ-5. Մինթեզ

Դասընթացի հաջող ավարտին ուսանողն ունակ կլինի՝

«Նախագծելու սահմանված բնութագրերով թվային կառավարմամբ հասարոցներ՝ թեթև արդյունաբերության ոլորտի ձեռնարկությունների համար»:

Այս կրթական վերջնարդյունքի հիմնական բնութագրերը ներկայացված են հետևյալ աղյուսակում.

Ակտիվ/գործողության բայ	Լրացում (թեմա/առարկա)	Մակարդակ/չափ	Համատեքստ/տիրույթ
Նախագծել	թվային կառավարմամբ հասարոցներ	սահմանված բնութագրերով	թեթև արդյունաբերության ոլորտի ձեռնարկությունների համար

Օրինակ-6. Գնահատում

Դասընթացի հաջող ավարտին ուսանողն ունակ կլինի՝

«Համեմատելու և քննադատորեն գնահատելու Հայաստանի ձեռնարկությունների առկա ռազմավարական հնարավորությունները»:

Այս կրթական վերջնարդյունքի հիմնական բնութագրերը ներկայացված են հետևյալ աղյուսակում.

Ակտիվ/գործողության բայ	Լրացում (թեմա/առարկա)	Մակարդակ/չափ	Համատեքստ/տիրույթ
Համեմատել, գնահատել	ռազմավարական հնարավորությունները	քննադատորեն	Հայաստանի ձեռնարկությունների

Ինչպես ձևակերպել դասընթացի կրթական վերջնարդյունքները



Սովորաբար, դասընթացի (ուսումնական մոդուլի) կրթական վերջնարդյունքները ձևակերպվում են ըստ հետևյալ դասակարգումների (խմբերի)։

- մասնագիտական գիտելիք և իմացություն (խումբ Ա),
- գործնական մասնագիտական կարողություններ և հմտություններ (խումբ Բ),
- ընդհանրական (փոխանցելի) կարողություններ և հմտություններ (խումբ Գ) :

Դասընթացի (ուսումնական մոդուլի) կրթական վերջնարդյունքների նկարագրությունը սկսվում է հետևյալ ձևակերպմամբ՝ «*Դասընթացի/ուսումնական մոդուլի հաջող ավարտին ուսանողն ունակ կլինի ...*»։ Այս ձևակերպմանը հաջորդում է ակտիվ, գործողություն ցույց տվող բայը, որը նկարագրում է, թե ուսանողները հատկապես ինչպես են դրսևորելու (ցուցաբերելու) իրենց սովորածը։ Հարկավոր է խուսափել *իմանալ, գիտենալ, սովորել, տեղյակ կամ ծանոթ լինել, հասկանալ, ընկալել, ըմբռնել, տիրապետել* և նման այլ բայերից, քանի որ դրանց դրսևորման և գնահատման եղանակներն անորոշ են։ Այնինչ, թե՛ ուսանողի, և թե՛ դասախոսի համար պետք է հստակ լինի՝ արդյո՞ք այդ վերջնարդյունքները ձեռք են բերվել (և ինչ չափով), թե՛ ոչ։ Փոխարենը, հարկավոր է նկարագրել, թե ուսանողները հատկապես ինչպես պետք է դրսևորեն ձեռք բերած գիտելիքը և իմացությունը, կարողությունները և հմտությունները։ Կրթական վերջնարդյունքները ձևակերպելիս վերոնշյալ անորոշ բայերի գործածումը հնարավորություն չի տալիս հստակ պատկերացում կազմելու ձեռք բերած կրթական վերջնար-

դյունքների դրսևորման եղանակների մասին: Դրա համար անհրաժեշտ է, որ վերջնարդյունքների ձեռքբերման (ստացման) հանգամանքը լինի ակնառու՝ ուղղակի կապ հաստատելով համապատասխան գնահատման չափանիշի հետ: Հետևաբար, կարևոր է, որ կրթական վերջնարդյունքները ձևակերպվեն այնպես, որ ապահովեն դրանց ձեռքբերման ակնելությունն առավելագույն աստիճան:

Այսպիսով, կրթական վերջնարդյունքները ձևակերպվում են այնպես, որ ուսանողի կողմից գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձեռքբերումը հնարավոր լինի դրսևորել, դիտարկել, չափել և գնահատել:

Իմացության տարբեր ոլորտները (մակարդակները) նկարագրելու համար կարող են օգտագործվել տարբեր բայեր: Օրինակ, եթե ներածական որևէ դասընթացի նպատակը նյութի հենքային իմացության ձեռքբերումն է (գիտելիք և/կամ իմացություն), ապա կրթական վերջնարդյունքները պետք է ներկայացվեն հետևյալ բայերով՝ *վերարտադրել, քննորոշել, վերհիշել, թվարկել, նկարագրել, բացատրել* կամ *քննարկել*: Ավելի բարդ և մասնագիտացված դասընթացի համար, որի նպատակը նյութի համակողմանի իմացության հիման վրա որոշակի կարողությունների և հմտությունների զարգացումն է, կրթական վերջնարդյունքները պետք է նկարագրվեն հետևյալ բայերով՝ *լուծել, իրականացնել, գնահատել, մշակել, համադրել, հաշվարկել* կամ *նախագծել*:

Ուստի, տարբեր տեսակի կրթական վերջնարդյունքների սահմանման համար խորհուրդ է տրվում օգտվել Բլումի տաքսոնոմիայի տարբեր մակարդակների իմացության ձևերից (տե՛ս աղյուսակ 1): Այսպես, մասնագիտական գիտելիքի և իմացության (խումբ Ա) ձևակերպման համար հարկավոր է օգտվել Բլումի տաքսոնոմիայի

1-ից 2-րդ մակարդակների համար առաջարկվող բայերի ցանկից, իսկ գործնական մասնագիտական կարողությունների (խումբ Բ) և ընդհանրական/փոխանցելի կարողությունների (խումբ Գ) և հմտությունների սահմանման համար տաքսոնոմիայի 3-ից 6-րդ մակարդակների բայերի ցանկից:

Ստորև ներկայացված են տարբեր առարկայական ոլորտներից դասընթացի (ուսումնական մոդուլի) կրթական վերջնարդյունքների ձևակերպման օրինակներ:

Դասընթացի հաջող ավարտին ուսանողն ունակ կլինի՝

- բացատրելու ժառանգականության մոլեկուլային մեխանիզմները,
- սահմանելու գեների կառուցվածքի և գործունեության օրինաչափությունները,
- կատարելու գենետիկական և բջջագենետիկական վերլուծություն,
- կիրառելու գենետիկայի և գենոմիկայի նվաճումները կենսաբանության և բժշկության ոլորտներում,
- կիրառելու կենսաֆիզիկական հետազոտությունների պարզագույն մեթոդները,
- ներկայացնելու մարդու և կենդանիների ֆիզիոլոգիայի արդի տեսական հիմնախնդիրները,
- նկարագրելու մարդու օրգանիզմի առանձին ֆիզիոլոգիական ֆունկցիաները և դրանց կարգավորման մեխանիզմները,
- պարզաբանելու օրգանիզմի ֆիզիոլոգիական գործընթացների էությունը, բացատրելու հյուսվածքների հատկությունների ձևավորման գործընթացում իոնային պոմպերի դերը,

- գրաֆիկորեն պատկերելու իր գիտելիքներն ու պատկերացումները իմունային կարևոր մոլեկուլների կազմավորվածության, տարբեր բջիջների միջև փոխազդեցությունների վերաբերյալ,
- անջատելու քրոմոսոմային, պլազմիդային և ֆագային ԴՆԹ-ները տարբեր բջիջներից,
- կիրառելու կլինիկական կենսաքիմիայի ժամանակակից մեթոդները և աշխատելու համապատասխան սարքավորումների հետ,
- տարբերակելու իմունային համակարգի հիվանդությունների հիմքում ընկած պաթոլոգիաները և առաջադրելու դրանց բուժման մեթոդները,
- սահմանելու և ներդնելու առցանց մարքեթինգի արդյունավետ ռազմավարություններ,
- սահմանելու և քննադատորեն գնահատելու ձեռնարկությունների առկա ռազմավարական հնարավորությունները,
- վերլուծելու կառավարման հանգուցային խնդիրները կոնկրետ արտադրության կամ ընկերության դեպքում և առաջարկելու իրավիճակը բարելավելու կազմակերպական մոտեցումներ,
- նախագծելու ինտերակտիվ կայք ուսանողների համար,
- մշակելու ուսումնառության և դասավանդման մոտեցումներ, որոնք արդյունավետ են սահմանված կրթական վերջնարդյունքները ձեռք բերելու տեսանկյունից,
- կատարելու տարբեր կարգի քերականական կառուցվածքների երկկողմանի փոխակերպումներ,
- ճշգրտորեն գործածելու հաղորդակցման առանձին ոլորտներին բնորոշ բառապաշարը, բառեզրերը և քերականական կազմությունները՝ համապատասխան համատեքստում,


- վերարտադրելու և մեկնաբանելու անգլիական մամուլից վերցված նյութերի բովանդակությունը, գրելու քաղաքական բնույթի հաղորդումներ և կատարելու երկկողմանի թարգմանություններ,
- վերլուծելու և մեկնաբանելու գերմանախոս երկրների քաղաքական կառուցվածքն ու տնտեսության բնորոշ գծերը,
- գարգացնելու լեզվական հաղորդակցման հմտությունները՝ ազգ-լեզու-մշակույթ համատեքստում,
- վերլուծելու 20-րդ դարի արևմտյան վեպը, դրաման, քնարերգությունը՝ գնահատելով դրանք գրականագիտական և մշակութաբանական չափանիշներով:



Ստորև տրվում են դասընթացի (ուսումնական մոդուլի) կրթական վերջնարդյունքները պատշաճ ձևակերպելու որոշ ուղենիշային ցուցումներ.

- Կրթական վերջնարդյունքների ցանկի թվարկմանը պետք է նախորդի հետևյալ նախադասությունը. «*Դասընթացի հաջող ավարտին ուսանողն ունակ կլինի*», այնուհետև հաջորդաբար ներկայացնել կրթական վերջնարդյունքները:
- Կրթական վերջնարդյունքների ձևակերպումը սկսել գործողություն ցույց տվող (ակտիվ) բայով, քանի որ կրթական վերջնարդյունքը նկարագրում է դրսևորելի, ցուցաբերելի, դիտարկելի, ակնառու գործողություն կամ վարք: *Բայը* գրել ապառնի ժամանակով:
- Բայից հետո գրել նրա լրացումը (թեման/առարկան), այնուհետև սահմանել կրթական վերջնարդյունքի ձեռքբերման ակնկալվող մակարդակը կամ չափը, իսկ վերջում ներկայացնել համատեքստը/տիրույթը:

- Յուրաքանչյուր կրթական վերջնարդյունք նկարագրել մեկ նախադասությամբ՝ միայն մեկ բայով: Լինել հնարավորինս հակիրճ:
- Հարկավոր է խուսափել *իմանալ, գիտենալ, սովորել, տեղյակ կամ ծանոթ լինել, հասկանալ, ընկալել, ըմբռնել, տիրապետել* և նման այլ բայերի գործածումից, քանի որ դրանց դրսևորման և գնահատման եղանակներն անորոշ են և կարիք ունեն լրացուցիչ մեկնաբանության:
- Գրել ուսանողի համար հասկանալի և մատչելի լեզվով, քանի որ նա է կրթական վերջնարդյունքների առաջին հասցեատերը:
- Կրթական վերջնարդյունքները ձևակերպելիս հարկավոր է առավելապես կենտրոնանալ այն հանգամանքի վրա, թե ինչ ենք ակնկալում, որ ուսանողները դրսևորեն կամ ցուցաբերեն դասընթացի (կամ կրթական ծրագրի) ավարտին:
- Կրթական վերջնարդյունքները պետք է սահմանել/ձևակերպել նվազագույն շեմային մակարդակում (տե՛ս մակարդակ/չափ բնութագրիչը նախորդ բաժնում)՝ հնարավորություն ընձեռելով բոլոր ուսանողներին ձեռք բերելու դրանք:
- Հստակություն և միարժեքություն ապահովելու նպատակով խուսափել բարդ նախադասություններից, բացառիկ դեպքերում օգտագործել մեկից ավելի նախադասություն մեկ կրթական վերջնարդյունքի ձևակերպման համար:
- Կրթական վերջնարդյունքների ցանկում ներառել Բլումի տաքսոնոմիայի ոչ միայն ստորին՝ 1-3-րդ, այլ նաև վերին՝ 4-6-րդ մակարդակներին համապատասխանող իմացության ձևերը:
- Ձևակերպումից հետո պետք է համոզվել, որ կրթական վերջնարդյունքը դիտարկելի, չափելի և գնահատելի է, այսինքն՝ հնարավոր է հեշտությամբ պարզել ուսանողն այդ վերջնարդյունքը ձեռք բերեց, թե՛ ոչ:

- 
- Դասընթացի (կամ կրթական ծրագրի) կրթական վերջնարդյունքների քանակը պետք է պահել կառավարելի սահմաններում: Հարկավոր է հաշվի առնել, որ եթե դասընթացի (կամ կրթական ծրագրի) վերջնարդյունքները ձևակերպված են շատ ընդհանրական, ապա դժվարանում է դրանց գնահատումը, իսկ եթե նկարագրված են շատ մանրամասն, ապա մեծանում է դրանց քանակը:
 - Կրթական վերջնարդյունքների ցանկը կազմելիս լինել իրատես. հաշվի առնել ուսանողների գիտելիքների ներկա մակարդակը, ուսման համար տրամադրվող աշխատաժամանակը (դասընթացին հատկացված կրեդիտները) և ուսումնառության առկա ռեսուրսները:
 - Համոզվել, որ ձևակերպված կրթական վերջնարդյունքները համահունչ են դասընթացի սահմանված նպատակներին և շաղկապված են կրթական ծրագրի վերջնարդյունքների հետ:
 - Դասընթացի (կրթական մոդուլի) համար սահմանվում են 4-8 կրթական վերջնարդյունք (ներառյալ 1-2 ընդհանրական վերջնարդյունք): Ընդ որում, 2 կրեդիտ ծավալով դասընթացի համար՝ մինչև 4 կրթական վերջնարդյունք, իսկ 6 կրեդիտ ծավալով դասընթացի համար՝ մինչև 8 կրթական վերջնարդյունք և այլն:
 - Բոլոր կրթական վերջնարդյունքները ձևակերպելուց և վերջնական ցանկը կազմելուց հետո այն տրամադրել գործընկեր դասախոսներին և ուսանողներին ու համոզվել, որ դրանք հասկանալի և ընկալելի են նրանց համար:

Օրինակներ

Ստորև ներկայացվում են մի շարք դասընթացների (ուսումնական մոդուլների) կրթական վերջնարդյունքների ձևակերպման օրինակներ:

Օրինակ 1. «Հայոց լեզվի պատմություն-1» ուսումնական մոդուլ

Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի.

(մասնագիտական գիտելիք և իմացություն)

- բացատրելու հայերենի ծագման վերաբերյալ եղած տեսությունները, հնչյունական և բառապաշարային համակարգերի պատմական զարգացումները,

(գործնական մասնագիտական կարողություններ)

- վերլուծելու ժամանակակից հայերենի լեզվական տարբեր իրողությունների զարգացումը,
- պարզաբանելու լեզվական իրողությունների ծագումնաբանությունը,

(ընդհանրական/փոխանցելի կարողություններ)

- կատարելու հետազոտական աշխատանք լեզվական խնդիրների շուրջ:

Օրինակ 2. «Իրավաբանական գրագրություն» դասընթաց

Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի.

(մասնագիտական գիտելիք և հմտություն)

- ներկայացնելու իրավավերլուծական ռազմավարությունները,
- նկարագրելու իրավավերլուծական համակարգերը, առաջին հերթին՝ IRAC համակարգը,
- թվարկելու իրավական ակտերի շտեմարանները, այդ թվում՝ HUDOC համակարգը,

(գործնական մասնագիտական կարողություններ)

- կազմելու կառուցվածքային, իրավաբանական և լեզվական առումներով գրագետ իրավավերլուծական տեքստեր՝ IRAC համակարգով,
- կիրառելու հանրաճանաչ, այդ թվում՝ ՀՀ բարձրագույն դատական աստիճանների կողմից կիրառվող իրավավերլուծական հնարքներ,
- իրականացնելու համակարգված իրավական հետազոտություն,

(ընդհանրական/փոխանցելի կարողություններ)

- օգտվելու տեղեկատվության տարատեսակ աղբյուրներից՝ առցանց ռեսուրսներ, էլեկտրոնային գրադարաններ, գիտական հոդվածներ, հաշվետվություններ,
- վերլուծելու փաստեր և կատարելու հետևություններ,
- ստեղծագործաբար կիրառելու և զարգացնելու գիտելիքները:

Օրինակ 3. «Արտոմ-ֆուդոն քվանտային գործառույթներ» դասընթաց

Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի.

(մասնագիտական գիտելիք և իմացություն)

- նկարագրելու ֆիզիկական համակարգերի կազմավորվածության և էվոլյուցիայի սկզբունքները,
- լուսաբանելու կոհերենտ լուսային ճառագայթման դաշտում, ներառյալ՝ քվանտացված և ատոմում ընթացող պրոցեսները,

(գործնական մասնագիտական կարողություններ)

- կիրառելու քվանտային մեխանիկայի և դասական էլեկտրադինամիկայի ապարատը՝ լուսային դաշտի ազդեցության տակ ատոմում ընթացող պրոցեսների գնահատման համար,
- հասկանալու և վերլուծելու լուսային դաշտի ազդեցությունը ատոմի ծանրության կենտրոնի շարժման վրա, դրա հետևանքով ատոմի սառեցման և տաքացման հնարավորությունները,

(ընդհանրական/փոխանցելի կարողություններ)

- վերլուծելու մասնագիտական նոր գաղափարներ և աջակցելու դրանց տարածմանը,
- մոդելավորելու մասնագիտության խնդիրները տեսական և մաթեմատիկական ֆիզիկայի մեթոդներով:

Օրինակ 4. «Շրջակա միջավայրով պայմանավորված առողջություն» դասընթաց

Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի.

(մասնագիտական գիտելիք և իմացություն)

- ներկայացնելու շրջակա միջավայրի աղտոտմամբ պայմանավորված՝ առողջության վրա բացասական հետևանքները,
- քննարկելու առողջության համար ռիսկի գնահատման հիմնական մեթոդները և փուլերը,
- դասակարգելու միջավայրի վիճակով պայմանավորված հիվանդությունները և դրանց կանխման ուղղությամբ իրականացվող գործողությունները,

(գործնական մասնագիտական կարողություններ)

- օգտագործելու գործնական հանձնարարականները՝ շրջակա միջավայրի բացասական ազդեցությունների հետևանքները նվազեցնելու կամ կանխարգելելու համար,
- կիրառելու ձեռք բերված գիտելիքները շրջակա միջավայրի հետ կապված առողջությանը վերաբերող կարևորագույն խնդիրների լուծման գործողություններում,
- ցուցադրելու ռիսկերի գնահատման մեթոդները և նպաստելու դրանց ներդրմանը հանրային առողջապահության քաղաքականության մշակման գործընթացում,

(ընդհանրական/փոխանցելի կարողություններ)

- կիրառելու ձեռք բերված տեսական գիտելիքները գործնականում,
- աշխատելու թիմում և լուծելու բարդ խնդիրներ:

Օրինակ 5. «Կրիմինալոգիա» դասընթաց

Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի.

(մասնագիտական գիտելիք և իմացություն)

- ներկայացնելու հանցավորության՝ որպես սոցիալական երևույթի օրինաչափությունները,
- թվարկելու հանցավորության և հանցագործությունների առանձին տեսակների կանխման միջոցառումները,

(գործնական մասնագիտական կարողություններ)

- գնահատելու հանցավորության վիճակը, կառուցվածքը, զարգացման միտումները,
- բացահայտելու հանցավորության և հանցավոր վարքագծի պատճառներն ու պայմանները,
- վերլուծելու հանցավորության կանխման միջոցառումները,
- առաջարկներ անելու հանցագործությունների առանձին տեսակների կանխման միջոցառումներ մշակելու վերաբերյալ,

(ընդհանրական/փոխանցելի կարողություններ)

- վերլուծելու փաստեր և կատարելու հետևություններ,
- ստեղծագործաբար կիրառելու և զարգացնելու առկա գիտելիքները:

Օրինակ 6. «Գենետիկա և էվոլյուցիոն տեսություն» դասընթաց

Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի.

(մասնագիտական գիտելիք և իմացություն)

- ներկայացնելու գենետիկայի զարգացման հիմնական փուլերը,
- նկարագրելու ԴՆԹ-ի կառուցվածքի, ռեպլիկացիայի, տրանսկրիպցիայի և տրանսլյացիայի սկզբունքները,
- լուսաբանելու «Մարդու գենոմ» ծրագրի և համեմատական գենոմիկայի հիմնական նվաճումները,

(գործնական մասնագիտական կարողություններ)

- վերլուծելու և գնահատելու մանրէների գենետիկայի մեթոդները,
- կուլտիվացնելու մարդու արյան և ոսկրածուծի բջիջները,
- օգտագործելու քրոմոսոմների վերլուծության, ԴՆԹ-կոմտների և միկրոկորիզների մեթոդները,
- լուծելու խնդիրներ դասական գենետիկայի բնագավառում,
- արժևորելու ժամանակակից գենետիկայում կենսաինֆորմատիկայի դերը,

(ընդհանրական/փոխանցելի կարողություններ)

- վերլուծելու փաստեր և կատարելու հետևություններ,
- աշխատելու թիմում:

Օրինակ 7. «Կլինիկական դեղագիտության սկզբունքները» դասընթաց

Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի.

(մասնագիտական գիտելիք և իմացություն)

- սահմանելու ֆարմակոկինետիկայի և ֆարմակոդինամիկայի սկզբունքները,
- նկարագրելու կենտրոնական նյարդային համակարգի, սրտանոթային, շնչառական և այլ համակարգերի դեղաբանության մեխանիզմները,

(գործնական մասնագիտական կարողություններ)

- վերլուծելու և գնահատելու դեղամիջոցների ազդեցության մեխանիզմները,
- գնահատելու դեղերի և դեղաչափերի արդյունավետությունը, բացահայտելու կողմնակի ազդեցությունները և բացասական դրսևորումները,

(ընդհանրական/փոխանցելի կարողություններ)

- վերլուծելու առկա խնդիրները և առաջարկելու դրանց լուծման եղանակներ:

Գործնական առաջադրանքներ

Առաջադրանք 5.

Ձևակերպել դասընթացի (ուսումնական մոդուլի) յուրացման արդյունքում ակնկալվող 4-6 կրթական վերջնարդյունք՝ որպես **մասնագիտական գիտելիք և իմացություն**: Դասընթացի (ուսումնական մոդուլի) ակնկալվող մասնագիտական գիտելիքի և իմացության ձևակերպումը սկսել հետևյալ կերպ՝

«Դասընթացի/ուսումնական մոդուլի հաջող ավարտին ուսանողն ունակ կլինի...»,

այնուհետև առանձին կետերով թվարկել համապատասխան *գիտելիքը և իմացությունը*՝ օգտագործելով գործողության բայեր, որոնք պետք է նկարագրեն, թե ուսանողը հատկապես ինչպես պետք է դրսևորի դրանք: Այս կրթական վերջնարդյունքների ձևակերպման համար խորհուրդ է տրվում օգտվել Բլումի տաքսոնոմիայի **1-2 մակարդակների** համար կիրառվող բայերից:

Առաջադրանք – 5.

Ձևակերպել _____ դասընթացով (ուսումնական մոդուլով) նախատեսված մասնագիտական գիտելիքը և իմացությունը:

Մասնագիտական գիտելիք և իմացություն.

Դասընթացի/ուսումնական մոդուլի հաջող ավարտին ուսանողն ունակ կլինի՝

1. _____

2. _____

3. _____

4. _____

5. _____

6. _____

Առաջադրանք 6.

Ձևակերպել դասընթացի (ուսումնական մոդուլի) յուրացման արդյունքում ակնկալվող 4-6 կրթական վերջնարդյունք՝ որպես **գործնական մասնագիտական կարողություններ և հմտություններ**: Դասընթացի (ուսումնական մոդուլի) ակնկալվող գործնական մասնագիտական կարողությունների և հմտությունների ձևակերպումը պետք է սկսել հետևյալ կերպ՝

«Դասընթացի/ուսումնական մոդուլի հաջող ավարտին ուսանողն ունակ կլինի...»

այնուհետև առանձին կետերով թվարկել համապատասխան *մասնագիտական կարողությունները և հմտությունները*՝ օգտագործելով գործողության բայեր, որոնք պետք է նկարագրեն, թե ուսանողը հատկապես ինչպես պետք է դրսևորի դրանք: Այս կրթական վերջնարդյունքների ձևակերպման համար խորհուրդ է տրվում օգտվել Բլումի տաքսոնոմիայի **3-6-րդ մակարդակների** համար կիրառվող բայերի ցանկից:

Առաջադրանք – 6.

Ձևակերպել _____ դասընթացով (ուսումնական մոդուլով) նախատեսված **գործնական մասնագիտական կարողությունները և հմտությունները:**

Գործնական մասնագիտական կարողություններ և հմտություններ.

Դասընթացի/ուսումնական մոդուլի հաջող ավարտին ուսանողն ունակ կլինի՝

1. _____

2. _____

3. _____

4. _____

5. _____

6. _____

Առաջադրանք 7.

Ձևակերպել դասընթացի (ուսումնական մոդուլի) յուրացման արդյունքում ակնկալվող 3-5 կրթական վերջնարդյունք՝ որպես **ընդհանրական (փոխանցելի) կարողություններ և հմտություններ**: Դասընթացի (ուսումնական մոդուլի) ակնկալվող ընդհանրական (փոխանցելի) կարողությունների և հմտությունների ձևակերպումը պետք է սկսել հետևյալ կերպ՝

«Դասընթացի/ուսումնական մոդուլի հաջող ավարտին ուսանողն ունակ կլինի...»

այնուհետև առանձին կետերով թվարկել համապատասխան *ընդհանրական կարողությունները և հմտությունները*՝ օգտագործելով գործողության բայեր, որոնք պետք է նկարագրեն, թե ուսանողը հատկապես ինչպես պետք է դրսևորի դրանք: Այս կրթական վերջնարդյունքների ձևակերպման համար խորհուրդ է տրվում օգտվել Բլումի տաքսոնոմիայի **3-6-րդ մակարդակների** համար կիրառվող բայերի ցանկից:

Առաջադրանք – 7.

**Ձևակերպել _____
դասընթացով (ուսումնական մոդուլով) նախատեսված
ընդհանրական (փոխանցելի) կարողությունները և
հմտությունները:**

Ընդհանրական (փոխանցելի) կարողություններ և հմտություններ.

Դասընթացի/ուսումնական մոդուլի հաջող ավարտին ուսանողն ունակ կլինի՝

1. _____

2. _____

3. _____

4. _____

5. _____

Առաջադրանք 8.

Վերլուծել 5-7-րդ **առաջադրանքներում** գրված կրթական վերջնարդյունքներից 6-ը՝ մեկական Բլումի տաքսոնոմիայի 6 մակարդակներից յուրաքանչյուրի համար (գիտելիք, իմացություն, կիրառություն, վերլուծություն, գնահատում և սինթեզ):

Համոզվեք, որ դրանք պարունակում են կրթական վերջնարդյունքների (ԿՎ) հետևյալ 4 կարևորագույն բնութագրերը.

1. **Գործողության բայ**, որը մատնանշում է ԿՎ-ի տեսակը՝ գիտելիք և իմացություն, դրանց կիրառումը, կարողություն (վերլուծելու, գնահատելու, սինթեզելու), հմտություն և այլն:
2. **Լրացում**, որը ցույց է տալիս ԿՎ-ի թեման կամ առարկան - կարող է լինել ինչպես կոնկրետ, այնպես էլ ընդհանուր, վերաբերել գիտելիքի նեղ կամ ընդհանուր բնագավառի և այլն:
3. **Մակարդակը**, որը ցույց է տալիս ԿՎ-ի ձեռքբերման ակնկալվող մակարդակն ըստ բարդության աստիճանի, նրա չափը կամ ծավալը՝ ըստ ընդգրկույթի և այլն:
4. **Համատեքստը**, որը մատնանշում է թեմայի (լրացման) տիրույթը կամ շրջանակը:

Լրացնել ընտրված 6 կրթական վերջնարդյունքների բաղկացուցիչ մասերը ներքոբերյալ 6 աղյուսակների համապատասխան սյունակներում (*գործողության բայ, լրացում՝ թեմա/առարկա, մակարդակ/չափ, համատեքստ/տիրույթ*):

1. Գիտելիք

Գործողության բայ	Լրացում (թեմա/առարկա)	Մակարդակ/չափ	Համատեքստ/տիրույթ

2. Իմացություն

Գործողության բայ	Լրացում (թեմա/առարկա)	Մակարդակ/չափ	Համատեքստ/տիրույթ

3. Կիրառություն

Գործողության բալ	Լրացում (թե՛նա/առարկա)	Մակարդակ/չափ	Համատեքստ/տիրույթ

4. Վերլուծություն

Գործողության բալ	Լրացում (թե՛նա/առարկա)	Մակարդակ/չափ	Համատեքստ/տիրույթ

5. Գնահատում

Գործողության բով	Լրացում (թե՛մա/առարկա)	Մակարդակ/չափ	Համատեքստ/տիրույթ

6. Մինթեզ

Գործողության բով	Լրացում (թե՛մա/առարկա)	Մակարդակ/չափ	Համատեքստ/տիրույթ

1.5. Ծրագրի կրթական վերջնարդյունքների ձևակերպումը




Ծրագրի կրթական վերջնարդյունքների որոշումը սերտորեն շաղկապված է նրա նպատակների հետ: Ուստի, հաջորդ խնդիրը, որն առաջանում է ծրագրի հիմնական նպատակները հայտագրելուց հետո՝ վերջինիս կրթական վերջնարդյունքների ձևակերպումն է: Առաջնային հարցն այս ուղղությամբ հետևյալն է. ինչպե՞ս ձևակերպել վերջնարդյունքներն ըստ կրթական մակարդակների (շրջափուլերի)՝ բակալավրի և մագիստրոսի ծրագրերի համար: Առաջարկվում է կրթական վերջնարդյունքների սահմանման հաջորդականության վայրընթաց մոտեցում՝ սկզբում մագիստրոսի, այնուհետև՝ բակալավրի ծրագրերի, իսկ վերջում՝ առանձին դասընթացների և ուսումնական մոդուլների համար: Ծրագրի կրթական վերջնարդյունքները սահմանելիս, ինչպես արդեն նշվեց վերևում, որպես կողմնորոշիչներ կարող են ծառայել որակավորումների ազգային և ոլորտային (եթե կան) շրջանակների մակարդակների նկարագրիչները և այլ արտաքին ու ներքին ծրագրային կողմնորոշիչներ/չափորոշիչներ (տե՛ս բաժին 1.1): Կրթական վերջնարդյունքների սահմանման ընդհանուր հիերարխիան ներկայացված է նկար 4-ում, իսկ ծրագրի նպատակների և կրթական վերջնարդյունքների սահմանման հաջորդականությունն ըստ շրջափուլերի՝ նկար 5-ում:

Վերջնարդյունքների հենքով կառուցված կրթական ծրագիրը հնարավորություն է տալիս հասկանալու, թե ինչ է ակնկալվում ուսանողից, ինչպես է նա դրսևորելու իր սովորածը և ինչ չափանիշներով է գնահատվելու:

Ծրագրի կրթական վերջնարդյունքների մի մասն առնչվում է ուսումնառության մասնագիտական ոլորտին, իսկ մյուսը հատկանշական է տվյալ կրթական մակարդակի ծրագրերի համար: Ըստ այդմ, տարբերակում են կրթական վերջնարդյունքների երկու կազմ՝ բուն մասնագիտական, որոնք հանգուցային են տվյալ որակավորման համար և սերտորեն առնչվում են կոնկրետ առարկայական/մասնագիտական ոլորտին, և ընդհանրական կամ փոխանցելի, որոնք հատկանշական են տվյալ շրջափուլի/մակարդակի բոլոր կրթական որակավորումների համար (ուստի և փոխանցելի են մասնագիտական ոլորտից ոլորտ):

Առաջին և երկրորդ կրթական մակարդակների (շրջափուլերի) համար նախատեսված ընդհանրական/փոխանցելի վերջնարդյունքները պետք է հստակորեն տարանջատվեն: Այսպես, բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերի համար առաջարկվում են տարբեր առարկայական ոլորտներին հատկանշական հետևյալ կոմպետենցիաները, որոնք հիմք են հանդիսանում համապատասխան կրթական վերջնարդյունքների ձևակերպման համար:



Նկար 4. Կրթական վերջնադրոյութների սահմանման ընդհանուր հիերարխիան

2-րդ շրջափուլ

Մագիստրոսի ծրագրի նպատակները
(որակավորման պրոֆիլը)

Մագիստրոսի ծրագրի բուն
մասնագիտական և ընդհանրական
կրթական վերջնարդյունքները

1-ին շրջափուլ

Բակալավրի ծրագրի նպատակները
(որակավորման պրոֆիլը)

Բակալավրի ծրագրի բուն
մասնագիտական և ընդհանրական
կրթական վերջնարդյունքները

Դասընթաց-1

Դասընթաց-2

Դասընթաց-3

Դասընթաց-n

Դասընթաց-1

Դասընթաց-2

Դասընթաց-3

Դասընթաց-n

Նկար 5. Կրթական ծրագրի նպատակների և վերջնարդյունքների սահմանման հաջորդականությունն ըստ շրջափուլերի

Բակալավրի կրթական ծրագրին բնորոշ կոմպետենցիաների կազմ



Բակալավրի կրթական ծրագրի շրջանավարտները պետք է տիրապետեն հետևյալ կոմպետենցիաներին.

- մասնագիտության պատմության և հիմունքների իմացություն,
- գիտելիքը տրամաբանորեն և հետևողականորեն ներկայացնելու կարողություն,
- նոր տեղեկատվությունը համապատասխան համատեքստում ընկալելու և մեկնաբանելու ունակություն,
- քննական վերլուծության և տեսությունների զարգացման մեթոդները հասկանալու և օգտագործելու կարողություն,
- առարկայի մեթոդները և տեխնոլոգիաները ճիշտ օգտագործելու ունակություն,
- տվյալ առարկայական ոլորտում հետազոտության արդյունքները կիրառելու կարողություն,
- տեսությունների փորձարարական և դիտարկիչ միջոցների արդյունքները հասկանալու ունակություն և այլն:


Մագիստրոսի կրթական ծրագրին քնորոշ կոմպետենցիաների կազմ



Առաջին շրջափուլի ավարտը նաև երկրորդ շրջափուլի մուտքի պահանջն է: Ուստի, մագիստրոսի ծրագրի շրջանավարտները պետք է տիրապետեն նաև հետևյալ կոմպետենցիաներին.

- գիտելիք՝ նորագույն տեսությունների և դրանց մեկնաբանությունների վերաբերյալ,
- տվյալ մասնագիտական ոլորտում տեսության և պրակտիկայի զարգացումներին քննորեն հետևելու և իմաստավորելու ունակություն,
- հետազոտության նորագույն մեթոդների և տեխնոլոգիաների իմացություն,
- ինքնուրույն հետազոտություն կատարելու և հետազոտության արդյունքները մեկնաբանելու կարողություն,
- տվյալ մասնագիտական ոլորտում որոշակի ներդրում կատարելու ունակություն (օրինակ՝ մագիստրոսական թեզի կատարման արդյունքում),
- ինքնուրույնության և ստեղծագործական մոտեցման դրսևորում և այլն:

Նշված ոչ բոլոր կոմպետենցիաներն են հավասարապես կարևոր մասնագիտական տարբեր ոլորտների համար, սակայն դրանք ընդհանուր հենք են հանդիսանում կոնկրետ մասնագիտական ոլորտում պահանջվող կրթական վերջնարդյունքների ցանկն ու կառուցվածքը որոշելու համար: Կրթական ծրագրում ընդհանրական վերջնարդյունքների ձևավորումը և զարգացումը կարող



են իրականացվել երկու հիմնական եղանակով: Առաջինը նախատեսում է կրթական ծրագրի կառուցվածում ընդհանրական վերջնարդյունքների որոշ մասի ձևավորմանն ուղղված առանձին դասընթացների կամ ուսումնական մոդուլների առկայություն, ինչպես, օրինակ՝ կառավարման, հաղորդակցման, համակարգչային և տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործման կարողություններ: Երկրորդ եղանակը ենթադրում է որոշ ընդհանրական վերջնարդյունքների ձևավորմանն ուղղված կրթական գործողությունների և (կամ) ուսումնառության մեթոդների (ինքնուրույն կամ խմբային առաջադրանքների/աշխատանքների կատարում և այլն) ներառում ծրագրի հիմնական (մասնագիտական) կառուցամասի դասընթացներում:


Հարկ է նշել նաև, որ որոշ կարողություններ, ինչպես օրինակ սովորելու, կիրառելու, վերլուծելու, գնահատելու, սինթեզելու և այլն, հատկանշական են բոլոր կամ գրեթե բոլոր մասնագիտական/առարկայական ոլորտների համար և ունեն կարևոր նշանակություն, քանի որ շրջանավարտների համար ապահովում են կարիերայի և աշխատանքի անցնելու ավելի լայն հնարավորություններ:

Որպես օրինակ, ստորև ներկայացվում է ընդհանրական կարողությունների մի կազմ, որը կարող է օգտակար լինել տարբեր մասնագիտություններով բակալավրի և մագիստրոսի ծրագրերի կրթական վերջնարդյունքները սահմանելիս.

- վերլուծել և սինթեզել,
- կազմակերպել և պլանավորել,
- մայրենի լեզվով գրավոր և բանավոր հաղորդակցվել,
- օտար լեզվով հաղորդակցվել,
- համակարգչով աշխատել,
- տարբեր աղբյուրներից տեղեկատվություն գտնել և վերլուծել,

- բարդ խնդիրներ լուծել,
- որոշումներ կայացնել,
- քննաբանորեն մտածել,
- (միջդիսցիպլինար) թիմում աշխատել,
- միջազգային միջավայրում աշխատել,
- այլ ոլորտների մասնագետների հետ շփվել,
- գիտելիքները գործնականում կիրառել,
- հետազոտություն պլանավորել և կատարել,
- նոր իրադրություններին հարմարվել,
- մտահղել/նոր գաղափարներ առաջ քաշել,
- ղեկավարել,
- սովորել,
- ինքնուրույն աշխատել,
- նախագծեր մշակել և կառավարել,
- նախաձեռնողականություն և ձեռներեցություն ցուցաբերել և այլն:

Նշված ոչ բոլոր կոմպետենցիաներն են հավասարապես կարևոր տարբեր մասնագիտական ոլորտների համար, սակայն դրանք ընդհանուր հենք են հանդիսանում կոնկրետ մասնագիտական ոլորտում պահանջվող կրթական վերջնարդյունքների ցանկը և կառուցվածքը որոշելու համար: Կրթական ծրագրում ընդհանրական վերջնարդյունքների ձևավորումը և զարգացումը կարող է իրականացվել երկու հիմնական եղանակով: Առաջինը նախատեսում է կրթական ծրագրի կառուցվածում ընդհանրական վերջնարդյունքների որոշ մասի ձևավորմանն ուղղված առանձին դասընթացների կամ ուսումնական մոդուլների առկայություն, ինչպես, օրինակ՝ կառավարման, հաղորդակցման, համակարգչային և տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործման կարողություն-



ներ: Երկրորդ եղանակը ենթադրում է որոշ ընդհանրական վերջնարդյունքների ձևավորմանն ուղղված կրթական գործողությունների և (կամ) ուսումնառության մեթոդների (ինքնուրույն կամ խմբային առաջադրանքների/աշխատանքների կատարում և այլն) ներառում ծրագրի հիմնական (մասնագիտական) կառուցամասի դասընթացներում:

Ինչպես արդեն նշվեց, ծրագրի ընդհանրական կրթական վերջնարդյունքների կառուցվածքը և կազմը որոշելու համար, վերը բերված ցանկից գատ, կարող են օգտագործվել նաև Եվրոպական բարձրագույն կրթության տարածքի որակավորումների շրջանակը (Դուրլինյան նկարագրիչներ) և ՀՀ բարձրագույն կրթության որակավորումների ազգային շրջանակը: Բուն մասնագիտական կրթական վերջնարդյունքները որոշվում են՝ ելնելով կրթական ծրագրի կոնկրետ նպատակներից և որակավորման պրոֆիլից: Այս հարցում, բացի վերոնշյալ որակավորումների շրջանակներից, կարող են օգտակար լինել նաև տարբեր առարկայական/մասնագիտական կողմնորոշիչները (չափորոշիչներ), աշխատաշուկայի ներկայացուցիչների, մասնագիտական և ակադեմիական հանրության պահանջները և այլն (տե՛ս բաժին 1.1):

Այսպես, մագիստրոսի ծրագրերի կրթական վերջնարդյունքների կազմը որոշելիս առաջին հերթին պետք է առաջնորդվել ՀՀ բարձրագույն կրթության որակավորումների ազգային շրջանակում (ՈԱԾ) մագիստրոսի որակավորմանը ներկայացվող պահանջներով, համաձայն որոնց՝ **մագիստրոսի որակավորում է շնորհվում անձանց, ովքեր ունեն ոլորտի խորը մասնագիտացված գիտելիք և կարողություններ մասնագիտական գործունեություն և հետազոտություն իրականացնելու և (կամ) ուսումնառությունը շարունակելու համար:** Մագիստրոսի որակավորում ունեցող անձը.

<p>ԳԻՏԵԼԻԻՔ</p>	<p>1. Գիտելիք և իմացություն</p>	<ul style="list-style-type: none"> • Դրսևորում է խորը մասնագիտացված գիտելիք, այդ թվում՝ տվյալ ոլորտի վերջին ձեռքբերումների վերաբերյալ, որը կիրառում է ուսումնասության, աշխատանքի և հետազոտության ընթացքում: • Դրսևորում է տվյալ մասնագիտական բնագավառի և հարակից ոլորտների տեսությունների, առաջավոր սկզբունքների ու մեթոդների խորը իմացություն:
	<p>2. Գիտելիքի և իմացության կիրառում</p>	<ul style="list-style-type: none"> • Կարող է կիրառել ձեռքբերած գիտելիքը և իմացությունը, մասնագիտական և/կամ միջմասնագիտական ոլորտների առաջավոր սկզբունքները և մեթոդները՝ նոր և անծանոթ իրադրություններում տեսական ու գործնական բարդ խնդիրներ լուծելու, հետազոտական ու նորարարական գործունեություն իրականացնելու համար:
<p>ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ</p>	<p>3. Հաղորդակցման, ՏՀՏ և տվյալների հետ աշխատելու կարողություններ</p>	<ul style="list-style-type: none"> • Կարող է կիրառել մասնագիտական հաղորդակցման միջոցները մասնագիտական և ոչ մասնագիտական լայն հանրությանը՝ հստակ ու համակարգված ներկայացնելու և բացատրելու իր եզրահանգումները, համապատասխան հիմնավորումներն ու հետազոտության արդյունքները: • Կարող է վարժ կիրառել ՏՀՏ-ներ մասնագիտական և (կամ) միջմասնագիտական ոլորտներում նոր և բարդ խնդիրներ լուծելու և հետազոտությունների կատարմանը օժանդակելու համար: • Կարող է վերլուծել և գնահատել մասնագիտական և (կամ) միջմասնագիտական ոլորտներին առնչվող քանակական ու որակական տվյալներ՝ ոչ ամբողջական կամ սահմանափակ տեղեկատվության պայմաններում եզրահանգումներ անելու և որոշումներ կայացնելու նպատակով:



	<p>4. Ընդհանրական իմացական կարողություններ (ներառյալ դատողություններ անելը)</p>	<ul style="list-style-type: none"> • Կարող է հետազոտել մասնագիտական ոլորտի հիմնախնդիրները և տալ նորարարական ու ստեղծագործական լուծումներ, ինչպես նաև առաջադրել ոլորտի գիտելիքի և պրակտիկայի ընդլայնմանը միտված արդիական գաղափարներ ու մոտեցումներ:
<p>ՀԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ</p>	<p>5. Ինքնուրույնություն և պատասխանատվություն (ներառյալ սովորելու կարողությունները)</p>	<ul style="list-style-type: none"> • Կարող է մասնագիտացման և (կամ) ուսումնառության ոլորտում ծավալել գործունեություն, որը պահանջում է բարդ և անձանոթ աշխատանքային իրադրությունների կառավարման ու վերափոխման ռազմավարական նոր մոտեցումներ: • Կարող է ստեղծել և ղեկավարել մասնագիտական կամ հետազոտական թիմ և պատասխանատվություն ստանձնել նրա անդամների մասնագիտական առաջընթացի համար: • Ունակ է գնահատելու իր կրթական պահանջմունքներն ու մասնագիտական զարգացման կարիքները՝ ուսումնառությունը տարբեր միջավայրերում շարունակելու նպատակով: • Ունակ է նպաստելու քաղաքացիական հասարակության զարգացմանը, զուգակցելու ազգային արժեհամակարգը համաարդկային արժեքների հետ:

Համապատասխանաբար, բակալավրի ծրագրի կրթական վերջնարդյունքների կազմը որոշելիս հարկավոր է առաջնորդվել ՀՀ բարձրագույն կրթության որակավորումների ազգային շրջանակում (ՈԱԾ) բակալավրի որակավորմանը ներկայացվող պահանջներով, համաձայն որոնց՝ **բակալավրի որակավորում է շնորհվում անձանց, ովքեր ունեն համակողմանի և համակարգված գիտելիք և կարողություններ մի շարք ոլորտներում մասնագիտական աշխատանք կատարելու և (կամ) ուսումնառությունը շարունակելու համար:** Բակալավրի որակավորում ունեցող անձը.

ԳԻՏԵԼԻԲ	<p>1. Գիտելիք և իմացություն</p>	<ul style="list-style-type: none"> Դրսևորում է մասնագիտական աշխատանքի կամ ուսումնառության ոլորտի արդի և հիմնարար հասկացությունների, տեսությունների ու մեթոդների իմացություն և առաջադեմ գիտելիք:
	<p>2. Գիտելիքի և իմացության կիրառում</p>	<ul style="list-style-type: none"> Կարող է կիրառել ձեռքբերած գիտելիքը և իմացությունը, ոլորտի հիմնարար սկզբունքները և մեթոդները՝ մասնագիտական աշխատանքի կամ ուսումնառության ընթացքում ծագած խնդիրները լուծելու համար:
ԿԱՐԴՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ	<p>3. Հաղորդակցման, ՏՀՏ և տվյալների հետ աշխատելու կարողություններ</p>	<ul style="list-style-type: none"> Կարող է մասնագիտական և ոչ մասնագիտական հանրությանը ներկայացնել և բացատրել տվյալ ոլորտին առնչվող տեղեկատվություն, փաստարկներ, գաղափարներ, խնդիրներ և դրանց լուծումները: Կարող է կիրառել ՏՀՏ-ներ մասնագիտական ոլորտում խնդիրներ լուծելու և աշխատանքն արագացնելու համար: Կարող է հավաքագրել, մշակել, վերլուծել և մեկնաբանել մասնագիտական ոլորտին առնչվող քանակական և որակական տվյալներ՝ հիմնավորված դատողություններ անելու համար:
	<p>4. Ընդհանրական իմացական կարողություններ (ներառյալ դատողություններ անելը)</p>	<ul style="list-style-type: none"> Կարող է վերլուծել և անել եզրահանգումներ՝ դրսևորելով քննական մտածողություն, ինչպես նաև ցուցաբերել ստեղծագործական մոտեցում մասնագիտական ոլորտի խնդիրները բացահայտելու և տարբեր լուծումներ առաջադրելու համար:

5. Ինքնությունություն և պատասխանատվություն (ներառյալ սովորելու կարողությունները)

- Կարող է ծավալել լիարժեք մասնագիտական գործունեություն, կառավարել մասնագիտական գործառույթներ ու ծրագրեր, կայացնել ինքնուրույն որոշումներ:
- Կարող է կառավարել աշխատանքային թիմ և պատասխանատվություն ստանձնել նրա անդամների մասնագիտական գործունեության համար:
- Ունակ է բացահայտելու իր կրթական պահանջմունքները և (կամ) կարիերայի հնարավորությունները հետագա ուսումնառության ուղիները որոշելու համար:
- Ունակ է ստանձնելու անձնական պատասխանատվություն ազգի և պետության հանդեպ, հետամուտ լինելու ժողովրդավարական սկզբունքների իրագործմանը և ազգային ու համամարդկային արժեքների տարածմանը:

Ինչպես ձևակերպել ծրագրի կրթական վերջնարդյունքները




Ծրագրի կրթական վերջնարդյունքները ձևակերպվում են դասընթացի/ուսումնական մոդուլի կրթական վերջնարդյունքների ձևակերպման սկզբունքով՝ ըստ հետևյալ դասակարգումների.

- մասնագիտական գիտելիք և իմացություն (խումբ Ա),
- գործնական մասնագիտական կարողություններ և հմտություններ (խումբ Բ),
- ընդհանրական (փոխանցելի) կարողություններ և հմտություններ (խումբ Գ):

Սակայն, ի տարբերություն դասընթացի կրթական վերջնարդյունքների, ծրագրի վերջնարդյունքները լինում են երկու տեսակ՝

- Կրթական վերջնարդյունքներ, որոնց ձեռքբերումը ուսանողի կողմից կարելի է չափել կամ գնահատել ծրագրի իրականացման ընթացքում կամ նրա ավարտին (եզրափակիչ քննություններ, ավարտական ատեստավորում և այլն):
- Կրթական վերջնարդյունքներ, որոնց ձեռքբերումը ուսանողի կողմից հնարավոր չէ չափել ծրագրի իրականացման ընթացքում կամ նրա ավարտին: Դրանք դրսևորվում են ծրագրի շրջանավարտի մասնագիտական գործունեության ընթացքում և չափվում կամ գնահատվում են գործատուի կողմից:



Բացի այդ, ծրագրի կրթական վերջնարդյունքները սահմանվում են միջին վիճակագրական ուսանողի համար, ի տարբերություն դասընթացի կրթական վերջնարդյունքների, որոնք սահմանվում են նվազագույն շեմային մակարդակում:

Ուսանողի կողմից ծրագրի կրթական վերջնարդյունքների ձեռքբերումը, ի տարբերություն դասընթացի (ուսումնական մոդուլի) կրթական վերջնարդյունքների, հնարավոր չէ չափել ուղղակի մեթոդներով: Այն չափվում է անուղղակի մեթոդներով՝ ծրագրի բաղկացուցիչ ուսումնական մոդուլների (դասընթացների) կրթական վերջնարդյունքների գնահատման միջոցով: Քանի որ ծրագրի կրթական վերջնարդյունքներն ուղղակի և միարժեք կերպով հնարավոր չէ գնահատել (չափել), ուստի դրանք տարրալուծվում են ուսումնական մոդուլների (դասընթացների) մեջ և արտահայտվում դրանց կրթական վերջնարդյունքներով:

Ծրագրի կրթական վերջնարդյունքներն ակնկալվող այն գիտելիքները, կարողությունները և հմտություններն են, որոնք ցույց են տալիս, թե ծրագրի ավարտին հատկապես ի՞նչ պետք է գիտենա, հասկանա և կարողանա անել ուսանողը: Կրթական վերջնարդյունքները ձևակերպվում են այնպես, որ այդ գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձեռքբերումը լինի դիտարկելի/դրսևորելի, չափելի և գնահատելի: Այդ նպատակով՝ վերջնարդյունքի ձևակերպումը հարկավոր է սկսել ակտիվ, գործողություն ցույց տվող բայով: Հարկավոր է խուսափել *իմանալ, գիտենալ, սովորել, տեղյակ/ծանոթ լինել, հասկանալ, ընկալել, ըմբռնել, տիրապեղել* և նման այլ բայերից, քանի որ դրանց դրսևորման և գնահատման եղանակներն անորոշ են: Տարբեր տեսակի կրթական վերջնարդյունքների սահմանման համար խորհուրդ է տրվում օգտվել Բլումի տաքսոնոմիայի տարբեր մակարդակների իմացության ձևերից (տե՛ս աղյուսակ 1): Այսպես, մասնագիտական գիտելիքի և իմացության (խումբ Ա) ձևակերպման համար հարկավոր է օգտվել Բլումի տաքսոնոմիայի 1-2-րդ մակարդակների համար առաջարկվող բայերից, իսկ գործնական մասնագիտական (խումբ Բ) և ընդ-

հանրական/փոխանցելի (խումբ Գ) կարողությունների ու հմտությունների սահմանման համար՝ տաքսոնոմիայի 3-6-րդ մակարդակների բայերից:

Ծրագրի կրթական վերջնարդյունքների քանակը պետք է պահել ողջամիտ սահմաններում: Պետք չէ պարտադրաբար ներառել բոլոր բաղկացուցիչ դասընթացների կրթական վերջնարդյունքները (գործում է *«ամբողջն ավելի մեծ է, քան նրա բաղկացուցիչ մասերի գումարը»* սկզբունքը): Որպես կանոն, բակալավրի ծրագրի համար սահմանվում են մինչև 16-20 կրթական վերջնարդյունքներ (ներառյալ 3-5 ընդհանրական վերջնարդյունքները), իսկ մագիստրոսի ծրագրի համար՝ 14-18 (ներառյալ՝ 2-4 ընդհանրականները):

Ծրագրի կրթական վերջնարդյունքների ձևակերպումը հարկավոր է սկսել այսպես.

«Այս ծրագրի հաջող ավարտին ուսանողն ունակ կլինի.», այնուհետև գործողության բայով սկսվող նախադասությամբ թվարկել համապատասխան տեսական գիտելիքների և գործնական կարողությունների ու հմտությունների (մասնագիտական և ընդհանրական) այն կազմը, որն ակնկալվում է, որ ուսանողը ձեռք կբերի ծրագրի ավարտին:

Ստորև ներկայացված են տարբեր կրթական ծրագրերի վերջնարդյունքների ձևակերպման օրինակներ:

Ա. Մասնագիտական գիտելիք և իմացություն.

Այս ծրագրի հաջող ավարտին ուսանողն ունակ կլինի.

Ա1. Թվարկել և լուսաբանել ռեֆլեքսների տեսակները, ուսուցման հիմնական տարատեսակները՝ պարզ ուսուցում, ընտելացում, դրոշմում, միաժամանակյա ուսուցում:

Ա2. Տարբերակել կենդանական և բուսական թույները, նկարագրել դրանց տոքսիկության դրսևորման պայմանները, կլինիկական կիրառման ձևերը, թունավորումների բուժման միջոցները, հակաթույների և դրանց ստացման մեթոդները:

Ա3. Նկարագրել անգլերենի հնչյունաբանության, բառագիտության և քերականության հիմնադրույթները և թարգմանաբանության հայեցակարգերը:

Ա4. Բացատրել հայերենի ոճագիտության հիմունքները և տարբեր տիպի տեքստերի լեզվաոճական և բանասիրական վերլուծության մեթոդաբանությունը:

Բ. Գործնական մասնագիտական կարողություններ և հմտություններ.

Բ1. Գնահատել դեղերի և դեղաչափերի արդյունավետությունը, կողմնակի ազդեցությունները և բացասական դրսևորումները:

Բ2. Վերլուծել բիզնեսի հիմնախնդիրները և առաջարկել համարժեք լուծումներ:

Բ3. Տեխնիկական և վարչական բնույթի որոշումներ կայացնել արտադրական կառույցների սպասարկման և կառավարման ոլորտում:

Բ4. Գնահատել առկա ռեսուրսները բիզնես կառավարման նոր զարգացումներին համապատասխան:

Բ5. Վերլուծել և մեկնաբանել անգլերենի հնչյունաբանական, ձևաբանական, քերականական երևույթները և անգլերեն գեղարվեստական տեքստերին բնորոշ ոճական հնարքները:

Բ6. Գործադրել ձեռք բերած լեզվական գիտելիքները և անգլերեն բանավոր և գրավոր խոսքի հմտությունները հաղորդակցման տարբեր ոլորտներում:

Գ. Ընդհանրական (փոխանցելի) կարողություններ և հմտություններ.

Գ1. Օգտվել տեղեկատվական տարբեր աղբյուրներից, մշակել և ներկայացնել տեղեկատվությունը:

Գ2. Պատրաստել գեկուցումներ, ներկայացնել հետազոտության արդյունքները, վարել գիտական բանավեճեր:

Գ3. Պլանավորել և իրականացնել փորձը, վերլուծել արդյունքները և ներկայացնել դրանք մասնագիտական հանրությանը:

Գ4. Կիրառել օտար լեզվով գրավոր և բանավոր խոսքի հմտությունները հաղորդակցման տարբեր ոլորտներում:

Գիտելիքի աստիճանական աճը կրթական ծրագրում

Բազմամակարդակ կրթական ծրագրերի (բակալավր/մագիստրոս) պատշաճ մշակման կարևորագույն սկզբունքներից մեկը կրթական վերջնարդյունքների տրամաբանական փոխկապվածության և գիտելիքի աստիճանական աճի, խորացման ու բարդացման ապահովումն է ավելի ցածր մակարդակի կրթական ծրագրից դեպի ավելի բարձրին անցնելիս: Այդ կապն ապահովվում է, եթե ծրագրի մշակման հիմքում դրված են ՀՀ բարձրագույն կրթության որակավորումների ազգային և համապատասխան ոլորտային շրջանակները (առկայության դեպքում):

Դիտարկենք այս հանգամանքը կրթական ծրագրի՝ երեք տարբեր խմբերի պատկանող (խումբ Ա, Բ և Գ) վերջնարդյունքների օրինակով:

Խումբ Ա. Մասնագիտական գիտելիք և իմացություն

ԲԱԿԱԼԱՎՐ	ՄԱԳԻՍՏՐՈՍ
<p>«Այս ծրագրի հաջող ավարտին ուսանողն ունակ կլինի».</p> <ul style="list-style-type: none"> ✓ ներկայացնելու հիմնական տնտեսագիտական կատեգորիաները և սկզբունքները՝ ժամանակակից միկրոտնտեսական և մակրոտնտեսական տեսության տեսանկյունից, ✓ ներկայացնելու տնտեսվարող սուբյեկտների գործունեության օրենսդրական դաշտը, ներառյալ՝ հարկայինը, ✓ բացատրելու շուկայական տնտեսության կառուցվածքային տարրերը և դրանց փոխազդեցությունը, ✓ նկարագրելու տնտեսվարող սուբյեկտների տնտեսական տվյալների հաշվառման ուղիները: 	<ul style="list-style-type: none"> ✓ մանրամասն ներկայացնելու առանցքային տնտեսագիտական կատեգորիաները, մեխանիզմները և հիմնախնդիրները, ✓ բացատրելու ներդրումային և ֆինանսական որոշումների կայացման ժամանակակից սկզբունքները՝ պայմանավորված տնտեսական միջավայրի փոփոխություններով, ✓ բնութագրելու տնտեսագիտական տվյալների քանակական և որակական վերլուծության առաջադեմ մեթոդները:

Խումբ Բ. Գործնական մասնագիտական կարողություններ և հմտություններ

«Այս ծրագրի հաջող ավարտին ուսանողն ունակ կլինի».

ԲԱԿԱԼԱՎՐ	ՄԱԳԻՍՏՐՈՍ
<ul style="list-style-type: none"> ✓ օգտագործելու տեղեկատվական տեխնոլոգիաները տնտեսական և կառավարման խնդիրները լուծելու համար, ✓ որոնելու, տեսակավորելու, դասակարգելու և մեկնաբանելու տնտեսական տվյալները և տեղեկատվությունը, ✓ կիրառելու հիմնական հետազոտական մեթոդները գործնական և տեսական տնտեսագիտական խնդիրներ լուծելիս: 	<ul style="list-style-type: none"> ✓ համեմատելու ավանդական տնտեսագիտական դպրոցների տեսակետները հիմնական տնտեսական կատեգորիաների և մեխանիզմների մասին և գնահատելու դրանց կիրառումը՝ ներկա տնտեսական և քաղաքական պայմաններում, ✓ կազմակերպելու, վերլուծելու և քննադատաբար մեկնաբանելու տնտեսագիտական տվյալները և տեղեկատվությունը տարբեր տեսանկյուններից, ներառյալ՝ տեսական, մեթոդաբանական և գաղափարական արժեքների կամ այլ հենքերի միավորումը, ✓ ստեղծագործաբար լուծելու տեսական և գործնական տնտեսագիտական խնդիրներ՝ միջդիսցիպլինար համատեքստում, ✓ կիրառելու առաջավոր գիտական մեթոդները և գործիքները գործնական և տեսական տնտեսագիտական խնդիրներ լուծելիս՝ նոր և ինքնատիպ տեղեկույթ ստանալու համար:

Խումբ Գ. Ընդհանրական (փոխանցելի) կարողություններ և հմտություններ

*«Այս ծրագրի հաջող ավարտին
ուսանողն ունակ կլինի».*

ԲԱԿԱԼԱՎՐ	ՄԱԳԻՍՏՐՈՍ
<ul style="list-style-type: none"> ✓ համագործակցելու թիմի անդամների հետ՝ համեմատաբար հստակ սահմանված խնդիրների շրջանակներում, ✓ ակտիվորեն ներկայացնելու իր կամ թիմի տեսակետներն ու կարծիքները, ✓ օգտագործելու համապատասխան ծրագրային ապահովումը՝ կազմակերպական, վերլուծական աշխատանքների և արդյունքների ներկայացման համար: 	<ul style="list-style-type: none"> ✓ կառավարելու մասնագիտական գործառույթներ ու ծրագրեր, կայացնելու ինքնուրույն որոշումներ, ✓ ղեկավարելու աշխատանքային թիմ, որն ունի սահմանված գործառույթներ:

Օրինակներ

Ստորև ներկայացվում են բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերի վերջնարդյունքների ձևակերպման մի շարք օրինակներ:

Օրինակ 1. «Կենսասինֆորմատիկա» բակալավրի ծրագիր

Ծրագրի կրթական վերջնարդյունքները

Ա. Մասնագիտական գիտելիք և իմացություն

Այս ծրագրի հաջող ավարտին ուսանողն ունակ կլինի.

- Ա1. ներկայացնելու ժամանակակից բնագիտության հիմնական սկզբունքները և հայեցակարգերը, ձևակերպելու բնապահպանական գլոբալ և լոկալ հիմնախնդիրներ,
- Ա2. պարզաբանելու բարձրագույն մաթեմատիկայի հիմնական սկզբունքները, վիճակագրության և մաթեմատիկական մոդելավորման մեթոդները,
- Ա3. ձևակերպելու տեղեկատվական տեխնոլոգիաների հիմունքները և ծրագրավորման հիմնական մեթոդները,
- Ա4. բացատրելու կենսաբանական համակարգերի կազմավորվածության և գործունեության սկզբունքները, նկարագրելու բջիջներում ընթացող կենսասինթեզի ուսումնասիրման ժամանակակից մոտեցումները:

Բ. Գործնական մասնագիտական կարողություններ և հմտություններ

Այս ծրագրի հաջող ավարտին ուսանողն ունակ կլինի.

- Բ1. կիրառելու տեղեկատվության հավաքման, պահպանման և մշակման համակարգչային մեթոդները,
- Բ2. օգտագործելու ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաները կենսաբանության տարբեր բնագավառներում,

- Բ3. իրականացնելու կենսաբանական պարզագույն գործընթացների համակարգչային մոդելավորում,
- Բ4. մշակելու և օգտագործելու ոչ բարդ տարաբնույթ փաթեթներ,
- Բ5. իրականացնելու գործնական աշխատանքներ կլինիկական և արդյունաբերական ոլորտներում,
- Բ6. կիրառելու համակարգչային տարաբնույթ ծրագրերը կենսահամակարգերի կառուցվածքա-ֆունկցիոնալ ուսումնասիրություններում:

Գ. Ընդհանրական (փոխանցելի) կարողություններ և հմտություններ

Այս ծրագրի հաջող ավարտին ուսանողն ունակ կլինի.

- Գ1. կիրառելու գիտելիքները պրակտիկայում, ձևակերպելու և լուծելու խնդիրներ,
- Գ2. տարբեր աղբյուրներից տեղեկատվություն հայթայթելու և վերլուծելու,
- Գ3. բանավոր և գրավոր հաղորդակցվելու մասնագիտական հանրության հետ,
- Գ4. պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը:

Օրինակ 2. «Հայոց լեզու և գրականություն» բակալավրի ծրագիր

Ծրագրի կրթական վերջնարդյունքները

Ա. Մասնագիտական գիտելիք և իմացություն

Այս ծրագրի հաջող ավարտին ուսանողն ունակ կլինի.

- Ա1. ներկայացնելու ժամանակակից հայ բանասիրության հիմնական սկզբունքները, հայեցակարգերը և հիմնախնդիրները,
- Ա2. մեկնաբանելու հայ լեզվաբանական և գրականագիտական արդի ուղղությունները,

Ա3. պարզաբանելու լեզվաբանական և գրականագիտական վերլուծությունները, խմբագրական, թարգմանական և մանկավարժական աշխատանք կատարելու հիմնարար սկզբունքները:

Բ. Գործնական մասնագիտական կարողություններ և հմտություններ

Այս ծրագրի հաջող ավարտին ուսանողն ունակ կլինի.

- Բ1. կիրառելու լեզվական և գրականագիտական փաստերի հավաքման, պահպանման և մշակման մեթոդները,
- Բ2. օգտագործելու ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաները լեզվաբանական և գրականագիտական ուսումնասիրություններ կատարելիս,
- Բ3. խմբագրելու, սրբագրելու և թարգմանելու տարաբնույթ տեքստեր,
- Բ4. ծավալելու ինքնուրույն մասնագիտական գործունեություն, ինչպես նաև իրականացնելու հետազոտական աշխատանքներ մանկավարժական ոլորտում:

Գ. Ընդհանրական (փոխանցելի) կարողություններ և հմտություններ

Այս ծրագրի հաջող ավարտին ուսանողն ունակ կլինի.

- Գ1. տարբեր աղբյուրներից հայթայթելու տեղեկատվություն և վերլուծելու,
- Գ2. բանավոր և գրավոր հաղորդակցվելու հանրության հետ,
- Գ3. մայրենի և որևէ օտար լեզվով տրամաբանորեն ճիշտ, փաստարկված և հստակ կառուցելու բանավոր և գրավոր խոսք:

Օրինակ 3. «Կիրառական կենսաբանություն» մագիստրոսի ծրագիր

Ծրագրի կրթական վերջնարդյունքները

Ա. Մասնագիտական գիտելիք և իմացություն

Այս ծրագրի հաջող ավարտին ուսանողն ունակ կլինի.

- Ա1. ներկայացնելու կենսաէներգետիկայի, սննդի արդյունաբերության և անվտանգության ոլորտներում կենսատեխնոլոգիաների կիրառման տեսական հիմունքները,
- Ա2. լուսաբանելու գենոմի կառուցվածքի և ֆունկցիայի ուսումնասիրության ու վերլուծության արդի մեթոդները,
- Ա3. ներկայացնելու աղտոտիչների կենսական ցիկլերի առանձնահատկությունները և շրջակա միջավայրի պահպանության համար կիրառվող կենսատեխնոլոգիական մեթոդները,
- Ա4. մեկնաբանելու կիրառական կենսաբանության բնագավառում իրավական գործընթացները:

Բ. Գործնական մասնագիտական կարողություններ և հմտություններ

Այս ծրագրի հաջող ավարտին ուսանողն ունակ կլինի.

- Բ1. կիրառելու հետազոտության արդյունքների վերլուծության որակական ու քանակական մեթոդները, կատարելու արտադրական գործընթացների արդյունավետության վիճակագրական վերլուծություն,
- Բ2. կիրառելու ռիսկերի գնահատման մեթոդները հանրային առողջությանը վերաբերող խնդիրների լուծման համար իրականացվող գործընթացներում,
- Բ3. աշխատելու ախտաբանական լաբորատորիաներում և կիրառելու մարդու որոշ հիվանդությունների կլինիկական, արյունաբանական, կենսաքիմիական, հյուսվածքաբանական, քրոմոսոմային և իմունոլոգիական մեթոդները,
- Բ4. մշակելու առողջ սննդակարգի ռազմավարություններ,
- Բ5. աշխատելու սննդի և շրջակա միջավայրի կենսաանվտանգության լաբորատորիաներում և կիրառելու օտարածին կենդանի օրգանիզմների (այդ թվում՝ գենետիկորեն ձևափոխված) հայտնաբերման և քանակական անալիզի ժամանակակից մեթոդները,

- Բ6. կիրառելու սննդում ախտածին մանրէների որակական և քանակական վերահսկողության մոտեցումները և մեթոդները,
- Բ7. աշխատելու ֆերմենտների, մետաբոլիտների, կենսապեստիցիդների արտադրության բնագավառներում և կիրառելու գյուղատնտեսական կենսատեխնոլոգիայի մեթոդները,
- Բ8. մշակելու միջավայրի աղտոտիչների կենսաքայքայման և կենսաբանական վերականգնման նոր եղանակներ և կատարելագործելու գոյություն ունեցողները,
- Բ9. գնահատելու կենսավառելիքի օգտագործման հնարավորությունները, մշակելու կենսավառելիքի ստացման նոր տեխնոլոգիաներ,
- Բ10. իրականացնելու արտոնագրման համար անհրաժեշտ գործընթացներ և մշակելու կենսատեխնոլոգիայի ոլորտի բիզնես պլաններ,
- Բ11. կիրառելու գյուղատնտեսական արտադրության և սննդամթերքի որակի բարձրացմանն ուղղված բույսերի և սննդի ֆունկցիոնալ գենոմիկայի մեթոդները,
- Բ12. վերլուծելու շրջակա միջավայրի պահպանության և բնական ռեսուրսների օգտագործման բնագավառում տարբեր իրավական համակարգերի կիրառման հնարավորությունները:

Գ. Ընդհանրական (փոխանցելի) կարողություններ և հմտություններ

Այս ծրագրի հաջող ավարտին ուսանողն ունակ կլինի.

- Գ1. օգտվելու տեղեկատվության տարատեսակ աղբյուրներից,
- Գ2. վերլուծելու առկա խնդիրները և գնահատելու դրանց լուծման համար անհրաժեշտ ռեսուրսները,
- Գ3. արդյունավետորեն պլանավորելու ժամանակն ու այլ ռեսուրսները,
- Գ4. պատրաստելու գիտական զեկուցումներ, ներկայացնելու հետազոտությունների արդյունքները, վարելու գիտական բանավեճեր,
- Գ5. պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը,
- Գ6. աշխատելու հետազոտական խմբում և ղեկավարելու այն:

Օրինակ 4. «Տեղեկատվական համակարգեր» մագիստրոսի ծրագիր

Ծրագրի կրթական վերջնարդյունքները

Ա. Մասնագիտական գիտելիք և իմացություն

Այս ծրագրի հաջող ավարտին ուսանողն ունակ կլինի.

- Ա1. ներկայացնելու ալգորիթմների, տվյալների մոդելների և հաշվողական համակարգերի վերլուծության և նախագծման տեսական հիմունքները,
- Ա2. նկարագրելու տվյալների պահպանման և պաշտպանվածության հիմնարար սկզբունքները,
- Ա3. պարզաբանելու բաշխված միջավայրերում պրոցեսների նախագծման և իրականացման սկզբունքները,
- Ա4. ընտրելու բիզնես կողմնորոշվածություն ունեցող ծրագրային համակարգերի կառուցման մոտեցումները,
- Ա5. սահմանելու տեղեկատվական համակարգերի օգտագործմանը և կառուցմանն առնչվող իրավական և էթիկական սորմերը:

Բ. Գործնական մասնագիտական կարողություններ և հմտություններ

Այս ծրագրի հաջող ավարտին ուսանողն ունակ կլինի.

- Բ1. կառուցելու արդյունավետ ալգորիթմներ կամ տվյալների պահպանման մոդելներ,
- Բ2. ստեղծելու դինամիկ Web էջեր, տվյալների բազաներ և ցանցային կիրառություններ,
- Բ3. օգտագործելու տարատեսակ մարքեթինգային ռազմավարություններ, ֆինանսական գործիքներ և գործարարական գործընթացներ,
- Բ4. տալու առաջարկներ տրված ոլորտի աշխատանքների արդյունավետությունը բարձրացնելու վերաբերյալ,
- Բ5. կառուցելու նոր կիրառություններ տրված բիզնես ոլորտում օգտագործվող տեղեկատվական համակարգերի համար:

Գ. Ընդհանրական (փոխանցելի) կարողություններ և հմտություններ

Այս ծրագրի հաջող ավարտին ուսանողն ունակ կլինի.

- Գ1. օգտվելու տարատեսակ աղբյուրներից անհրաժեշտ տեղեկատվությունը ստանալու համար,
- Գ2. վերլուծելու փաստերը և անելու հիմնավորված հետևություններ,
- Գ3. ստեղծագործաբար կիրառելու ունեցած գիտելիքները և առաջ քաշելու նորերը,
- Գ4. արդյունավետ կերպով պլանավորելու ժամանակն ու այլ ռեսուրսները,
- Գ5. պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը:

Օրինակ 5. «Եվրոպական ուսումնասիրություններ» մագիստրոսի ծրագիր

Ծրագրի կրթական վերջնարդյունքները

Ա. Մասնագիտական գիտելիք և իմացություն

Այս ծրագրի հաջող ավարտին ուսանողն ունակ կլինի.

- Ա1. ներկայացնելու եվրոպական ինտեգրման տեսության և պատմության հիմունքները,
- Ա2. բնութագրելու եվրոպական մշակութային ինտեգրման ասպեկտները,
- Ա3. թվարկելու միջազգային տնտեսական հարաբերությունների հիմնական ձևերը,
- Ա4. պարզաբանելու ԵՄ կառավարման պետականակենտրոն, բազմակենտրոն և բազմաշերտ մոդելները և եվրոպական ինտեգրման ու կառավարման տեսությունները,
- Ա5. սահմանելու միջազգային տնտեսական կազմակերպությունների գործունեության նպատակները և սկզբունքները,
- Ա6. ձևակերպելու եվրոպական արժեքները և եվրոպական ինտեգրման և եվրոպական հարևանության քաղաքականությունը:

Բ. Գործնական մասնագիտական կարողություններ և հմտություններ

Այս ծրագրի հաջող ավարտին ուսանողն ունակ կլինի.

- Բ1. քննարկելու ԵՄ կառույցների աշխատանքը և եվրոպական մշակույթը,
- Բ2. բազմակողմանիորեն վերլուծելու և գնահատելու ԵՄ մշակութային ինտեգրմանը միտված ռազմավարությունները և նախագծերը,
- Բ3. իրականացնելու ինքնուրույն և խմբային աշխատանքներ, միջուրտային հետազոտությունների վերլուծություն,
- Բ4. ներկայացնելու առաջարկներ մասնագիտական ոլորտի աշխատանքների արդյունավետությունը բարձրացնելու վերաբերյալ,
- Բ5. վերլուծելու Հայաստանի հասարակական-քաղաքական համակարգի եվրոպական գործընթացները:

Գ. Ընդհանրական (փոխանցելի) կարողություններ և հմտություններ

Այս ծրագրի հաջող ավարտին ուսանողն ունակ կլինի.

- Գ1. վերլուծելու առկա խնդիրները և գնահատելու դրանց լուծման հնարավորությունները,
- Գ2. արդյունավետորեն պլանավորելու ժամանակն ու այլ ռեսուրսները,
- Գ3. պատրաստելու զեկույցներ, ներկայացնելու հետազոտական աշխատանքների արդյունքները, վարելու գիտական բանավեճեր,
- Գ4. պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը:

Գործնական առաջադրանքներ

Առաջադրանքներ 9 և 10.

Ձևակերպել 4-5 ընդհանրական (փոխանցելի) կարողություններ և հմտություններ բակալավրի և մագիստրոսի մեկական կրթական ծրագրերի համար:

Ծրագրի ընդհանրական (փոխանցելի) կարողությունների և հմտությունների ձևակերպումը սկսել հետևյալ կերպ՝

«Այս ծրագրի հաջող ավարտին ուսանողն ունակ կլինի ...»,

այնուհետև առանձին կետերով թվարկել համապատասխան կարողությունները և հմտությունները՝ օգտագործելով ակտիվ (գործողություն ցույց տվող) բայեր: Այսպիսի կրթական վերջնարդյունքների ձևակերպման համար խորհուրդ է տրվում օգտվել Բլումի տաքսոնոմիայի **3-6-րդ մակարդակներում** կիրառվող բայերի ցանկից:

Առաջադրանք – 9.

Ձևակերպել _____ մաս-
նագիտության **բակալավրի** կրթական ծրագրի ընդհանրա-
կան (փոխանցելի) կարողությունները և հմտությունները:

Ընդհանրական (փոխանցելի) կարողություններ և հմտություններ.

Այս ծրագրի հաջող ավարտին ուսանողն ունակ կլինի՝

1. _____

2. _____

3. _____

4. _____

5. _____

Առաջադրանք – 10.

Ձևակերպել _____ մասնագիտության **մագիստրոսի** կրթական ծրագրի ընդհանրական (փոխանցելի) կարողությունները և հմտությունները:

Ընդհանրական (փոխանցելի) կարողություններ և հմտություններ.

Այս ծրագրի հաջող ավարտին ուսանողն ունակ կլինի՝

1. _____

2. _____

3. _____

4. _____

5. _____

Առաջադրանքներ 11 և 12.

Ձևակերպել **բակլավրի** կրթական ծրագրի 5-6 մասնագիտական գիտելիք և իմացություն և նույնքան՝ գործնական մասնագիտական կարողություններ և հմտություններ:

Ծրագրի մասնագիտական գիտելիքի և իմացության, ինչպես նաև գործնական մասնագիտական կարողությունների և հմտությունների ձևակերպումը սկսել այսպես՝

«Այս ծրագրի հաջող ավարտին ուսանողն ունակ կլինի ...»,

այնուհետև առանձին կետերով թվարկել նախ մասնագիտական գիտելիքը և իմացությունը, այնուհետև՝ գործնական մասնագիտական կարողությունները և հմտությունները՝ օգտագործելով ակտիվ (գործողություն ցույց տվող) բայեր:

Մասնագիտական գիտելիքի և իմացության ձևակերպման համար խորհուրդ է տրվում օգտվել Բլումի **տաքսոնոմիայի 1-2-րդ**, իսկ գործնական մասնագիտական կարողությունների և հմտությունների ձևակերպման համար՝ **3-6-րդ մակարդակներում** կիրառվող բայերի ցանկից:

Առաջադրանք – 11.

Ձևակերպել _____
մասնագիտության **բակալավրի** կրթական ծրագրի մասնագիտական գիտելիքները և իմացությունը:

Մասնագիտական գիտելիք և իմացություն.

Այս ծրագրի հաջող ավարտին ուսանողն ունակ կլինի՝

1. _____

2. _____

3. _____

4. _____

5. _____

6. _____

Առաջադրանք – 12.

Ձևակերպել _____
մասնագիտության **բակալավրի** կրթական ծրագրի գործնական մասնագիտական կարողությունները և հմտությունները:

Գործնական մասնագիտական կարողություններ և հմտություններ.

Այս ծրագրի հաջող ավարտին ուսանողն ունակ կլինի՝

1. _____

2. _____

3. _____

4. _____

5. _____

6. _____

Առաջադրանքներ 13 և 14.

Ձևակերպել **մագիստրոսի** կրթական ծրագրի 5-6 **մասնագիտական գիտելիք և իմացություն** և նույնքան՝ **գործնական մասնագիտական կարողություններ և հմտություններ**:

Ծրագրի մասնագիտական գիտելիքի և իմացության, ինչպես նաև գործնական մասնագիտական կարողությունների և հմտությունների ձևակերպումը սկսել այսպես՝

«Այս ծրագրի հաջող ավարտին ուսանողն ունակ կլինի ...»,

այնուհետև առանձին կետերով թվարկել նախ մասնագիտական գիտելիքը և իմացությունը, այնուհետև՝ գործնական մասնագիտական կարողությունները և հմտությունները՝ օգտագործելով ակտիվ (գործողություն ցույց տվող) բայեր:

Մասնագիտական գիտելիքի և իմացության ձևակերպման համար խորհուրդ է տրվում օգտվել Բլումի **տաքսոնոմիայի 1-2-րդ**, իսկ գործնական մասնագիտական կարողությունների և հմտությունների ձևակերպման համար՝ **3-6-րդ մակարդակներում** կիրառվող բայերի ցանկից:

Առաջադրանք – 13.

Ձևակերպել _____ մասնագիտության **մագիստրոսի** կրթական ծրագրի մասնագիտական գիտելիքները և իմացությունը:

Մասնագիտական գիտելիք և իմացություն.

Այս ծրագրի հաջող ավարտին ուսանողն ունակ կլինի՝

1. _____

2. _____

3. _____

4. _____

5. _____

6. _____

Առաջադրանք – 14.

Ձևակերպել _____ մասնագիտության **մագիստրոսի** կրթական ծրագրի գործնական մասնագիտական կարողությունները և հմտությունները:

Գործնական մասնագիտական կարողություններ և հմտություններ.

Այս ծրագրի հաջող ավարտին ուսանողն ունակ կլինի՝

1. _____

2. _____

3. _____

4. _____

5. _____

6. _____

1.6. Կրթական ծրագրի կառուցվածքի և բովանդակության որոշումը



Ծրագրի սահմանված նպատակներին և կրթական վերջնարդյունքներին համապատասխան կառուցվածքի և բովանդակության որոշումը կրթական ծրագրի մշակման հաջորդ կարևորագույն քայլն է: Պարզելու համար, թե ինչպիսին պետք է լինի կրթական ծրագրի կառուցվածքը և բովանդակությունը, որպեսզի դրա շրջանակներում ձևավորվեն ծրագրի շրջանավարտների համար նախանշված կրթական վերջնարդյունքները, անհրաժեշտ է լուծել ծրագրի բաղկացուցիչ ուսումնական միավորների (դասընթացներ, ուսումնական մոդուլներ և այլն) ընտրության, փոխկապակցվածության և ներդաշնակեցման խնդիրը:

Կառուցվածքային առումով կրթական ծրագիրը կարող է բաժանվել 3 հիմնական կառուցամասի՝ *ընդհանուր կրթություն*, *հիմնական մասնագիտական կրթություն* և *լրացուցիչ մասնագիտական կրթություն*:



1. *Ընդհանուր կրթության* կառուցամասում առանձնացվում է երեք բաղադրիչ.

- *հիմնարար*. այն ներառում է այնպիսի դասընթացներ, առանց որոնց հնարավոր չէ *հիմնական մասնագիտական կրթության* կառուցամասի դասընթացների ուսումնասիրումը,

- *հումանիդար*, որը ձևավորում է շրջանավարտի հումանիտար, ընդհանուր մշակութային, սոցիալ-անձնային և հաղորդակցման կարողությունները,
- *կազմակերպական*, որը ձևավորում է շրջանավարտի համակարգային, կազմակերպչական-կառավարչական և նման այլ կարողություններ:



2. Հիմնական մասնագիտական կրթության կառուցամաս, որը ներառում է երկու բաղադրիչ.

- *մասնագիտական*, որը ներառում է այնպիսի դասընթացներ, որոնք կազմում են հիմնական կրթական ծրագրի միջուկը և ձևավորում են շրջանավարտի ընդհանուր մասնագիտական (հենքային) և հատուկ մասնագիտական ուղղվածության կարողությունները,
- *ընդհանրական կամ փոխանցելի*, որն ապահովում է գիտելիքների և կարողությունների փոխանցումը հարակից մասնագիտական ոլորտներ:



3. Լրացուցիչ կրթության կառուցամաս, որը ներառում է ոչ պարտադիր, ֆակուլտատիվ և/կամ կամընտրական դասընթացները:

- Կրթական ծրագրի նախագծման առաջին փուլում ծրագրի կառուցվածքի և բովանդակության մշակման համար կարող է ընտրվել նաև ուսումնական դասընթացների խմբավորման այլ տարբերակ, որն ապահովում է դրանց ամբողջականությունը և փոխկապակցվածությունը:

Կրթական ծրագրի ուսումնական պլանի քարտեզը

Կրթական ծրագրի նպատակներին և վերջնարդյունքներին համապատասխան ծրագրի բովանդակություն ստանալու համար հարկավոր է կառուցել և լրացնել ծրագրի ուսումնական պլանի ստորև ներկայացված քարտեզը (տե՛ս նկար 6), որտեղ ուղղահայաց սյունակներում դասավորված են ծրագրի ակնկալվող կրթական վերջնարդյունքները (մասնագիտական և ընդհանրական), որոնք պետք է ձևավորվեն տվյալ շրջափուլի (բակալավրի, մագիստրոսի) կրթական ծրագրի շրջանակներում, իսկ հորիզոնական տողերում՝ այն դասընթացները, ուսումնական մոդուլները (ուսուցման ձևերը և այլն), որոնք կազմում են ծրագրի բովանդակությունը:

Դասընթաց/ ուսումնական մոդուլ	Ծրագրի կրթական վերջնարդյունքները											
	Ա1	Ա2	Ա3	Ա4	Բ1	Բ2	Բ3	Բ4	Բ5	Գ1	Գ2	Գ3
Ուս. մոդուլ 1		+							+		+	
Ուս. մոդուլ 2			+		+		+					
Ուս. մոդուլ 3	+	+		+						+		+
Ուս. մոդուլ 4						+		+				
.....			+						+		+	+
Ուս. մոդուլ n					+					+		

Նկար 6. Ծրագրի կրթական վերջնարդյունքների և բովանդակության համապատասխանության ստուգումը ուսումնական պլանի քարտեզի օգնությամբ


Ծրագրի նպատակների սահմանումից և կրթական վերջնարդյունքների հայտագրումից հետո ծրագիրը մշակող աշխատան-

քային խումբը պետք է կենտրոնանա կրթական ծրագրի բովանդակության ձևավորման (կառուցավորման) վրա՝ ծրագրում ներառելով այնպիսի ուսումնական դասընթացներ, մոդուլներ և ուսուցման ձևեր, որոնք կնպաստեն ծրագրի ակնկալվող կրթական վերջնարդյունքների ձևավորմանը: Այսինքն, ծրագրի բոլոր կրթական վերջնարդյունքների համար պետք է որոշվեն և ընտրվեն այնպիսի դասընթացներ և ուսուցման ձևեր, որոնք կապահովեն ուսանողների կողմից ծրագրի կրթական վերջնարդյունքների հաջող ձեռքբերումը:

Այդ նպատակով՝ կրթական ծրագրի ուսումնական պլանը ներկայացվում է հատուկ քարտեզի միջոցով: Ուսումնական պլանի քարտեզը մի փաստաթուղթ է, որտեղ հստակ արտացոլվում է, թե ինչպես (ինչ ուսումնական մոդուլների օգնությամբ) է ծրագրի ուսումնական պլանն ապահովում ակնկալվող կրթական վերջնարդյունքների ձեռքբերումը, և ինչպես են վերջիններս շաղկապված ծրագրի բաղկացուցիչ ուսումնական մոդուլների հետ:

Ուսումնական պլանի քարտեզի ուղղահայաց սյունակներում դասավորված են ծրագրի շրջանակներում ձևավորվող կրթական վերջնարդյունքները (ըստ համապատասխան դասակարգման՝ խումբ Ա, Բ և Գ), իսկ հորիզոնական տողերում՝ այն դասընթացները, ուսումնական մոդուլները և այլն, որոնք պետք է նպաստեն դրանց ձևավորմանը: Յուրաքանչյուր կրթական վերջնարդյունքի և այն ձևավորող հիմնական դասընթաց(ներ)ի կամ ուսումնական մոդուլ(ներ)ի (որոնց շրջանակներում գնահատվում է այդ վերջնարդյունքների ձեռքբերումը) հատման վանդակում դրվում է «+» կամ «X» նշանը՝ դրանք շաղկապելով միմյանց հետ (սկար 6):

Լրացված քարտեզը պատկերավոր կերպով ցույց է տալիս ծրագրի կրթական վերջնարդյունքների և դասընթացների (ուսումնական մոդուլների) միջև եղած կապերը, այսինքն՝ հստակ առանձնանում են այն ուսումնական մոդուլները, որոնք ապահովում են



կոնկրետ կրթական վերջնարդյունքի ձևավորումը (դասավորված են քարտեզի հորիզոնական տողերում), ինչպես նաև կոնկրետ ուսումնական մոդուլի շրջանակներում ձևավորվող կրթական վերջնարդյունք(ներ)ը (դասավորված են քարտեզի ուղղահայաց սյունակներում):

Մյուս կողմից, ծրագրի կրթական վերջնարդյունքների և նրա բաղկացուցիչ դասընթացների (ուսումնական մոդուլների) միջև վերևում նկարագրված կապն ապահովելու համար պետք է հայտնի լինեն նաև դասընթացների կրթական վերջնարդյունքները (թեկուզև նախնական), որպեսզի հնարավոր լինի ստուգել, թե որ դաընթացը ծրագրի որ վերջնարդյունքի ձևավորմանն է նպաստում: Օրինակ, նկար 7-ում տեսնում ենք, որ ծրագրի 9-րդ ուսումնական մոդուլի չորս կրթական վերջնարդյունքներից (ԿՎ) երկուսը (ԿՎ-1 և ԿՎ-2) նպաստում են ծրագրի Ա7, իսկ մյուս երկուսը (ԿՎ-3 և ԿՎ-4)՝ Բ17 վերջնարդյունքի ձևավորմանը, մինչդեռ 16-րդ ուսումնական մոդուլի հինգ վերջնարդյունքներից միայն երեքն են (ԿՎ-1, ԿՎ-2 և ԿՎ-3) ձևավորում ծրագրի Բ15 վերջնարդյունքը:

Հետևաբար, ծրագրում յուրաքանչյուր դասընթաց կամ ուսումնական մոդուլ պետք է դիտարկվի ոչ թե որպես առանձին ինքնուրույն միավոր, այլ որպես կրթական ծրագրի օրգանական բաղադրիչ:

Դասընթաց/ ուսումնական մոդուլ	Ծրագրի կրթական վերջնարդյունքները		
	Ա7	Բ15	Բ17
Ուսումնական մոդուլ 9 <ul style="list-style-type: none"> • ԿՎ – 1 • ԿՎ – 2 • ԿՎ – 3 • ԿՎ – 4 	+ +		+ +
Ուսումնական մոդուլ 16 <ul style="list-style-type: none"> • ԿՎ – 1 • ԿՎ – 2 • ԿՎ – 3 • ԿՎ – 4 • ԿՎ – 5 	+	+ + +	+

Նկար 7. Ուսումնական մոդուլի կրթական վերջնարդյունքների և կրթական ծրագրի վերջնարդյունքների համապատասխանության ստուգումը

Ծրագրի բովանդակության մշակման գործընթացն ավարտվում է, երբ բոլոր պլանավորված կրթական վերջնարդյունքների ձեռքբերման համար արդեն որոշված/հատկացված են համապատասխան դասընթացներ և/կամ ուսումնական մոդուլներ: Այս քայլին այնուհետև պետք է հաջորդի դասընթացների ներքին կառուցվածքի, թեմաների և բովանդակության ձևավորումը՝ ըստ դասընթացի մակարդակում սահմանված նպատակների և կրթական վերջնարդյունքների:

Գործնական առաջադրանքներ

Առաջադրանք 15

Ընտրել 9-ից 14-րդ առաջադրանքներում **բակալավրի** կրթական ծրագրի համար սահմանված մի քանի վերջնարդյունքներ (4 մասնագիտական գիտելիք և իմացություն, 5 գործնական մասնագիտական կարողություններ և 3 ընդհանրական/փոխանցելի կարողություններ): Այնուհետև **բակալավրի** կրթական ծրագրի ուսումնական պլանում ներառել 5-ից 7-րդ առաջադրանքներում նկարագրված այնպիսի դասընթացներ (կամ ուսումնական մոդուլներ), որոնց կրթական վերջնարդյունքները կապահովեն ծրագրի վերոնշյալ 12 վերջնարդյունքների ձեռքբերումը ուսանողների կողմից:

Առաջադրանքը կատարելու համար օգտվել ստորև ներկայացված երկու ձևաթերթերից:

Առաջադրանք – 15.

Կառուցել _____ մասնագիտության **բակալավրի** կրթական ծրագրի ուսումնական պլանի քարտեզը և լրացնել ուսումնական ծրագրի բովանդակությունը համապատասխան դասընթացներով (ուսումնական մոդուլներով):

Քայլ 1-ին. Թվարկել **բակալավրի** ծրագրի կրթական վերջնադրյունները հետևյալ 3 խմբերում:

Ա. Մասնագիտական գիտելիք և իմացություն		Գ. Ընդհանրական (փոխանցելի) կարողություններ և հմտություններ	
Ա1		Գ1	
Ա2		Գ2	
Ա3		Գ3	
Ա4			
Բ. Գործնական մասնագիտական կարողություններ և հմտություններ			
Բ1			
Բ2			
Բ3			
Բ4			
Բ5			

Առաջադրանք 16

Ընտրել 9-ից 14-րդ առաջադրանքներում **մագիստրոսի** կրթական ծրագրի համար սահմանված մի քանի վերջնարդյունքներ (4 մասնագիտական գիտելիք և իմացություն, 5 գործնական մասնագիտական կարողություններ և 3 ընդհանրական/փոխանցելի կարողություններ): Այնուհետև **մագիստրոսի** կրթական ծրագրի ուսումնական պլանում ներառել 5-ից 7-րդ առաջադրանքներում նկարագրված այնպիսի դասընթացներ (կամ ուսումնական մոդուլներ), որոնց կրթական վերջնարդյունքները կապահովեն ծրագրի վերոնշյալ 12 վերջնարդյունքների ձեռքբերումը ուսանողների կողմից:

Առաջադրանքը կատարելու համար օգտվել ստորև ներկայացված երկու ձևաթերթերից:

Առաջադրանք – 15.

Կառուցել _____ մասնագիտության **մագիստրոսի** կրթական ծրագրի ուսումնական պլանի քարտեզը և լրացնել ուսումնական ծրագրի բովանդակությունը համապատասխան դասընթացներով (ուսումնական մոդուլներով):

Քայլ 1-ին. Թ-վարկել **մագիստրոսի** ծրագրի կրթական վերջնադրույթները հետևյալ 3 խմբերում:

Ա. Մասնագիտական գիտելիք և խնացություն		Գ. Ընդհանրական (փոխանցելի) կարողություններ և հմտություններ	
Ա1		Գ1	
Ա2		Գ2	
Ա3		Գ3	
Ա4			
Բ. Գործնական մասնագիտական կարողություններ և հմտություններ			
Բ1			
Բ2			
Բ3			
Բ4			
Բ5			

1.7. ECTS կրեդիտային համակարգը



Կրեդիտը դասընթացի կամ ուսումնական ծրագրի կրթական վերջնարդյունքների ձեռքբերման համար սովորողից պահանջվող լրիվ (լսարանային և արտալսարանային) աշխատաժամանակի չափման պայմանական միավոր է: Սովորաբար, եվրոպական 1 կրեդիտը (ECTS)¹ համարժեք է ուսանողի 30 ժամ ուսումնական լրիվ բեռնվածությանը (լսարանային և արտալսարանային), իսկ 1 ամերիկյան կրեդիտը՝ ուսանողի շաբաթական 2 ժամ լսարանային բեռնվածությանը:

Կրեդիտային համակարգը ուսումնական գործընթացի կազմակերպման, ակադեմիական կրեդիտների միջոցով ուսումնառության արդյունքների հաշվառման (չափման), կուտակման և փոխանցման համակարգ է, որում համապատասխան որակավորումը շնորհվում է կրթական ծրագրով սահմանված կրեդիտների անհրաժեշտ քանակի կուտակման արդյունքում:

ECTS-ը կրեդիտների փոխանցման և կուտակման համաեվրոպական միասնական կրեդիտային համակարգ է, որտեղ ուսանողի ուսումնական լրիվ բեռնվածությունը մեկ ուստարում հավասար է 60 ECTS կրեդիտի: Այն նպաստում և օժանդակում է Եվրոպական բարձրագույն կրթության տարածքում (ԵԲԿՏ) ուսանողների ձեռք բերած կրթական արդյունքների արժևորմանը, պաշտոնական ճանաչմանը և բուհից բուհ (նաև ծրագրից ծրագիր) տեղափոխմանը:

ECTS համակարգում կրեդիտները և դասընթացի կամ ուսումնական ծրագրի կրթական վերջնարդյունքները սերտորեն

¹ ԿՓԵՀ – Կրեդիտների փոխանցման և կուտակման եվրոպական համակարգ:

փոխկապակցված են. եթե կրթական վերջնարդյունքները ներկայացնում են ուսումնառության արդյունքը, ապա կրեդիտները ցույց են տալիս այդ ուսումնառության աշխատածավալը: Սովորողը դասընթացից վաստակում է կրեդիտ, եթե ձեռք է բերում այդ դասընթացով նախատեսված կրթական վերջնարդյունքները: Մյուս կողմից, դասընթացի կրթական վերջնարդյունքների կազմը (քանակը) գործնականում սահմանափակված է դասընթացին հատկացված կրեդիտներով:

ECTS կրեդիտային համակարգի հիմնադրույթները



ՀՀ բարձրագույն կրթության համակարգի բոլոր կրթական մակարդակներում առկա՝ ուսուցման ուսանողի տարեկան լրիվ (լսարանային, արտալսարանային և ինքնուրույն) ուսումնական բեռնվածությունը կազմում է 1800 ժամ, ինչը համարժեք է 60 ECTS կրեդիտի: Ըստ այդմ, 1 ECTS կրեդիտը համարժեք է ուսանողի 30 ժամ լրիվ

ուսումնական բեռնվածությանը: Սովորաբար, ուսումնական տարվա տևողությունը 40 շաբաթ է, որից առնվազն 30-ը տրամադրվում է ուսումնական պարապմունքներին: Քանի որ ուսանողի շաբաթական լրիվ ուսումնական բեռնվածությունը սովորաբար կազմում է առավելագույնը 40-45 ժամ (5 օր X 8-9 ժամ), ապա այն համարժեք է 1,5 ECTS կրեդիտի:

Բակալավրի կրթական ծրագրի լրիվ աշխատածավալը կազմում է 180-240 ECTS կրեդիտ, իսկ ուսանողի շաբաթական լսարանային բեռնվածությունը՝ 23-30 ժամ: Մագիստրոսի կրթական ծրագրի լրիվ աշխատածավալը կազմում է 60-120 ECTS կրեդիտ, իսկ ուսանողի շաբաթական լսարանային բեռնվածությունը՝ 15-22 ժամ: Ընդ որում, առկա ուսուցման համակարգում սովորող ուսանողը կհսամյակում պետք է ունենա 30 ECTS կրեդիտ ուսումնական բեռնվածություն (10% թույլատրելի շեղումով), իսկ մեկ ուսումնական տարում՝ 60 ECTS կրեդիտ, հեռակա համակարգում՝ համապատասխանաբար 24 և 48 ECTS կրեդիտ: Բացառիկ դեպքերում, բարձր առաջադիմություն ցուցաբերած ուսանողը համապատասխան թույլտվության դեպքում կարող է ստանձնել լրացուցիչ ուսումնական բեռնվածություն:

ECTS կրեդիտային համակարգի կարևորագույն հատկանիշները

- ECTS կրեդիտներով չափվող ուսումնական բեռնվածությունը ներառում է ուսանողի լսարանային, արտալսարանային և ինքնուրույն իրականացվող բոլոր ուսումնական աշխատանքները, այդ թվում՝ մասնակցությունը դասախոսություններին, սեմինար և գործնական պարապմունքներին, լաբորատոր աշխատանքներին և պրակտիկաներին, կուրսային և ավարտական աշխատանքների կատարումը, քննություններին նախապատրաստումը և հանձնումը, անհատական հետազոտությունը և այլն:
- Կրեդիտը չափում է միայն ուսանողի ուսումնական բեռնվածությունը: Այն չի ներկայացնում դասընթացի կամ կրթական մոդուլի բարդության աստիճանը, կրթական ծրագրում նրա մակարդակը կամ ուսանողի կողմից վերջինիս յուրացման աստիճանը (գնահատականը):
- Կրեդիտը ուսանողին տրվում է դասընթացով կամ կրթական մոդուլով նախանշված կրթական վերջնարդյունքների ձեռքբերումը գնահատող շեմային չափանիշները հաղթահարելուց հետո: Այսինքն, ուսանողը վաստակում է դասընթացին հատկացված կրեդիտների ամբողջ քանակը, եթե բավարարում է գնահատման նվազագույն պահանջները:
- ECTS կրեդիտը չափում է ոչ թե դասախոսի ուսումնական գործունեության (դասավանդման) աշխատածավալը, այլ ուսանողի ուսումնական աշխատանքի (ուսումնառության) ծավալը:
- Կրեդիտը չի փոխարինում թվանշանով ուսանողի գնահատմանը, իսկ ուսանողի վաստակած կրեդիտների քանակը չի որոշվում նրա ստացած թվանշանով: Հետևաբար, կրեդիտային և գնահատման համակարգերի միջև փոխադարձ կապ չկա:

Դասընթացին կրեդիտների հատկացումը



Դասընթացի ակնկալվող կրթական վերջնարդյունքների ձևակերպումից հետո հարկավոր է որոշել, թե որքան ժամանակ կպահանջվի միջին վիճակագրական ուսանողից (ընդունակությունների առումով) դրանցից յուրաքանչյուրի ձեռքբերման համար: Հաշվարկները պետք է հիմնված լինեն այն գործոնի վրա, թե տրված ժամանակահատվածում ի՞նչ կկարողանա անել միջին վիճակագրական ուսանողը: Այս պարագայում դասընթացի կրթական վերջնարդյունքների քանակը սահմանափակվում է դրան հատկացված կրեդիտներով: Դասընթացի ակնկալվող կրթական վերջնարդյունքները ձեռք բերելու համար միջին վիճակագրական ուսանողից պահանջվող ժամանակը պայմանավորված է ոչ միայն ուսուցանվող նյութի ծավալով, այլ նաև կրթական միջավայրով (ուսուցման համատեքստով): Ակնկալվող կրթական վերջնարդյունքների ձեռքբերման համար միջին վիճակագրական ուսանողից պահանջվող ժամանակի որոշումը պայմանավորված է հետևյալ գործոններով.


- ✓ դասընթացի բովանդակային առանձնահատկություններ,
- ✓ պարապմունքների իրականացման ձևեր (դասախոսություն, գործնական պարապմունք, լաբորատոր աշխատանք և այլն),
- ✓ դասավանդման, ուսումնառության և գնահատման կիրառվող մեթոդներ,
- ✓ ուսումնական ծրագրի համակարգվածություն,
- ✓ ուսանողի ընդունակություններ, աշխատասիրություն և սկզբնական գիտելիքների մակարդակ,

- ✓ ակադեմիական խմբում ընդգրկված ուսանողների թիվ,
- ✓ ուսուցման ժամանակակից միջոցների կիրառում (օրինակ՝ տեխնոլոգիապես կահավորված լսարաններ և այլն),
- ✓ բուհի առանձնահատկություններ, ձևավորված կրթական ավանդույթներ և այլն:

Այլ խոսքով, միևնույն կրթական վերջնարդյունքները ձեռք բերելու համար ուսանողից պահանջվող ժամաքանակը (որով որոշվում է դասընթացին հատկացվող կրեդիտների քանակը) կարող է փոխվել՝ պայմանավորված տվյալ կրթական միջավայրով: Հետևաբար, ECTS կրեդիտներով արտահայտված ուսումնական բեռնվածության որոշման համար անհրաժեշտ է հաշվի առնել հետևյալ կարևոր գործոնները.

- դասավանդումը կազմակերպված է մեծ խմբերով, թե ավելի անհատականացված ձևերով, քանի որ դասավանդման արդյունքների վրա կարող է ազդել նաև խմբում ուսանողների քանակը, մասնավորապես, գործնական պարապմունքների դեպքում,
- ուսումնական պարապմունքները, որոնց ուսանողը պետք է մասնակցի, դասախոսություններ են, սեմինարներ, թե՛ գործնական պարապմունքներ կամ լաբորատոր աշխատանքներ և այլն,
- էական նշանակություն ունի նաև ուսանողի գնահատման ձևը:

Որպես օրինակ դիտարկենք, թե պարապմունքների ձևով պայմանավորված ինչպես է փոխվում դասընթացին հատկացվող կրեդիտների քանակը, այսինքն՝ թե ինչպես միևնույն լսարանային ժամաքանակի պարագայում տարբեր դասընթացներ կարող են ունենալ տարբեր աշխատածավալ, հետևաբար նաև՝ հատկացվող կրեդիտների տարբեր քանակ: Դիցուք, դասընթացի բնույթով



և բովանդակությամբ պայմանավորված՝ Ա դասընթացի 1 ժամ դասախոսության յուրացման համար ուսանողից պահանջվում է 2 ժամ ինքնուրույն աշխատանք, իսկ 1 ժամ գործնական կամ սեմինար պարապմունքի յուրացման համար՝ 1 ժամ ինքնուրույն աշխատանք: Բ դասընթացի 1 ժամ դասախոսության յուրացման համար ուսանողից պահանջվում է 1 ժամ ինքնուրույն աշխատանք, իսկ 1 ժամ գործնական կամ սեմինար պարապմունքի յուրացման համար 0,75 ժամ ինքնուրույն աշխատանք (բացի նշված տարբերակներից, հնարավոր են նաև այլ միջանկյալ դեպքեր, օրինակ՝ 1 ժամ դասախոսություն համար՝ 1,5 ժամ ինքնուրույն աշխատանք, իսկ 1 ժամ գործնական կամ սեմինար պարապմունքի համար՝ 0,9 ժամ ինքնուրույն աշխատանք և այլն): Եթե, օրինակ, այդ դասընթացներն ունեն միևնույն, շաբաթական 4 լսարանային ժամ ընդհանուր ուսումնական բեռնվածություն, ապա պարապմունքների ձևով պայմանավորված՝ դրանք կիսամյակում կունենան տարբեր ընդհանուր աշխատածավալներ, հետևաբար նաև հատկացվող կրեդիտների տարբեր քանակ, ինչը ներկայացված է աղյուսակ 2-ում և 3-ում (հաշվարկներում կիսամյակի տևողությունն ընդունված է 16 շաբաթ):

Ինչպես կարելի է նկատել աղյուսակներում ներկայացված տվյալներից, ինքնուրույն աշխատանքի համար պահանջվող ժամաքանակն էապես ազդում է միևնույն 4 ժամ լսարանային բեռնվածություն ունեցող Ա և Բ դասընթացների ընդհանուր աշխատածավալների (հետևաբար նաև կրեդիտատարության) վրա: Այսպես, Ա դասընթացի համար շաբաթական 4 ժամ լսարանային բեռնվածության պարագայում, աշխատածավալը, պարապմունքի ձևով պայմանավորված, կարող է փոխվել 3-ից մինչև 6 կրեդիտ (աղյուսակ 2), միջդեռ Բ դասընթացի համար աշխատածավալի տարբերությունն ավելի փոքր է՝ 3-ից մինչև 4 կրեդիտ (աղյուսակ 3):

Աղյուսակ 2. Ա դասընթացին հատկացվող կրեդիտների հաշվարկման օրինակներ

Պարամետրի ձևը	Շաբաթական բեռնվածություն						Կիսամ. բեռն.	Կրեդիտներ	
	Գ.ա.	Գ.ործ.	Լ.աբ.	Լ.աարան.	Ի.նքնուր.	Լ.րիվ	Ժամեր	Ճշգրիտ	Ամբողջ
ա	2	1	1	4	5,5	9,5	152	5,067	5
բ	3	1	0	4	7	11	176	5,867	6
գ	4	0	0	4	8	12	192	6,400	6
դ	0	4	0	4	4	8	128	4,267	4
ե	2	0	2	4	5	9	144	4,800	5
զ	1	1	2	4	4	8	128	4,267	4
է	0	2	2	4	3	7	112	3,733	4
ը	2	2	0	4	6	10	160	5,333	5
թ	0	0	4	4	2	6	96	3,200	3
ժ	3	0	1	4	6.5	10.5	168	5,600	6

Աղյուսակ 3. Բ դասընթացին հատկացվող կրեդիտների հաշվարկման օրինակներ

Պարայ-մունքի ձևը	Շարաթական բեռնվածությունը						Կիսամ. բեռն.	Կրեդիտներ	
	Գ.աւ.	Գ.դրձ.	Լ.ար.	Լ.արան.	Ինքնուր.	Լ.րիվ	Ժամեր	Ճշգրիտ	Ամբողջ
ա	2	1	1	4	3.25	7.25	116	3.867	4
բ	3	1	0	4	3.75	7.75	124	4.133	4
գ	4	0	0	4	4	8	128	4.267	4
դ	0	4	0	4	3	7	112	3.733	4
ե	2	0	2	4	3	7	112	3.733	4
զ	1	1	2	4	2.75	6.75	108	3.600	4
է	0	2	2	4	2.5	6.5	104	3.467	3
ը	2	2	0	4	3.5	7.5	120	4.000	4
թ	0	0	4	4	2	6	96	3.200	3
ժ	3	0	1	4	3.5	7.5	120	4.000	4

Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ լսարանային 1 ժամին հատկացվող ինքնուրույն ժամաքանակի որոշումն ամեննիւն էլ կամայական գործընթաց չէ: Այն պետք է հիմնավորված լինի համապատասխան լսարանային դասաժամի բովանդակությամբ պայմանավորված՝ ուսանողին հանձնարարվող աշխատանքի ծավալով

(ուսումնական գործողություններով), ինչը պարտադիր արտացոլվում է դասընթացի առարկայական ծրագրում: Դասընթացի աշխատածավալը (կրեդիտատարությունը) ուսումնական ծրագրում (պլանում) որոշելիս պետք է հաշվի առնել նաև կրեդիտների և շաբաթական լսարանային ժամերի չափաքանակների հարաբերակցությունները, որոնք ներկայացված են աղյուսակ 2-ում և 3-ում:


Աղյուսակ 4. Դասընթացի (մոդուլի) ինքնուրույն աշխատածավալի որոշման նորմերը

Դասընթաց/մոդուլ			
Շաբաթական լսարանային պարապմունք			Շաբաթական ինքնուրույն աշխատանք
Ժամ	պարապմունքի ձևը		Ժամ
1	դասախոսություն	+	1 – 2 ²
1	սեմինար/գործնական	+	0.75 – 1.5
1	լաբորատոր	+	0.5-1

Այսպիսով, կրթական ծրագրի բաղկացուցիչ դասընթացների և ուսումնական մոդուլների կրեդիտներով արտահայտված աշխատածավալն առաջին մոտավորությամբ կարելի որոշել՝ ելնելով ինքնուրույն աշխատանքին տրամադրվող ժամային համամասնություններից (երաշխավորվող նորմերից), որոնք ներկայացված են աղյուսակ 4-ում:

Դասընթացի (ուսումնական մոդուլի) շաբաթական լրիվ աշխատածավալը որոշվում է ուսանողի լսարանային և ինքնուրույն աշխատանքի ժամաքանակների գումարով: Ելնելով լսարանային պարապմունքի ձևից և համապատասխան ժամաքանակից՝ նախ

² Պահանջվող ինքնուրույն աշխատանքի շաբաթական ժամաքանակը տրված միջակայքում որոշում է դասախոսը՝ հաշվարկելով 1 ժամ լսարանային պարապմունքի ընթացքում մատուցված նյութը յուրացնելու համար ուսանողից պահանջվող իրական ժամաքանակը:



որոշվում է ուսանողից պահանջվող ինքնուրույն աշխատանքի ծավալը: Վերջինիս և լսարանային ժամաքանակի հանրագումարը կազմում է դասընթացի շաբաթական լրիվ աշխատածավալը: Դասընթացին հատկացվող կրեդիտների քանակը որոշվում է՝ շաբաթական լրիվ բեռնվածությունը բազմապատկելով 16 շաբաթով, և ստացված գումարը բաժանելով 30 ժամի:


Այսօր, ՀՀ բուհական համակարգում լայն տարածում են գտել դասընթացին կրեդիտների հատկացման երկու սխալ մոտեցումներ: Լսարանային ժամերի հիման վրա կրեդիտների հատկացման դեպքում դրանք պարզապես բաշխվում են (ի տարբերություն հատկացման վերոհիշյալ մեխանիզմի) ծրագրի դասընթացների միջև՝ ուսումնական պլանում դրանց համար հատկացված լսարանային ժամերին համեմատական: Այս դեպքում սխալմամբ ենթադրվում է, որ լսարանային ժամերի քանակը հիմնականում արտացոլում է տվյալ դասընթացի յուրացման համար ուսանողից պահանջվող ուսումնական բեռնվածությունը: Սակայն, գործնականում, միշտ չէ, որ այս մոտեցումն արդարացի է, քանի որ, ինչպես արդեն նշվեց, լսարանային աշխատանքի միևնույն ժամաքանակը կարող է ուսանողից պահանջել տարբեր ծավալի ինքնուրույն աշխատանք և հանգեցնել տարբեր ուսումնական բեռնվածքների: Հետևաբար, լսարանային (կոնտակտային) ժամերի և դասընթացին հատկացվող կրեդիտների քանակի միջև միարժեք կապ չկա: Օրինակ, մեկ-ժամյա դասախոսությունը ուսանողից կարող է պահանջել 2 ժամ ինքնուրույն աշխատանք, այն դեպքում, երբ երկ-ժամյա սեմինարը կարող է պահանջել մեկշաբաթյա նախապատրաստական աշխատանք: Հետևաբար, ECTS կրեդիտը, որը հիմնված է ուսանողի լրիվ ուսումնական բեռնվածության վրա, պայմանավորված չէ միայն լսարանային ժամերով:

Մեկ այլ դեպքում, հատկացված կրեդիտների քանակը պայմանավորվում է այս կամ այն դասընթացի կարևորությամբ: Դժվար է ընդունել, որ այս կամ այն դասընթացի կարևորությունը կամ բարդությունն ինքնին կարող են հիմք հանդիսանալ կրեդիտների հատ-

կացման համար: Իրականում, հատկացվող կրեդիտների քանակը պայմանավորված է միայն այն աշխատաժամանակով, որն անհրաժեշտ է ուսանողին դասընթացի ակնկալվող կրթական վերջնարդյունքները ձեռք բերելու համար: ECTS կրեդիտն արտահայտում է միայն ժամաքանակով չափվող ուսումնական բեռնվածությունը, իսկ դասընթացի կարևորությունը, բարդությունը, մակարդակը/տեսակը ուսումնական ծրագրում կամ այն վարող դասախոսի պաշտոնական տարակարգը (կամ համբավը) որևէ դերակատարություն չպետք է ունենան կրեդիտների հատկացման գործընթացում: Օրինակ, ներածական բնույթի դասընթացն ուսանողից կարող է պահանջել ինքնուրույն աշխատանքի ավելի մեծ ծավալ, քան ավելի բարձր մակարդակում մատուցվող մեկ այլ մասնագիտական դասընթաց: Միակ ճիշտ մեկնակետն այս հարցում դասընթացն ուսումնասիրող միջին վիճակագրական ուսանողից պահանջվող հիմնավորված ժամաքանակն է, որն անհրաժեշտ է դասընթացի նյութը հաջողությամբ յուրացնելու (այսինքն՝ սահմանված կրթական վերջնարդյունքները ձեռք բերելու) համար:

Կրեդիտներով արտահայտված ուսումնական բեռնվածության իրատեսական հաշվարկը բազմաքայլ և հարաբերականորեն բարդ խնդիր է, որի լուծման համար պրակտիկայում կիրառում են տարբեր մոտեցումներ: Ուսումնական լրիվ բեռնվածության որոշման համար կարևոր են ինչպես դասընթացի լսարանային ժամերի քանակը, այնպես էլ ուսանողի ինքնուրույն աշխատանքի ժամաքանակը: Ուսանողի ինքնուրույն աշխատանքն իր հերթին կարող է ներառել հետևյալ կրթական գործողությունները՝ ուսումնական նյութերի որոնում և ձեռքբերում, նյութի ընթերցում և ուսումնասիրում, ինքնուրույն աշխատանքի/գեկույցի պատրաստում, աշխատանք լաբորատորիայում, նախապատրաստում քննությանը և այլն:

Կրեդիտով արտահայտված ուսումնական բեռնվածության որոշման համար դասախոսը նախ պետք է որոշի դասընթացում ուսումնասիրվող յուրաքանչյուր թեմայի յուրացման համար ուսանողից պահանջվող վերոնշյալ կրթական գործողությունները և



դրանց իրականացման մոտավոր աշխատածավալները՝ արտահայտված ժամերով: Այստեղ առանձնապես կարևոր է դասախոսական աշխատանքի փորձը: Շատ օգտակար է նաև ուսանողների անկետավորումը՝ նյութը յուրացնելու համար նրանցից պահանջվող աշխատաժամանակի գնահատման նպատակով: Այն հնարավորություն է տալիս ստուգելու, թե նյութն ավարտելուց հետո ուսանողները կարողանում են արդյոք հատկացված ժամանակահատվածում կատարել իրենց ուսումնական բեռնվածքը, թե ոչ:


Այսպիսով, դասընթացի (ուսումնական մոդուլի) լրիվ բեռնվածությունը որոշվում է այն խնդիրների ընդհանուր ցանկով, որն ուսանողը պետք է կատարի դասընթացի շրջանակներում: Այդ խնդիրները կամ համապատասխան կրթական գործողությունները սահմանվում են՝ հաշվի առնելով ակնկալվող կրթական վերջնարդյունքները և դրանց հասնելու համար ուսանողից պահանջվող աշխատաժամանակը (բեռնվածությունը):

Ինչպես հատկացնել ECTS կրեդիտը

- ❑ **Ճիշտ մոտեցում.**
 - Ակնկալվող կրթական վերջնարդյունքների ձեռքբերման համար ուսանողից պահանջվող լրիվ աշխատաժամանակի իրատեսական հաշվարկ:
- ❑ **Առաջին սխալ մոտեցում.**
 - Կրեդիտները հատկացվում են լսարանային/կոնսուլտային ժամերին համամասնաբար: Սակայն, 1 լսարանային ժամը պարապմունքի և դասավանդման ձևով, ինչպես նաև վերևում նկարագրված այլ գործոններով պայմանավորված՝ պահանջում է տարբեր ծավալի ինքնուրույն աշխատանք:
- ❑ **Մեկ այլ սխալ մոտեցում.**
 - Կրեդիտների հատկացման համար հիմք է ընդունվում դասընթացի (ուսումնական մոդուլի) բարդությունը, կարևորությունը կամ մակարդակը ուսումնական ծրագրում, ինչպես նաև դասախոսի որակավորումը կամ կոչումը:

Այսպիսով, ելնելով վերոնշյալից, առաջարկվում է կրթական ծրագրի ուսումնական բեռնվածության որոշման հետևյալ մեթոդաբանությունը, որը հիմնված է մի շարք քայլերի հաջորդական իրականացման վրա.


1. Կրթական ծրագրի բովանդակությունը կազմող դասընթացների (ուսումնական մոդուլների) կազմի որոշում՝ ելնելով 1.6 բաժնում նկարագրված մեթոդաբանությունից:

- 
2. Յուրաքանչյուր դասընթացի շրջանակում նախատեսվող կրթական գործողությունների պլանավորում և դրանց կատարման համար ուսանողից պահանջվող աշխատաժամանակի որոշում:
 3. Որոշված աշխատաժամանակի (ուսումնական բեռնվածության) ստուգում և ճշգրտում՝ դասընթացն ուսումնասիրող ուսանողների հարցման (անկետավորման) միջոցով:
 4. Ուսումնական ծրագիրը կազմող բոլոր դասընթացների ճշգրտված աշխատաժամակների արտահայտում կրեդիտներով՝ հաշվարկված ժամաքանակը բաժանելով 30-ի:
 5. Դասընթացներին հատկացված կրեդիտների հանրագումարը համեմատվում է տվյալ կրթական մակարդակի համար սահմանված ուսումնական բեռնվածության հետ (180-240 կրեդիտ՝ բակալավրի և 60-120 կրեդիտ՝ մագիստրոսի կրթական ծրագրերի համար):
 6. Կրեդիտների հատկացման գործընթացն ավարտվում է, եթե դասընթացների և ուսումնական այլ մոդուլների կրեդիտների հանրագումարը մոտ է տվյալ կրթական ծրագրի համար վերևում սահմանված կրեդիտների թույլատրելի արժեքին: Սա նշանակում է, որ ծրագրի ուսումնական լրիվ բեռնվածությունն իրատեսական է՝ միջին վիճակագրական ուսանողի իրականացման տեսանկյունից:
 7. Հակառակ դեպքում վերանայվում է առանձին դասընթացների և մոդուլների կրթական վերջնարդյունքների ցանկը (այս դեպքում գործողությունների հետագա ընթացքը վերսկսվում է 2-րդ քայլից) կամ փոխվում է ծրա-

գիրը կազմող դասընթացների կազմը (այս դեպքում գործողությունների հետագա ընթացքը վերսկսվում է 1-ին քայլից):

Վերոնշյալ քայլերի կատարման ընթացակարգը ներկայացված է նկար 8-ում:

Նկարագրված գործընթացում հիմնական դերակատարությունը վերապահված է ծրագիրն իրականացնող դասախոսական կազմին, որը որոշում է յուրաքանչյուր դասընթացով (ուսումնական մոդուլով) ակնկալվող կրթական գործողությունների կատարման համար պահանջվող ժամաքանակը: Այդ ժամաքանակով արտահայտված ընդհանուր բեռնվածությունը հիմք է հանդիսանում դասընթացին հատկացվող կրեդիտների որոշման համար: Այս աշխատանքը կատարելու համար դասախոսական կազմին առաջարկվում է դասընթացի (կրթական մոդուլի) պլանավորման ձևաթերթը (տե՛ս աղյուսակ 5), որը լրացնում է տվյալ դասընթացը վարող դասախոսը: Այն պարունակում է դասընթացի վերաբերյալ հիմնական տեղեկատվությունը, ակնկալվող կրթական վերջնարդյունքները, որոնք ուսանողը պետք է ձեռք բերի դասընթացի ավարտին, դրանք ձեռք բերելու համար նախատեսված կրթական գործողությունների ցանկը, ինչպես նաև ուսանողի գնահատման ձևերը:




Նկար 8. Կրթական ծրագրի լրիվ աշխատաձևավալի որոշման և ստուգման ընթացակարգ

Գասընթացի (ուսումնական մոդուլի) բեռնվածությունը պայմանավորված է ակնկալվող կրթական վերջնաորոշումները ձեռք բերելու համար ուսանողից պահանջվող կրթական գործողություն-

ների բնույթով և քանակով: Այդ բեռնվածքը չափվում է ժամաքանակով (օրինակ՝ 5 կրեդիտ ծավալով դասընթացը ենթադրում է մոտավորապես 150 ժամ ուսանողի ինքնուրույն աշխատանք): Յուրաքանչյուր դասընթաց (մոդուլ) պահանջում է որոշակի կրթական գործողություններ, որոնց կազմը, ինչպես արդեն նշվեց, որոշվում է՝ հաշվի առնելով հետևյալ գործոնները.

- Ուսուցման մեթոդները (դասավանդման եղանակները). դասախոսություն, գործնական կամ սեմինար պարապմունք, լաբորատոր աշխատանք, գիտական սեմինար, խորհրդատվությունների անցկացում, արտադրական կամ ուսումնական պրակտիկա, դաշտային աշխատանք, հետազոտություն, հաշվարկային կամ նախագծային աշխատանք և այլն:
- Ուսումնառության մեթոդները (ուսանողի կրթական գործողությունները). հաճախում դասապարապմունքներին, ուսումնական նյութի և լրացուցիչ գրականության հայթայթում և ընթերցում, առաջադրանքների կատարում, տնային աշխատանքների պատրաստում, ինքնուրույն աշխատանք կամ հետազոտություն, լսարանային լուսացուցադրության պատրաստում և այլն:
- Գնահատման ձևերը. բանավոր կամ գրավոր քննություն, բանավոր գեկույց, թեստ, էսսե կամ գրավոր աշխատանք, կուրսային կամ ավարտական աշխատանք, հաշվետվություն պրակտիկայի կամ դաշտային աշխատանքի վերաբերյալ, ընթացիկ գնահատումներ և այլն:

Առաջին փուլում (դասընթացը մշակելիս կամ վերջինիս իրականացումը պլանավորելիս) դասախոսը որոշում է այն ժամաքանակը, որն անհրաժեշտ է ուսանողին դասընթացի (ուսումնական մոդուլի) շրջանակներում պլանավորված կրթական գործողությունները կատարելու համար: Ժամաքանակով չափված ուսումնական բեռնվածությունն այնուհետև վեր է ածվում կրեդիտների՝ բաժանե-



լով վերջինս 30-ի և արդյունքը կլորացնելով մինչև ամենամոտ ամբողջ թիվը (օրինակ՝ 160 ժամ/ 30=5,33 ≈5կրեդիտ):

Հաջորդ փուլում (դասընթացի մատուցման ընթացքում կամ արդյունքում) կատարվում է արդեն որոշված ուսումնական բեռնվածության ճշգրտում: Վերջինս իրականացվում է ուսանողների անկետավորման (հարցման) միջոցով՝ պարապմունքների ընթացքում կամ դասընթացի ավարտին: Դասընթացի (ուսումնական մոդուլի) բեռնվածության ճշգրտման անկետայի ձևաթերթը, որը լրացնում է ուսանողը, ներկայացված է աղյուսակ 6-ում: Այն նախատեսված է դասընթացի նյութի յուրացման համար ուսանողի ծախսած փաստացի ժամաքանակի գրանցման համար և հնարավորություն է տալիս ստուգելու, թե հաշվարկային բեռնվածությունն իրականում համապատասխանում է փաստացի ծախսված ժամանակին, թե՛ ոչ: Ուսանողները ստանում են այս ձևաթերթը, որում լրացված չէ միայն կրթական տարբեր գործողությունների համար նախատեսված ժամանակը, լրացնում են այն և հանձնում դասախոսին: Ձևաթերթի օգտագործման շնորհիվ նրանք լրացուցիչ տեղեկացվում են նաև դասընթացի (ուսումնական մոդուլի) ակնկալվող կրթական վերջնարդյունքների կազմի և կրթական գործողությունների վերաբերյալ:

Աղյուսակ 5. Դասընթացի պլանավորման և ուսանողի աշխատաժամանակի հաշվարկման ձևաթերթ (լրացնում է դասախոսը)

ԴԱՍԸՆԹ-ԱՑԻ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՁԵՎԱԹԵՐԹ (լրացնում է դասախոսը)

Կրթական ծրագրի անվանումը.			
Դասընթացի անվանումը.			
Դասընթացի տեսակը. ընդհանուր /մասնագիտական /ընտրովի			
Դասընթացի մակարդակը. բակալավր /մագիստրոս /հեպատոլոգ			
Նախապայմաններ.			
ECTS կրեդիտների քանակը. 5 ECTS (ուսանողի միջին աշխատաժամանակը՝ 150)			
Ձևավորվող կրթական վերջնարդյունքներ	Կրթական գործողություններ	Ուսանողի հաշվարկային աշխատաժամանակ (ժամ)	Գնահատում
Կրթական արդյունք-1	Կրթ. գործողություն-1.1	8,5	Գրավոր աշխատանքի ներկայացում 30%
	Կրթ. գործողություն-1.2	12,5	
	Կրթ. գործողություն-1.3	6,5	
	Կրթ. գործողություն-1.4	14,0	
	Կրթ. գործողություն-1.5	11,5	
Կրթական արդյունք-2	Կրթ. գործողություն-2.1	3,5	Լուսացուցադրություն 20%
	Կրթ. գործողություն-2.2	15,5	
	Կրթ. գործողություն-2.3	6,0	
	Կրթ. գործողություն-2.4	9,5	
Կրթական արդյունք-ճ	Կրթ. գործողություն-ճ.1	12,5	Գրավոր քննություն 50%
	Կրթ. գործողություն-ճ.2	4,0	
	Կրթ. գործողություն-ճ.3	5,5	
	
	
Ընդամենը՝		150	100%

Աղյուսակ 6. Դասընթացի փաստացի աշխատաժամանակի ճշգրտման ձևաթերթ (լրացնում է ուսանողը)

**ԴԱՍԸՆԹԱՑԻ
ԲԵՌՆՎԱԾՈՒԹՅԱՆ ՃՇԳՐՏՄԱՆ
ՁԵՎԱԹԵՐԹ
(լրացնում է ուսանողը)**

Կրթական ծրագրի անվանումը.			
Դասընթացի անվանումը.			
Դասընթացի տեսակը. ընդհանուր /մասնագիտական/ընտրովի			
Դասընթացի մակարդակը. բակալավր /մագիստրոս/հեղափոխող			
Նախապայմաններ.			
ECTS կրեդիտների քանակը. 6 ECTS (ուսանողի միջին աշխատաժամանակը՝ 180 ժամ)			
Ձևավորվող կրթական վերջնարդյունքներ	Կրթական գործողություններ	Ուսանողի հաշվարկային աշխատաժամանակ (ժամ)	Գնահատում
Կրթական արդյունք-1	Կրթ. գործողություն-1.1	12,5	Գրավոր աշխատանքի ներկայացում 30%
	Կրթ. գործողություն-1.2	15,5	
	Կրթ. գործողություն-1.3	7,5	
	Կրթ. գործողություն-1.4	16,0	
	Կրթ. գործողություն-1.5	13,5	
Կրթական արդյունք-2	Կրթ. գործողություն-2.1	5,5	Լուսացուցադրություն 20%
	Կրթ. գործողություն-2.2	16,0	
	Կրթ. գործողություն-2.3	7,5	
	Կրթ. գործողություն-2.4	12,0	
Կրթական արդյունք-ռ	Կրթ. գործողություն-ռ.1	15,5	Գրավոր քննություն 50%
	Կրթ. գործողություն-ռ.2	6,0	
	Կրթ. գործողություն-ռ.3	7,5	
	
	
Ընդամենը՝		180	100%

Դասընթացին հատկացված կրեդիտների (ուսումնական բեռնվածության) և (կամ) կրթական գործողությունների ճշգրտում է պահանջվում բոլոր այն դեպքերում, երբ ուսանողների անկետավորման արդյունքում ստացված կրեդիտների միջին թվաքանականը զգալիորեն տարբերվում է (10%-ից ավելի) հաշվարկային եղանակով ստացվածից: Սա կարող է պահանջել նաև ծրագրի դասընթացների (ուսումնական մոդուլների) ցանկի և (կամ) կրթական վերջնարդյունքների վերանայում՝ տվյալ կրթական ծրագրի համար սահմանված կրեդիտների ընդհանուր քանակը (180-240 ECTS կրեդիտ բակալավրի և 60-120՝ մագիստրոսի ծրագրերի համար) պահպանելու նպատակով:

Օրինակներ

Ստորև ներկայացվում են մի շարք դասընթացների և այլ ուսումնական մոդուլների աշխատածավալների հաշվարկման օրինակներ:

Օրինակ 1. Դասընթացի մոդուլի աշխատածավալի հաշվարկ:

Դիցուք շաբաթական ունենք 4 լսարանային ժամով իրականացվող դասընթացի մոդուլ, որի համար նախատեսված է շաբաթական 2 ժամ դասախոսություն, 1 ժամ գործնական պարապմունք և 1 ժամ լաբորատոր աշխատանք: Մոդուլի բովանդակությունից և բնույթից ելնելով՝ դասախոսը կատարել է նախնական հաշվարկ և որոշել, որ 1 ժամ դասախոսության նյութը յուրացնելու համար ուսանողից կպահանջվի 2 ժամ ինքնուրույն աշխատանք, 1 ժամ գործնական նյութի համար 1 ժամ ինքնուրույն աշխատանք, իսկ 1 ժամ լաբորատոր աշխատանքի համար՝ 0,5 ժամ: Արդյունքում դասընթացի մոդուլի ընդհանուր աշխատածավալը կկազմի.

Աշխատածավալ = 4 լս. ժամ. + 2 դաս.. x 2 ժամ. + 1 գործ.. x 1 ժամ.+ 1 լաբ.. x 0.5 ժամ. = 4 լս. ժամ. + 5,5 ինք. ժամ = 9,5 ժամ/շաբաթական:

Կիսամյակի համար կունենանք՝ 9,5 ժամ/շաբ.. x 16 շաբ. = 152 ժամ:

Ուստի, դասընթացի մոդուլին հատկացվող կրեդիտների քանակը կկազմի.

$$152 \text{ ժամ}/30 = 5,07 \approx 5 \text{ ECTS կրեդիտ:}$$

Ստացված կրեդիտների քանակն այնուհետև ճշգրտվում է ուսանողների անկետավորման միջոցով՝ մոդուլի իրականացման ավարտին:

Օրինակ 2. Դասընթացի աշխատածավալի հաշվարկ:

Դիցուք շաբաթական ունենք 6 լսարանային ժամով 2 կիսամյակների ընթացքում իրականացվող դասընթաց, որի համար նախատեսված է շաբաթական 3 ժամ դասասլխոսություն, 2 ժամ գործնական պարապմունք և 1 ժամ լաբորատոր աշխատանք: Դասընթացի բովանդակությունից և բնույթից ելնելով՝ դասասլխոսը կատարել է նախնական հաշվարկ և որոշել, որ 1 ժամ դասասլխոսության նյութը յուրացնելու համար ուսանողից կպահանջվի 1,5 ժամ ինքնուրույն աշխատանք, 1 ժամ գործնական նյութի համար՝ 1,25 ժամ ինքնուրույն աշխատանք, իսկ 1 ժամ լաբորատոր աշխատանքի համար՝ 0,75 ժամ: Արդյունքում դասընթացի ընդհանուր աշխատածավալը կկազմի.

$$\text{Աշխատածավալ} = 6 \text{ լս. ժամ.} + 3 \text{ դաս.} \times 1,5 \text{ ժամ.} + 2 \text{ գործ.} \times 1,25 \text{ ժամ.} + 1 \text{ լաբ.} \times 0,75 \text{ ժամ.} = 6 \text{ լս. ժամ.} + 7,75 \text{ ինք. ժամ.} = 13,75 \text{ ժամ/շաբաթական:}$$

Ուսումնական տարվա համար կունենանք՝ 13,75 ժամ/շաբ. $\times 16$ շաբ. $\times 2$ կիսամյակ = 440 ժամ:

Ուստի, դասընթացին հատկացվող կրեդիտների քանակը կկազմի.

$440 \text{ ժամ.} / 30 = 14,67 \approx 15 \text{ ECTS կրեդիտ:}$

Նորից, ստացված կրեդիտների քանակն այնուհետև ճշգրտվում է ուսանողների անկետավորման միջոցով՝ դասընթացի իրականացման ավարտին:

Օրինակ 3. Ուսումնական այլ մոդուլների աշխատածավալների հաշվարկ:

Քանի որ համաձայն կրեդիտային համակարգի հիմնական նորմերի (տե՛ս սույն բաժնի երկրորդ ենթաբաժինը)՝ ուսանողի շաբաթական լրիվ ուսումնական բեռնվածությունը հավասար է 1,5 ECTS կրեդիտի, ուստի.

- Կուրսային աշխատանքը, որը կատարվում է 1,5 շաբաթում, գնահատվում է 1,5 շաբաթ \times 1,5 կրեդիտ = 2,25 \approx 2 ECTS կրեդիտ:
- 3 շաբաթյա պրակտիկային հատկացվող կրեդիտների քանակը կազմում է՝ 3 շաբաթ \times 1,5 կրեդիտ = 4,5 \approx 4 կամ 5 ECTS կրեդիտ:
- Ուսումնական պարապմունքներից ազատ կիսամյակում կատարվող ավարտական աշխատանքին հատկացվող կրեդիտների քանակը կազմում է՝ 16 շաբաթ \times 1,5 կրեդիտ = 24 ECTS կրեդիտ:
- Երկու կիսամյակում կատարվող մագիստրոսական թեզը գնահատվում է (4+16) շաբաթ \times 1,5 կրեդիտ = 30 ECTS կրեդիտ, եթե առաջին կիսամյակում թեզը կատարվել է ուսումնական պարապմունքներին զուգահեռ, իսկ երկրորդ կիսամյակում՝ ուսումնական պարապմունքների բացակայության պայմաններում:

Ստացված արդյունքները նորից ճշգրտվում են ուսանողների անկետավորման միջոցով՝ տվյալ մոդուլի կատարման վերջում:

Գործնական առաջադրանքներ

Առաջադրանք 17

Օգտվելով **բակալավրի** կրթական ծրագրի դասընթացի/ ուսումնական մոդուլի համար սահմանված կրթական վերջնարդյունքների ցանկից, դասավանդման, ուսումնառության և գնահատման ընտրված ձևերից ու մեթոդներից՝ լրացնել ստորև տրամադրված ձևաթերթը՝ յուրաքանչյուր կրթական վերջնարդյունքի ձեռքբերման համար որոշելով ուսանողից պահանջվող կրթական գործողություններն ու դրանց կատարման համար ծախսվող ժամաքանակը:

Որոշել դասընթացի հաջող յուրացման համար ուսանողից պահանջվող լրիվ (լսարանային և արտալսարանային) աշխատաժամանակը՝ գումարելով ստացված առանձին ժամաքանակները, այնուհետև որոշել դասընթացին հատկացվող ECTS կրեդիտների քանակը՝ լրիվ աշխատաժամանակը բաժանելով 30-ի:

Առաջադրանք - 17.

Որոշել **բակալավրի** ծրագրի _____ դասընթացի հաջող յուրացման համար ուսանողից պահանջվող լրիվ աշխատաժամանակը (ժամ) և դասընթացին հատկացվող կրեդիտների քանակը (ECTS կրեդիտ):

Դասընթացի անվանումը՝		
Ակնկալվող կրթական վերջնարդյունքները	Կրթական գործողությունները	Ուսանողի հաշվարկային աշխատաժամանակը (ժամ)
1.	1.1	
	1.2	
	1.3	
	1.4	
2.	2.1	
	2.2	
	2.3	
	2.4	
3.	3.1	
	3.2	
	3.3	
	3.4	
4.	4.1	
	4.2	
	4.3	
	4.4	
Ընդամենը՝		
ECTS կրեդիտների քանակը՝ _____ ժամ/30 = _____ կրեդիտ		

Առաջադրանք 18

Օգտվելով **մագիստրոսի** կրթական ծրագրի դասընթացի/ ուսումնական մոդուլի համար սահմանված կրթական վերջնարդյունքների ցանկից, դասավանդման, ուսումնառության և գնահատման ընտրված ձևերից ու մեթոդներից՝ լրացնել ստորև տրամադրված ձևաթերթը՝ յուրաքանչյուր կրթական վերջնարդյունքի ձեռքբերման համար որոշելով ուսանողից պահանջվող կրթական գործողություններն ու դրանց կատարման համար ծախսվող ժամաքանակը:

Որոշել դասընթացի հաջող յուրացման համար ուսանողից պահանջվող լրիվ (լսարանային և արտալսարանային) աշխատաժամանակը՝ գումարելով ստացված առանձին ժամաքանակները, այնուհետև որոշել դասընթացին հատկացվող ECTS կրեդիտների քանակը՝ լրիվ աշխատաժամանակը բաժանելով 30-ի:

Առաջադրանք - 18.

Որոշել մագիստրոսի ծրագրի _____ դասընթացի հաջող յուրացման համար ուսանողից պահանջվող լրիվ աշխատաժամանակը (ժամ) և դասընթացին հատկացվող կրեդիտների քանակը (ECTS կրեդիտ):

Դասընթացի անվանումը՝ _____		
Ակնկալվող կրթական վերջնարդյունքները	Կրթական գործողությունները	Ուսանողի հաշվարկային աշխատաժամանակը (ժամ)
1.	1.1	
	1.2	
	1.3	
	1.4	
2.	2.1	
	2.2	
	2.3	
	2.4	
3.	3.1	
	3.2	
	3.3	
	3.4	
4.	4.1	
	4.2	
	4.3	
	4.4	
Ընդամենը՝		
ECTS կրեդիտների քանակը՝ _____ ժամ/30 = _____ կրեդիտ		

ԱՄՓՈՓՈՒՄ



Այս գլխում ներկայացված կյուրթը յուրացնելուց հետո դուք կկարողանաք.

1. Սահմանել կրթական ծրագրի նպատակները:
2. Սահմանել դասընթացի նպատակները:
3. Սահմանել, թե ինչ է կրթական վերջնարդյունքը:
4. Բացատրել իմացության ձևերի դասակարգման Բլումի տաքսոնոմիան:
5. Կիրառել Բլումի տաքսոնոմիան կրթական վերջնարդյունքներ գրելիս:
6. Թվարկել կրթական վերջնարդյունքների հիմնական բնութագրերը:
7. Ձևակերպել պատշաճ և հստակ կրթական վերջնարդյունքներ դասընթացի համար:
8. Ձևակերպել պատշաճ և հստակ կրթական վերջնարդյունքներ արդյունահեն կրթական ծրագրի համար:
9. Թվարկել կրթական վերջնարդյունքների օգտագործման առավելությունները:
10. Որոշել կրթական ծրագրի կառուցվածքը և բովանդակությունը:
11. Կառուցել կրթական ծրագրի ուսումնական պլանի քարտեզը:
12. Նախագծել և մշակել արդյունահեն կրթական ծրագրեր:
13. Ընտրել կրթական վերջնարդյունքներին համապատասխան արդյունավետ դասավանդման և ուսումնառության ձևեր ու մեթոդներ:

14. Սահմանել, թե ինչ է ECTS կրեդիտը և ներկայացնել վերջինիս հիմնադրույթներն ու նորմերը:
15. Հատկացնել ECTS կրեդիտներ դասընթացներին և ուսումնական մոդուլներին:
16. Կազմել իրատեսական աշխատածավալով ուսումնական ծրագրեր:




ԳԼՈՒԽ 2. ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ, ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ



Արդյունահեն կրթական ծրագրերի և դասընթացների մշակմանը պետք է հետևի դրանց արդյունավետ իրականացումը լսարանում: Վերջինս ենթադրում է, որ ուսանողների համար պետք է ստեղծվեն համապատասխան պայմաններ և իրականացվեն գործողություններ կրթական ծրագրով և նրա բաղկացուցիչ դասընթացներով ու այլ ուսումնական մոդուլներով սահմանված կրթական վերջնարդյունքները հաջողությամբ ձեռք բերելու և ցուցաբերելու համար:

2.1. Դասավանդման և ուսումնառության մեթոդները




Կրթական վերջնարդյունքների հիման վրա ծրագրերի մշակման և իրականացման հիմնորոշ բաղադրիչներից է դասավանդման և ուսումնառության համարժեք մոտեցումների և մեթոդների ընտրությունը: Հարկ է նշել, որ համադրելի կրթական վերջնարդյունքների կարելի է

հասնել դասավանդման և ուսումնաստության տարբեր ձևերի, մեթոդների և տեխնոլոգիաների կիրառմամբ: Կրթական ծրագրում դասավանդման և ուսումնաստության մոտեցումների և մեթոդների ընտրության արդյունավետության գնահատումը պետք է կատարվի այն դիտանկյունից, թե որքանով են դրանք նպաստում ուսանողների կողմից ակնկալվող կրթական վերջնարդյունքների ձեռքբերմանը: Ակնկալվող կրթական վերջնարդյունքներն ուսանողների կողմից հաջողությամբ ձեռք բերելու համար ևս հարկավոր է դիտարկել, թե ուսումնաստության ինչպիսի ձևեր է պետք ընտրել: Ընտրված ուսումնաստության ձևերից կրխեն նաև դասավանդման այն մեթոդները, որոնք առավելագույնս կնպաստեն և կօժանդակեն ուսումնաստության հաջող իրականացմանը: Դասավանդման հիմնական նպատակը պետք է լինի ուսանողների համար լիարժեք հնարավորությունների ստեղծումը, որպեսզի նրանք հաջողությամբ ձեռք բերեն ակնկալվող գիտելիքները, կարողությունները և հմտությունները:

Ուսումնաստության և դասավանդման մեթոդները պետք է.

- Լավագույնս նպաստեն կրթական վերջնարդյունքներով ձևակերպված գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձեռքբերմանը ուսանողների կողմից:
- Հաշվի առնեն ուսանողների գիտելիքների և ընդունակությունների տարբեր մակարդակները և լինեն բազմաձև:
- Խթախուսեն ուսանողների ակտիվությունը, ինքնուրույնությունը և տրամադրեն խմբային աշխատանքի հնարավորություններ՝ որտեղ այն հնարավոր է:



Նկար 9. Դատընթացի (ուսումնական մոդուլի) մշակման ընթացակարգը

Ինչպես արդեն նշվեց, դատընթացը կամ ուսումնական մոդուլը մշակելիս անհրաժեշտ է նախևառաջ սահմանել վերջինիս նպատակը և ձևակերպել կրթական վերջնարդյունքները: Երբ կրթական վերջնարդյունքներն արդեն ձևակերպված են, հնարավոր է արդեն սահմանել համապատասխան գնահատման չափանիշներ, որոնք կօգտագործվեն ուսանողի կրթական ձեռքբերումների մակարդակը չափելու համար: Այնուհետև պետք է ընտրել գնահատ-

ման այնպիսի ձևեր և մեթոդներ, որոնք ուսանողին հնարավորություն կտան լավագույնս դրսևորելու ձեռքերած կրթական վերջնարդյունքները: Հաջորդ քայլով պետք է ընտրել ուսումնասության և դասավանդման համապատասխան այնպիսի ձևեր և մեթոդներ, որոնք ուսանողին հնարավորություն կտան հաջողությամբ ձեռք բերելու դասընթացի ակնկալվող կրթական վերջնարդյունքները: Վերջին քայլը դասընթացի կամ ուսումնական մոդուլի բովանդակության կազմումն է: Դասընթացի (ուսումնական մոդուլի) մշակման նկարագրված ընթացակարգը ներկայացված է նկար 9-ում:

Այսպիսով, դասընթացի կամ այլ մոդուլի յուրաքանչյուր կրթական վերջնարդյունքի պետք է համապատասխանի դասավանդման և ուսումնասության որոշակի ձև կամ մեթոդ:

Կրթական վերջնարդյունքների տեսակները



Ինչ պետք է գիտենա և կարողանա անել ուսանողը.

- Գիտելիք
- Իմացություն
- Կիրառություն
- Վերլուծություն
- Գնահատում
- Սինթեզ
- Այլ կարողություններ
- Տարբեր հմտություններ

Ներկայումս կիրառվում են դասավանդման ամենատարբեր ձևեր, մեթոդներ և տեխնոլոգիաներ: Դրանց մոտավոր ցանկն ընդգրկում է ոչ միայն դասախոսություններ, գործնական ու սեմինար պարապմունքներ, լաբորատոր աշխատանքներ, այլև՝ խորհրդատվություններ, հետազոտական սեմինարներ, խնդիրների լուծումներ որոնելու աշխատաշրջաններ, վարպետ-դասեր, պրակտիկաներ և դաշտային աշխատանքներ, խմբային նախագծային աշխատանք, ներգրավում հետազոտական աշխատանքներում, աշխատանքային իրավիճակների նմանակումներ, ինտերակտիվ հեռավար ուսուցում և այլն:

Սրանք բոլորը, սակայն, ներկայացնում են ընդամենը ուսուցման տարատեսակներ (պարապմունքի ձևեր), քանի որ դրանց գործնական կիրառությունը կարող է տարբեր լինել ոչ միայն տարբեր դասախոսների, այլ նաև միևնույն դասախոսի պրակտիկայում՝ ելնելով պարապմունքի նպատակից և ակնկալվող կրթական արդյունքներից: Հետևաբար, դասավանդման և ոչ մի եղանակի անվանում, ինքնըստինքյան, ամբողջովին չի արտացոլում այն, ինչ դասախոսը իրականում կատարում է լսարանում:

Դասավանդման մեթոդները



Ինչ է անում դասախոսը լսարանում.

- Դասախոսություններ
- Գործնական պարապմունքներ
- Սեմինար պարապմունքներ
- Քննարկումներ
- Լաբորատոր աշխատանքներ
- Դաշտային աշխատանքներ
- Իմբրային աշխատանքներ
- Այլ

Որպեսզի հասկանալի լինի, թե դասավանդման փաստացի ինչ մեթոդներ են օգտագործվում, թերևս խնդիրը պետք է քննարկել ուսումնառության եղանակների տեսանկյունից՝ դիտարկելով դասընթացի շրջանակներում ուսանողների հիմնական կրթական գործողությունները: Ինչպես և դասավանդման մեթոդների պարագայում, մինչև անվանումն ունեցող կրթական գործողությունները հաճախ խիստ տարբեր են լինում: Դասախոսություններին և ուսուցման այլ ձևերին մասնակցելուց, դասագրքերից և ուսումնական գրականությունից օգտվելուց զատ, լայնորեն կիրառվում են ուսումնառության բազմապիսի այլ եղանակներ՝ դասավանդման և ուսումնառության փոխներդաշնակեցումն ապահովելու նպատակով: Որպես օրինակ կարելի է ներկայացնել դասընթացին առնչվող նյութերի որոնումը գրադարանում և համացանցում, հոդվածների ընթերցումը, գրավոր աշխատանքների կատարումը, խնդիրների առա-

ջադրումը և լուծումը, ինքնություն (հետազոտական) աշխատանքը, գործնական կամ լաբորատոր աշխատանքի հմտությունների զարգացումը, էսսեների, վերլուծությունների և հաշվետվությունների պատրաստումը, զեկույցների, լսարանային ցուցադրությունների և ավարտական աշխատանքների պատրաստումը և ներկայացումը (այդ թվում՝ թիմային կատարմամբ), դասընկերների աշխատանքի կառուցողական քննադատությունը և այլն:

Ուսումնառության ձևերը



Ինչ են անում ուսանողները լսարանում և լսարանից դուրս.

- Պասսիվ ունկնդրում
- Հանձնարարված գրականության ընթերցում
- Մասնակցություն քննարկումներին
- Փորձերի կատարում հատուկ սարքավորումներով
- Նախագծային աշխատանքների կատարում
- Ինքնություն/տնային աշխատանքների կատարում
- Տարբեր խնդիրների լուծում
- Չափումների և դիտարկումների իրականացում
- Ինքնություն հետազոտություն
- Խմբային աշխատանք կոնկրետ առաջադրանքների կատարման նպատակով
- Այլ

Կրթական ծրագիրը պետք է պարզորոշ ցույց տա, թե ինչպես են դասավանդման և ուսումնառության ընտրված մեթոդներն օժանդակելու ուսանողներին՝ ձեռք բերելու ակնկալվող կրթական վերջնարդյունքները: Դասընթացի յուրաքանչյուր կրթական վերջնարդյունքի (կամ դրանց որոշակի խմբի) համար պետք է սահմանվեն դասավանդման և ուսումնառության համապատասխան մեթոդներ: Ընդ որում, բավարար չէ միայն արձանագրել, որ տվյալ վերջնարդյունքը ձեռք է բերվում «... դասախոսությունների, սեմինար կամ գործնական պարապմունքների և այլնի միջոցով ...», առանց պարզորոշ ցույց տալու, թե դրանցից յուրաքանչյուրը հատկապես ինչպես է նպաստելու ակնկալվող կրթական վերջնարդյունքների ձևավորմանը ուսանողի մոտ: Օրինակ, եթե որպես դասավանդման ձև ընտրված է դասախոսությունը, ապա այդ հանգամանքը պետք է հնարավորինս կոնկրետացվի և պարզաբանվի: Բավարար չէ նշել, որ «Դասընթացի յուրացման համար հիմնականում օգտագործվելու են դասախոսությունները»: Նախընտրելի է մանրամասնել և բացատրել, որ՝ «Դասընթացի հիմնական մասը յուրացվելու է դասախոսի կողմից հանձնարարված գրականության ընթերցման արդյունքում: Օգտագործվելու են նաև դասախոսությունները՝ հանձնարարված նյութի հիմնական աղբյուրները լրացնելու, ուսանողներին անհասկանալի դրույթները բացահայտելու և պարզաբանելու, ինչպես նաև նրանց քննադատական մտածողությունը զարգացնելու համար ...»:

Օրինակներ

Դիտարկենք կոնկրետ կրթական վերջնարդյունքների արդյունավետ ձեռքբերմանն ուղղված դասավանդման և ուսումնառության համարժեք մեթոդների ընտրության երկու գործնական օրինակ:

Օրինակ 1. *Վերլուծելու և սինթեզելու ունակության ձևավորում*

Այս ունակությունը, որպես կանոն, բավական տարողունակ է: Այն կարող է ներառել, օրինակ, հարցը կամ հետազոտության խնդիրը ճիշտ սահմանելու, նկարագրելու և եզրահանգումներ կատարելու, ինչպես նաև երաշխավորություններ ձևակերպելու կարողություններ: Ըստ էության, այն ուսանողին թույլ է տալիս հասկանալ և գնահատել այն տեղեկատվությունը, որն անհրաժեշտ է հավաքագրել, մեկնաբանել և մշակել՝ հիմնական գաղափարները բացահայտելու նպատակով: Վերլուծելու համար անհրաժեշտ է տրամաբանական մտածողություն և գիտելիքի համապատասխան ոլորտի հիմնական հասկացակազմի իմացություն: Որպես կանոն, տվյալ ունակության զարգացումն ապահովվում է ոչ թե ծրագրում հատուկ նախատեսված դասընթացի կամ ուսումնական մոդուլի միջոցով, այլ ինտեգրված է ծրագրի առանձին ուսումնական միավորների մեջ (չնայած, որոշ դեպքերում դրա համար կարող են նախատեսված լինել նաև հատուկ դասընթացներ կամ մոդուլներ, ինչպես, օրինակ, *Ֆորմալ տրամաբանություն* կամ *գիտական ճանաչողության տրամաբանություն* դասընթացները):

Ուսումնասիրությունները վկայում են, որ գործատուները և ուսանողները հատկապես կարևորում են այս ունակությունը, քանի որ վերջինս թույլ է տալիս համակցել տեսությունն ու պրակտիկան, քննադատորեն գնահատել աշխատանքի ու հետազոտության արդյունքները և այլընտրանքային ուղիներ որոնելու համար համապատասխան գործիքներ օգտագործել: Ըստ գործատուների և

ուսանողների՝ տվյալ կարողությունը հույժ կարևոր է աշխատողի ապագա մասնագիտական առաջխաղացման համար:

Վերլուծելու և սինթեզելու ունակությունը նկարագրելու համար սովորաբար օգտագործվում են տարբեր ձևակերպումներ (բայեր)՝ *հասկանալ, մեկնաբանել, առանձնացնել առանցքային գաղափարները, գնահատել, մշակել և կազմակերպել տեղեկատվությունը, քննադատորեն գնահատել, համակցել տեսությունն ու պրակտիկան, տեղադրել համատեքստում, օբյեկտիվորեն դիտարկել, հետազոտել, ձևակերպել՝ ոչ միայն վերաբարդորեն, կիրառել, մշակել, նախագծել, հետևություններ անել, մրաօծել, համեմատել, տարբերել, հակադրել, դասակարգել, եզրակացնել, փաստարկել, կապեր հաստատել, ամփոփել, տրամաբանել, դիտարկել, կանխատեսել, լուծել և այլն:*

Ուսանողները զարգացնում են *վերլուծելու և սինթեզելու* ունակությունները հետևյալ եղանակներով.

- հասկացության կամ հայեցակարգի հիմնական գաղափարների ձևակերպման միջոցով՝ ակադեմիական և մասնագիտական նեղ թեմաների շրջանակներում նյութեր ընթերցելու, հետազոտություններ կատարելու, քննարկումների և «*մրազրոհների*» աշխատաշրջանների արդյունքում,
- ինքնուրույն մեկնաբանելու, գնահատելու, տարբերություններ դնելու և դասակարգումներ կառուցելու, ինչպես նաև բանավեճերի ընթացքում գիտելիքի փոխանակման և գրավոր աշխատանքների միջոցով,
- սեփական և այլոց ոչ հիմնավորված պնդումները վեր հանելու և կասկածի տակ առնելու միջոցով,
- արդիական հայեցակարգերի միջև կապեր հայտնաբերելու միջոցով,

- տեղեկատվության քանակական գնահատման օգնությամբ,
- համապատասխան տեսության և տրված նյութի համադրման միջոցով,
- որոշակի ոլորտում նոր եզրահանգումներ կատարելու օգնությամբ,
- կոնկրետ իրադարձություններ և (կամ) խնդիրներ ավելի լայն համատեքստեր տեղափոխելու միջոցով,
- ապացույցների և (կամ) հակափաստարկների որոնման միջոցով:

Վերլուծելու և սինթեզելու ունակության ձևավորման մակարդակի գնահատման ձևերը պայմանավորված են դասավանդման և ուսումնառության համապատասխան մեթոդներով: Դրանք կարող են իրականացվել քննարկումների, հարցադրումների, դիտարկումների, հաշվետվություններ կազմելու, գործնական աշխատանքում ակտիվ մասնակցության, էսսեների, գրավոր աշխատանքների, նախագծերի, քննությունների, ավարտական աշխատանքների/ատենախոսությունների պաշտպանության միջոցով:

Օրինակ 2. Հեղափոխական հմտությունների զարգացում

Հետազոտություն կատարելու կարողությունը կարևորագույն նշանակություն ունի բարձրագույն կրթության թե՛ առաջին (բակալավրիատ), թե՛ առավել ևս երկրորդ (մագիստրատուրա) շրջափուլերի համար: Այն կարող է զարգացվել ինչպես դասախոսի օժանդակությամբ կամ համատեղ, այնպես էլ ինքնուրույն՝ նախագծին (աշխատանքին) առնչվող առաջադրանքներ կատարելով:

Մի շարք մասնագիտություններում, ինչպես, օրինակ, կրթության մասնագետների կամ բուժաշխատողների պատրաստման ոլոր-

տում նախատեսվում են կոնկրետ դասընթացներ, որոնք ուղղված են հետազոտություններ կատարելու կարողությունների զարգացմանը (հիմնականում՝ կրթական երկրորդ շրջափուլում): Դրանք հաճախ կազմակերպվում են նաև իրական միջավայրում՝ բուժական կամ կրթական հաստատություններում:

Դասախոսները տեսական և գործնական պարապմունքներ են անցկացնում հետազոտությունների կատարման մեթոդների վերաբերյալ, մշակում ուսումնական առաջադրանքներ, որոնք վերաբերում են որակական և քանակական տեղեկատվության հավաքագրման և վերլուծության տարբեր ձևերին, ապահովում են ուսանողներին մատենագիտական (բիբլիոգրաֆիկ) տեղեկատվությամբ և անհրաժեշտ փաստաթղթերով, ինչպես նաև մղում լրացուցիչ գրականություն և նյութեր որոնելու:

Ուսանողները, բացի պարապմունքներին հաճախելուց, կատարում են հետազոտական աշխատանքներ, ուսումնասիրում համապատասխան գրականությունը և փաստաթղթերը, հավաքագրում և վերլուծում են տվյալները, ներկայացնում դասախոսին և քննարկում նրա հետ ընթացիկ հետազոտական աշխատանքը, համակորսեցիներին են տրամադրում նրանց աշխատանքների վերաբերյալ իրենց մեկնաբանությունները և քննադատական կարծիքները (ինչպես բանավոր, այնպես էլ գրավոր), պահանջվող ծավալի աշխատանքներ գրում և այլն:

Հաշվի առնելով կատարվող առաջադրանքների տեսակները, ինչպես նաև դասախոսի և ուսանողի պարբերական շփումը, կարելի է սերտ կապ նկատել դասախոսի կողմից ուսանողի կատարած աշխատանքի գնահատման, և ուսանողի՝ սեփական առաջընթացի գիտակցման միջև: Նախ, գնահատումը հիմնված է լինում ինչպես հետազոտությունների կատարման ընթացքի (օրինակ՝ հանձնած գրավոր աշխատանքի որակի և խմբերում առաջադրանքների կատարմանը մասնակցելու ակտիվության), այնպես էլ վերջնական արդյունքի որակի վրա (հետազոտության ինքնատիպությունը, ուսանողի ունակությունը՝ ներկայացնելու առաջ քաշված

թեզի ճշմարտացիության փաստական վկայություններ, տրամաբանության հստակությունն ու անկողմնակալությունը, շարադրանքի տրամաբանական ամբողջականությունը և հետազոտվող առարկայի նկատմամբ անաչառ վերաբերմունքը, նյութի ներկայացման պարզությունը և այլն): Երկրորդ, հետազոտության ստացված արդյունքների վերաբերյալ թե՛ դասախոսների, և թե՛ համակուրսեցիների կողմից նույնպես իրականացվում է պարբերական հետադարձ կապ:

Գործնական առաջադրանքներ

Առաջադրանք 19

Ներքոբերյալ աղյուսակի առաջին սյունակում գետեղված կրթական վերջնարդյունքներից յուրաքանչյուրի համար ընտրեք համապատասխան դասավանդման մեթոդներ և ուսումնառության ձևեր, որոնք Ձեր կարծիքով առավելագույնս կնպաստեն ուսանողների կողմից այդ վերջնարդյունքների ձեռքբերմանը: Համապատասխանությունը ցույց տվեք սլաքների օգնությամբ:

Առաջադրանք – 19.

Տրված կրթական վերջնարդյունքների համար ընտրեք համապատասխան դասավանդման և ուսումնառության մեթոդներ և ձևեր:

Կրթական վերջնարդյունքի տեսակ	Դասավանդման մեթոդներ (ինչ է անում դասախոսը)	Ուսումնառության ձևեր (ինչ են անում ուսանողները)
Գիտելիք	Սեմինար պարապմունքներ	
Իմացություն		Փորձերի կատարում հատուկ սարքավորումներով
Կիրառություն	Իմբրային աշխատանքներ	
Վերլուծություն		Նախագծերի կատարում
Գնահատում	Գործնական պարապմունքներ	Ինքնուրույն և տնային աշխատանքների կատարում
Սինթեզ		Տարբեր խնդիրների լուծում
Այլ կարողություններ (նշել)	Դասախոսություններ	Զափումների և դիտարկումների կատարում
Այլ կարողություններ (նշել)		Ինքնուրույն հետազոտության իրականացում
Այլ կարողություններ (նշել)	Լաբորատոր աշխատանքներ	Իմբրային աշխատանք՝ կոնկրետ առաջադրանքի կատարման նպատակով
Այլ կարողություններ (նշել)		Հանձնարարված գրականության ընթերցում
Այլ հմտություններ (նշել)	Դաշտային աշխատանքներ	
Այլ հմտություններ (նշել)		Մասնակցություն քննարկումներին
Այլ հմտություններ (նշել)	Քննարկումներ	
Այլ հմտություններ (նշել)		Պասսիվ ունկնդրում

Առաջադրանք 20

Օգտվելով 5-ից 7-րդ **առաջադրանքներում** դասընթացի/ ուսումնական մոդուլի համար նախկինում սահմանված ակնկալվող կրթական վերջնարդյունքների ցանկից՝ լրացնել ստորև տրամադրված ձևաթերթը և յուրաքանչյուր կրթական վերջնարդյունքի համար ընտրել դասավանդման և ուսումնառության այնպիսի ձևեր ու մեթոդներ, որոնք լավագույնս կնպաստեն ուսանողների կողմից այդ կրթական վերջնարդյունքների հաջող ձեռքբերմանը:

Այս առաջադրանքը կատարելու համար կարող էք օգտվել վերոնշյալ՝ **առաջադրանք 19-ի** աղյուսակում ներկայացված դասավանդման և ուսումնառության ձևերից ու մեթոդներից:

Առաջադրանք – 20.

Սահմանել _____ դասընթացի/ուսումնական մոդուլի դասավանդման և ուսումնառության մեթոդներն ու ձևերը՝ ըստ առանձին կրթական վերջնարդյունքների:

Դասընթացի/ուսումնական մոդուլի կրթական վերջնարդյունքներն ու դասավանդման և ուսումնառության մեթոդները	
<i>Դասընթացի/ուսումնական մոդուլի հաջող ավարտին ուսանողն ունակ կլինի.</i>	<i>Ուսանողը ձեռք է բերում ակնկալվող գիտելիքը, իմացությունը և կարողությունները դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերով.</i>
Ա. Մասնագիտական գիտելիք և իմացություն. 1. _____ 2. _____ 3. _____	Դասավանդման և ուսումնառության ձևերը. 1. _____ 2. _____ 3. _____
Բ. Գործնական մասնագիտական կարողություններ. 1. _____ 2. _____ 3. _____ 4. _____	Դասավանդման և ուսումնառության ձևերը. 1. _____ 2. _____ 3. _____ 4. _____
Գ. Ընդհանրական (փոխանցելի) կարողություններ. 1. _____ 2. _____	Դասավանդման և ուսումնառության ձևերը. 1. _____ 2. _____

2.2. Ուսանողների չափանիշահեն գնահատումը



Բարձրագույն կրթության ժամանակակից համակարգում ուսանողների գնահատման քաղաքականությունն առանձնահատուկ նշանակություն ունի: Ուսանողների կողմից ակնկալվող կրթական վերջնարդյունքները ձեռք բերելու տեսանկյունից հատկապես կարևորվում է գնահատման համարժեք ձևերի և մեթոդների ճիշտ ընտրությունը: Գնահատումը դիտարկվում է ոչ միայն որպես դասավանդման և ուսումնառության արդյունքների ամփոփում, այլ նաև որպես այդ գործընթացների հիմնական ուղղորդող բաղադրիչ, որն անմիջականորեն շաղկապված է կրթական վերջնարդյունքների հետ: Դասընթացի (ուսումնական մոդուլի) շրջանակներում ձևակերպված նպատակները և վերջնարդյունքները փոխլրացնում են միմյանց, իսկ ճիշտ ընտրված գնահատման համակարգը նպաստում է ակնկալվող վերջնարդյունքներով սահմանված գիտելիքի, կարողությունների և հմտությունների հաջող ձեռքբերմանը ուսանողների կողմից: Ձեռքբերված գիտելիքի փաստացի մակարդակը կարող է չափվել միայն գնահատման համապատասխան մեթոդներով և ճիշտ ընտրված չափանիշների օգնությամբ: Երկայումս գնահատման համակարգերը թևակոխել են զարգացման մի նոր փուլ և որդեգրել չափանիշների և չափորոշիչների վրա հիմնված բոլորովին նոր մոտեցում: Գնահատման այս մոտեցումը հնարավորություն է ընձեռում փոխկապակցելու դասընթացի (ուսումնական մոդուլի) ակնկալվող կրթական վերջնարդյունքները, գնահատման գործընթացը և ուսումնառության ու դասավանդման մեթոդները (տե՛ս նկար 10): Այն թույլ է տալիս գնահատման գործող մեխանիզմները համապատասխանեցնել դասընթացի (ուսումնական մոդուլի) կրթական վերջնարդյունքներին և երաշխավորել գնահատման հավաստիությունը:



Նկար 10. Դասընթացի կրթական վերջնարդյունքների սահմանման և դասավանդման, ուսումնառության ու գնահատման ձևերի ու մեթոդների որոշման ընթացակարգը

Ուսանողի գնահատումը



- Միջոց է պարզելու, թե ինչ գիտեն և ինչ կարող են անել ուսանողները:
- Տարբեր աղբյուրներից տեղեկատվության հավաքման և վերլուծության գործընթաց է, որը հնարավորություն է ընձեռում պարզելու, թե ուսանողներն ինչ գիտեն, ինչ են հասկանում և ինչ կարող են անել ուսումնասության արդյունքում:



Կրթական վերջնարդյունքների գնահատումը

- Դասընթացները և ծրագրերը կրթական վերջնարդյունքների հենքով կառուցելուց հետո, պետք է պարզել՝ արդյո՞ք ուսանողները ձեռք են բերել դրանք, թե՛ ոչ:
- Իսկ ինչպես կարելի է իմանալ, կրթական վերջնարդյունքները ձեռք են բերվել են, թե ոչ, և ինչպես չափել վերջնարդյունքների ձեռքբերման չափը կամ մակարդակը:
- Այդ նպատակով հարկավոր է դիտարկել, թե ինչպես համապատասխանեցնել գնահատման մեթոդները տարբեր կրթական վերջնարդյունքներին (օրինակ, «*Ելույթ ունենալու հմտություններ*» միայն կարելի է գնահատել, եթե ուսանողը ելույթ ունենա լսարանի առջև):

Արդյունավետ գնահատման հիմնական սկզբունքները



Չափանիշների և չափորոշիչների վրա հիմնված գնահատումն ապահովում է հետևյալ կարևորագույն սկզբունքների իրականացումը.

- արժանահավատ, հուսալի և անաչառ չափում է ակնկալվող կրթական վերջնարդյունքների ձեռքբերումը,
- ներառում է դասավանդման, ուսումնառության և գնահատման շարունակական բարելավման մեխանիզմներ,
- ուղղորդում և խրախուսում է ուսանողի ուսումնառությունը,
- սահմանում և պահպանում է ակադեմիական չափանիշները:

Գնահատումը ուսումնական գործընթացի կարևորագույն բաղադրիչն է: Այն ուղղորդում և խթանում է ուսանողի ուսումնառությունը, քանի որ նպաստում է մատուցվող նյութի յուրացմանը և ակնկալվող գիտելիքների, կարողությունների ու հմտությունների ձեռքբերմանը: Արդյունավետ գնահատումը ենթադրում է գնահատման մեթոդների բազմազանություն ուսանողի գիտելիքների մակարդակն արժանահավատորեն որոշելու համար:

Եթե ուսանողը գիտի, թե հատկապես ինչ է պահանջվում իրենից գնահատման գործընթացում, նա նպատակաուղղում է իր ջանքերն այդ պահանջների բավարարմանը: Բարձր գնահատական ստանալու համար ուսանողը պետք է նախապես ծանոթ լինի

գնահատման ձևերին և չափանիշներին: Երա համար գնահատման պահանջներն առավել ընկալելի են, երբ նա ծանոթ է գնահատման չափանիշներին և չափորոշիչներին: Երբ դասախոսը հստակ ձևակերպում է գնահատման չափանիշները և չափորոշիչները, ուսանողը հստակ պատկերացում է կազմում, թե հատկապես ինչ է ակնկալվում իրենից գնահատման առաջադրանքում: Հետևաբար, կարևոր է նաև, որ դասախոսը նախապես հրապարակի գնահատման չափանիշի կատարման հնարավոր մակարդակները՝ գնահատման չափորոշիչները, որպեսզի ուսանողն իմանա, թե ինչպես է կատարվելու գնահատումը և նա ինչպես պետք է իմանա, թե ինքը գնահատման որ շեմին է համապատասխանում: Ուստի, չափանիշների և չափորոշիչների սահմանումը գնահատման գործընթացն ուսանողների համար դարձնում է ավելի թափանցիկ և հասկանալի:

Պատշաճ և արդյունավետ գնահատումը հիմնված է երեք կարևորագույն սկզբունքների վրա՝

1. արժանահավատություն,
2. հուսալիություն,
3. անաչառություն:



Արժանահավատ (կամ վավեր) է համարվում այն գնահատումը, որտեղ գնահատման մեթոդներն անմիջականորեն շաղկապված են դասընթացի կրթական վերջնարդյունքներին և չափում են ուսանողի կողմից

դրանց ձեռքբերման մակարդակը: Այդ իսկ պատճառով, արժանահավատ է համարվում գնահատման այն համակարգը, որը հիմնված է դասավանդման և ուսումնառության ձևերի և ակնկալվող կրթական

վերջնարդյունքների համապատասխանեցման սկզբունքի վրա և կիրառում է վերջիններիս ձեռքբերման մակարդակը չափելու հստակ մեխանիզմներ ու չափորոշիչներ:



Հուսալի (կամ հետևողական) գնահատումը ենթադրում է հետևողականության, այսինքն՝ միասնական մոտեցման ցուցաբերում գնահատման գործընթացում՝ տարբեր դասախոսների կողմից տարբեր ժամանակահատվածում և ուսանողների տարբեր խմբերում գնահատում կատարելիս: Հուսալի գնահատումը պետք է համադրելի ար-


դյունքներ ապահովի տարբեր դասախոսների կողմից ուսանողների տարբեր խմբերում գնահատում իրականացնելիս: Երբ գնահատումը մի քանի դասախոսների կողմից միատեսակ և հիմնավորված է իրականացվում, կամ մեկ դասախոսը միօրինակ հետևողական է գնահատման ամբողջ ընթացքում, ապա գնահատման արդյունքները հուսալի են:



Մասշտաբ (կամ արդարացի) է համարվում այն գնահատումը, որտեղ ուսանողներին տրվում են հավասար հնարավորություններ իրենց ուսումնառության արդյունքները դրսևորելու համար: Այն ենթադրում է գնահատման գործընթացում բոլոր ուսանողներին հավասար ժամանակի և պայմանների տրամադրում, որպեսզի իրենց գիտելիքները լավագույնս դրսևորելու առումով նրանք չհայտնվեն անհավասար պայմաններում:

Հարկ է նշել, որ դասախոսը և ուսանողը գնահատումը դիտարկում են միանգամայն տարբեր տեսանկյուններից: Եթե դասախոսի համար գնահատումը ուսումնական գործընթացի վերջին փուլն է, ապա ուսանողն այն դիտարկում է որպես այդ գործընթացի մեկնակետ, քանի որ նա առաջին հերթին հետաքրքրված է գնահատման չափանիշներով ու չափորոշիչներով (այսինքն՝ ինչպես է ինքը գնահատվելու), որոնք փաստացի կերպով ուղղորդում են իր ուսումնառությունը: Այսինքն, գնահատումը այն «շարժիչն» է, որն առաջ է մղում ուսանողի ուսումնառությունը:

Գնահատումը դասախոսի և ուսանողի տեսանկյունից





*Գնահատումը այն շարժիչն է,
որը կառավարում է ուսանողի
ուսումնասրությունը:*

(Ջոն Բոուրն)

- Դասախոսի համար գնահատումը դասավանդում-ուսումնասրություն գործընթացի վերջում է, իսկ ուսանողի համար՝ սկզբում:
- Եթե ուսուցման նպատակներն արտահայտված են գնահատման չափանիշներում, ապա ն դասախոսի դասավանդումը, ն ուսանողի ուսումնասրությունն ուղղված են միևնույն նպատակին:
- Պատրաստվելով քննություններին՝ ուսանողը փաստացի ձեռք է բերում դասընթացի ակնկալվող կրթական վերջնարդյունքները:

Գնահատման չափանիշների ձևակերպումը



գնահատում իրականացնելու համար, հատկապես, երբ գնահատման միևնույն գործընթացում ներգրավված են մի քանի դասախոսներ: Չափանիշների և չափորոշիչների վրա հիմնված գնահատումը նաև առավել արգասաբեր է դարձնում ուսանող-դասախոս փոխադարձ կապը: Բուհերում ուսանողների գնահատման այս համակարգը որակյալ ուսումնառության և գնահատման գործընթաց կազմակերպելու կարևորագույն երաշխիքն է:

Գնահատման այս համակարգում դասընթացի ակնկալվող կրթական վերջնարդյունքների հիման վրա ձևակերպվում են գնահատման այնպիսի չափանիշներ, որոնք փաստում են ուսանողի կողմից դրանց ձեռքբերումը: Չափանիշները սահմանում են ուսանողի կատարողականի հիմնական բնութագրիչները գնահատման գործընթացում: Դրանք նաև նկարագրում են, թե գնահատման առաջադրանքում ինչ պետք է անի ուսանողը դասընթացի կրթական վերջնարդյունքների ձեռքբերումը դրսևորելու համար: Գնահատման չափանիշները սովորաբար ձևակերպվում են որպես համառոտ նկարագրություններ: Օրինակ, եթե գնահատվում է էսսե կամ զեկույց գրելու ուսանողի կարողությունը, ապա չափանիշը կարող է ձևակերպվել այսպես. «*ցուցաբերել հանձնարարված*


գրականության հիմնական դրույթները վերլուծելու և ամբողջականացնելու, հիմնական միտքը շարադրելու և հղումներ կատարելու կարողություն»։ Այս չափանիշի պահանջները կարող են կատարվել որակական տարբեր մակարդակներում, որոնք սահմանվում են գնահատման չափորոշիչներով։ Չափորոշիչները փաստում են գնահատման առաջադրանքն ուսանողի կողմից կատարելու որակական մակարդակը։ Գնահատման չափորոշիչները սահմանելիս դասախոսը պետք է որոշակիացնի և դասակարգի դասընթացի ակնկալվող կրթական վերջնարդյունքների ձեռքբերման հնարավոր մակարդակները, որից հետո գնահատումը պայմանավորված կլինի այդ չափորոշիչներին՝ ուսանողի կատարողականի համապատասխանության աստիճանով։ Չափորոշիչների ձևակերպումները կարող են տարբեր լինել, սակայն, որպես կանոն, դրանք սահմանվում են մեկ նախադասությամբ և պարունակում են համառոտ, բայց բավարար տեղեկատվություն ուսանողի գիտելիքների մակարդակը որոշելու համար։ Սա տարբեր դասախոսներին հնարավորություն է տալիս փոխհամաձայնեցված որոշում կայացնելու գնահատման առաջադրանքում ուսանողի կատարողականի վերաբերյալ։ Օրինակ, էսսե գրելու վերոնշյալ օրինակում չափորոշիչը կարող է ներկայացվել չափանիշի ձևակերպման մեջ. «*ցուցաբերել հանձնարարված գրականության հիմնական դրույթները մանրազնին վերլուծելու և մեկ գաղափարի մեջ ամբողջականացնելու, հիմնական միտքը պարզ և հստակ շարադրելու և սահմանված կանոններին համապատասխան հղումներ կատարելու կարողություն*»։



Արդյունավետ գնահատման առանցքային սկզբունքները և գնահատման համակարգերի ընդհանուր թերությունները հիմնականում վերաբերում են վերջնարդյունքների հետ կապին, գնահատման առաջադրանքի մշակմանը, չափանիշներին, թվանշանն գործընթացին և հետադարձ կապին:

(Բրաուն, 2001)

Չափանիշների և չափորոշիչների վրա հիմնված գնահատման գործընթացի կազմակերպման քայլերի հաջորդականությունը ներկայացված է նկար 11-ում:



Նկար 11. Չափանիշների և չափորոշիչների վրա հիմնված գնահատման գործընթացի կազմակերպման ընթացակարգ

Այստեղ առաջին քայլը դասընթացի կրթական վերջնարդյունքների ձևակերպումն է, այսինքն ինչ պետք է իմանա ուսանողը դասընթացի ավարտին: Հստակ ձևակերպված կրթական վերջնարդյունքներից ածանցվում են գնահատման այնպիսի չափանիշներ (հիմնական բնութագրիչներ), որոնք փաստում են ուսանողների կողմից այդ կրթական վերջնարդյունքների ձեռքբերումը, այսինքն ինչ պետք է կարողանա անել ուսանողը գնահատման առաջադրանքում: Ինչպես արդեն նշվեց, չափանիշները ուսանողի գնահատման առաջադրանքի կատարման հիմնական ցուցիչներն են: Դրանք պետք է ուղղորդեն ուսանողին գնահատման ժամանակ՝ տեղեկացնելով, թե նա հատկապես ինչ պետք է անի գնահատման առաջադրանքը կատարելիս: Գնահատման հստակ չափանիշներ սահմանելիս անհրաժեշտ է հիմք ընդունել կրթական վերջնարդյունքը ձևակերպող բայը, որը ցույց է տալիս, թե ինչ պետք է կարողանա անել ուսանողը դասընթացի ավարտին: Բայը դառնում է կատարողականի մի ուրույն ցուցիչ, որի օգնությամբ ձևավորվում է չափանիշը: Օրինակ, եթե կրթական վերջնարդյունքը սահմանող բայը «նախագծելն» է, անհրաժեշտ է նախ և առաջ հստակ պատկերացում կազմել, թե որո՞նք են նախագծելու կարողության այն կարևորագույն բնութագրիչները, որոնք պետք է ցուցաբերի ուսանողը: Հենց այդ բնութագրիչներն էլ այնուհետև ձևավորում են գնահատման չափանիշները:

Գնահատման չափանիշի ձևակերպումը



- Օրինակ, եթե կրթական վերջնարդյունքը սահմանող բայը *նախագծելն* է, ապա անհրաժեշտ է որոշել, թե որո՞նք են *նախագծելու* կարողությունների դրսևորման կարևորագույն բնութագրիչները:
- Հենց այդ բնութագրիչներն էլ հիմք են հանդիսանում գնահատման չափանիշների սահմանման կամ ձևակերպման համար:

Չափանիշները չպետք է պարունակեն կատարման որակի մասին քանակական կամ որակական գնահատականներ: Այսպես, անհրաժեշտ է խուսափել նկարագրական բնույթի այնպիսի բառերից, ինչպես «արդյունավետորեն», «լավ» կամ «բավարար»: Դրանք անհրաժեշտ են գնահատման չափորոշիչները նկարագրելու համար:

Հստակ չափանիշներ ձևակերպելու ընթացքում կարող է առաջանալ դասընթացի կրթական վերջնարդյունքների վերաձևակերպման անհրաժեշտություն: Քանի որ կրթական վերջնարդյունքների ձևակերպումը մշտապես կրկնվող և շրջափուլային գործընթաց է, ուստի գնահատման չափանիշների սահմանումը գործնականում օգնում է նաև հստակեցնելու կրթական վերջնարդյունքների ձևակերպումները:

Գնահատման ձևերն ու մեթոդները և դրանց ընտրությունը



Դասընթացի (ուսումնական մոդուլի) ակնկալվող կրթական վերջնարդյունքների ուսանողի կողմից ձեռքբերման, այնուհետև դրանց դրսևորման տեսանկյունից կարևոր նշանակություն ունի նաև գնահատման համարժեք ձևերի ու մեթոդների ճիշտ

ընտրությունը: Գնահատումը պետք է դիտարկել ոչ միայն որպես դասավանդման և ուսումնասության ժամանակաշրջանի արդյունքների ամփոփում, այլ նաև որպես այդ գործընթացներն ուղղորդող բաղադրիչ, որն անմիջականորեն շաղկապված է կրթական վերջնարդյունքների հետ: Պրակտիկայում կիրառվում է գնահատման ձևերի ու մեթոդների լայն շրջանակ՝ թեստեր, բանավոր և գրավոր քննություններ, լսարանային ցուցադրություններ, զեկույցներ, տվյալների վերլուծության արդյունքներ, նյութերի ամփոփում, էսսեներ, կուրսային և ավարտական աշխատանքների կամ ատենախոսությունների պաշտպանություն և այլն:

Գնահատման մեթոդները



- Կրթական վերջնարդյունքները յուրահատուկ ուղեցույց են գնահատման այնպիսի ձևերի ու մեթոդների ընտրության համար, որոնք արժանահավատորեն չափում են ուսանողի կողմից դրանց ձեռքբերման մակարդակը:
- Կրթական վերջնարդյունքների յուրաքանչյուր տեսակի ձեռքբերումը առավել արդյունավետ գնահատվում է դրան համապատասխան ձևերով ու մեթոդներով:

Կրթական վերջնարդյունքների և գնահատման համապատասխանեցման օրինակ

ԿՐԹԱԿԱՆ ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔ	ԳՆԱՀԱՏՈՒՄ
1. Դրսևորել ելույթ ունենալու հմտություններ	ա) Պատասխանել բազմակի ընտրության հարցերի
2. Որոշել նյութի ֆիզիկական հատկությունները	բ) Պատրաստել 1000-բառանոց հետազոտական առաջարկ
3. Ձևակերպել հետազոտական հիմնախնդիր	գ) Կատարել լաբորատոր աշխատանք
4. Բացահայտել տվյալ հիվանդության հայտանիշները և ախտանշանները հիվանդի մոտ	դ) Ելույթ ունենալ լսարանի առջև

Դասընթացի ակնկալվող կրթական վերջնարդյունքների ցանկի վերլուծությունը թույլ է տալիս սահմանել գնահատման այն չափանիշները, որոնք այս կամ այն կերպ փաստում են ուսանողի կողմից կրթական վերջնարդյունքների ձեռքբերումը: Կրթական վերջնարդյունքի տեսակը յուրահատուկ ուղեցույց է գնահատման այնպիսի մեթոդների և առաջադրանքների ընտրության համար, որոնք արժանահավատորեն են չափում այդ վերջնարդյունքի ձեռքբերումը:

Գասընթացի կրթական վերջնարդյունքների գնահատման օրինակ

Կրթական վերջնարդյունքներ	Գնահատման առաջադրանք 1. գրավոր քննություն	Գնահատման առաջադրանք 2. նախագիծ	Գնահատման առաջադրանք 3. ելույթ	Գնահատման առաջադրանք 4. լսարարարի աշխատանք
Կրթական վերջնարդյունք 1. Նկարագրել...	✓		✓	
Կրթական վերջնարդյունք 2. Հեղազոտել...		✓		✓
Կրթական վերջնարդյունք 3. Ներկայացնել...		✓	✓	

Գնահատման ճիշտ մեթոդների ընտրությունը նպաստում է նաև հուսալի գնահատման իրականացմանը: Կրթական վերջնարդյունքի յուրաքանչյուր տեսակ առավել արդյունավետ է գնահատվում համապատասխան մեթոդներով: Կրթական վերջնարդյունքներին համապատասխան ընտրված գնահատման մեթոդների օրինակները ներկայացված են աղյուսակ 7-ում:

Աղյուսակ 7. Կրթական վերջնարդյունքներին համապատասխան ընտրված գնահատման մեթոդների օրինակներ

Կրթական վերջնարդյունք	Գնահատման մեթոդ
<p>1. Գիտելիք և իմացություն (արտահայտել, պատմել, նկարագրել, ներկայացնել, վերարտադրել, թվարկել, անվանել, հիշել, վերհիշել, մտապահել, ցույց տալ, պարզաբանել, մեկնաբանել, որոշել, սահմանել, ձևակերպել, բացատրել, քննարկել, ճանաչել, հիմնավորել, ընտրել, մատնանշել, լուսաբանել, դասակարգել և այլն)</p>	<ul style="list-style-type: none"> ▪ Գրավոր քննություն ▪ Բանավոր քննություն ▪ Էսսե ▪ Ջեկույց ▪ Գրառումների վերաբերյալ մեկնաբանություններ ▪ Բարձրացված հարցադրումներին գրավոր պատասխան ▪ Կարճ պատասխաններ պահանջող հարցեր, ▪ Ճիշտ/սխալ/բազմակի ընտրության հարցեր (թղթային կամ համակարգչային ձևաչափով)
<p>2. Հաղորդակցվել (միակողմանի և երկկողմանի հաղորդակցում, հաղորդակցում խմբի ներսում, բանավոր և գրավոր հաղորդակցում, բանավիճում, փաստարկում, նկարագրում, պաշտպանություն, հարցազրույց, բանակցում, ներկայացում, գրավոր ձևաչափերի օգտագործում և այլն)</p>	<ul style="list-style-type: none"> ▪ Գրավոր ներկայացում (էսսե, զեկույց, հոդված և այլն) ▪ Բանավոր ներկայացում ▪ Խմբային աշխատանք ▪ Քննարկում/բանավեճ/դերախաղ ▪ Ներկայացում կինոխցիկի առջև
<p>3. Քննադատորեն մտածել և դատողություններ անել (բերել փաստարկներ, անդրադարձ կատարել, գնահատել, արժևորել, դատել և այլն)</p>	<ul style="list-style-type: none"> ▪ Էսսե ▪ Ջեկույց ▪ Գրախոսություն ▪ Հոդված
<p>4. Լուծել խնդիրներ և մշակել նախագծեր (բացահայտել/ձևակերպել/սահմանել խնդիրներ, վերլուծել տվյալներ, կատարել փորձաքննություն, մշակել և կատարել փորձեր, պլանավորել, օգտագործել տեղեկատվություն և այլն)</p>	<ul style="list-style-type: none"> ▪ Խնդրի լուծման տարբերակների կազմում ▪ Խմբային աշխատանք ▪ Նախադեպերի վերլուծություն ▪ Գիտական հոդվածի պատրաստում
<p>5. Տեղեկատվություն հայթայթել և կառավարել (ուսումնասիրել/հետազոտել, հետաքննել, մեկնաբանել, հավաքել տեղեկատվություն, փորձաքննել և ձևափոխել տեղեկատվություն, տվյալներ հավաքել, փնտրել ու դիտարկել տեղեկատվության զանազան աղբյուրներ և այլն)</p>	<ul style="list-style-type: none"> ▪ Գրականության ցանկ համապատասխան հղումներով ▪ Նախագիծ ▪ Ատենախոսություն ▪ Ինքնուրույն առաջադրանք ▪ Կիրառական խնդիր

Առարկայական համատեքստը նույնպես էական նշանակություն ունի գնահատման ձևերի և մեթոդների ընտրության համար: Գնահատման որոշ մեթոդներ առավել կիրառական են այս կամ այն առարկայական (մասնագիտական) ոլորտում, քանի որ դրանք զարգացնում են համապատասխան մասնագիտական կարողություններ և հմտություններ (օրինակ՝ բժշկություն, իրավագիտություն, ավիացիա և այլն):

Գնահատումը խթանում և նպաստում է ուսումնառությանը, երբ այն.

- ստեղծագործական է և համարժեք,
- ակնկալում է հստակ վերջնարդյունքի ստացում,
- պատշաճ գնահատում է կրթական վերջնարդյունքի ձեռքբերումը, ինչպես նաև հուշում դրան հասնելու ընթացքը,
- համարժեք է և իրատեսական,
- հիմնված է միասնական, այլ ոչ հատվածային մոտեցման վրա,
- արդյունավետորեն է հաշվարկում ժամանակը,
- զարգացնում է ուսանողի ինքնագնահատման կարողությունը:

Դասընթացի կրթական վերջնարդյունքների ձեռքբերումը գնահատող առաջադրանքներ մշակելիս անհրաժեշտ է հաշվի առնել գնահատման առաջադրանքի հատուկ նպատակը, գրագողության հնարավորությունների նվազեցման, ինչպես նաև գնահատման ընթացքի արդարացի ժամանակի հաշվառման անհրաժեշտությունը և այլն: Գնահատման առաջադրանքի մշակումը, բացի գնահատման մեթոդի ընտրությունից, որը իրատեսորեն չափում է կոնկրետ կրթա-

կան վերջնարդյունքի ձեռքբերումը, պայմանավորված է մի շարք հանգամանքներով (երբեմն միմյանց հակադրվող): Գնահատումը նախ և առաջ պետք է խրախուսի և ուղղորդի արդյունավետ ուսումնառությունը: Ուսանողներն առավել արդյունավետ սովորում և առաջադրանքներ են կատարում դասերի (պարապմունքների) ընթացքում, քան քննությունների ժամանակ: Ուսումնառությունն էլ ավելի արդյունավետ դարձնելու համար գնահատման առաջադրանքների մշակումը պահանջում է ստեղծագործական մոտեցում: Հարկ է նշել, որ գնահատման առաջադրանքի վերջնամշակումը շարունակական գործընթաց է, որն անընդհատ լրամշակման կարիք ունի:

Կրթական վերջնարդյունքների տարատեսակությունը հանգեցնում է գնահատման մեթոդների բազմազանության: Ուսումնառության ընթացքում ուսանողներին անհրաժեշտ է ծանոթացնել գնահատման հետաքրքիր և բազմազան առաջադրանքներ ներառող տարբեր մեթոդների հետ, որոնք առավել արդյունավետ են դարձնում կրթական վերջնարդյունքների ձեռքբերումը: Գնահատման արդյունավետության երաշխավորման համար կարևոր նշանակություն ունի նաև գնահատման առաջադրանքի կատարման իրատեսական ժամանակի որոշումը:

Դիտարկենք գնահատման մեթոդների օրինակներ, որոնք նախատեսված են ուսանողի կողմից տարբեր կրթական վերջնարդյունքի ձեռքբերումը չափելու համար:

Օրինակ 1. Դիտարկենք հետևյալ կրթական վերջնարդյունքի ձեռքբերման գնահատումը

Վերջնարդյունք. «Ուսումնական մոդուլի հաջող ավարտին ուսանողն ունակ կլինի ներկայացնելու իր փորձարարական աշխատանքի արդյունքները լսարանին»:

Գնահատում. Թե ինչ մակարդակով է ուսանողը հասել այս կրթական վերջնարդյունքին՝ կարելի է պարզել, եթե համապատասխան չափանիշներով կատարվի բանավոր գեկույցի գնահատում:

Օրինակ 2. Նույն եղանակով դիտարկենք հետևյալ կրթական վերջնարդյունքի ձեռքբերման գնահատումը

Վերջնարդյունք. «Ուսումնական մոդուլի հաջող ավարտին ուսանողն ունակ կլինի վերլուծելու առարկային առնչվող գիտական գրականությունը»:

Գնահատում. Թե որքանով է ուսանողին հաջողվել ձեռք բերել այս վերջնարդյունքը, կարող է պարզ դառնալ միայն գնահատման համարժեք մեթոդով: Օրինակ, այս պարագայում, բազմակի պատասխաններով թեստը կիրառելի չէ ուսանողի վերլուծական հմտությունները գնահատելու համար: Այս դեպքում գնահատման առարկա պետք է հանդիսանա գրականության տեսության ուսանողի պատրաստած վերլուծական գեկույցը:

Քանի որ կրթական վերջնարդյունքները սահմանում են դասընթացը կամ ուսումնական մոդուլը յուրացնելու համար ուսանողից ակնկալվող նվազագույն պահանջները, ուստի ձեռքբերված վերջնարդյունքների փաստացի մակարդակը կարելի է չափել միայն գնահատման համապատասխան մեթոդներով և ճիշտ ընտրված գնահատման չափանիշների օգնությամբ: Հետևաբար, պատշաճ մշակված դասընթացը կամ կրթական մոդուլը պետք է ապահովի կրթական վերջնարդյունքների և գնահատման մեթոդների համապատասխանություն: Վերևում ներկայացված 1-ին օրինակի պարագայում (որն առնչվում է բանավոր զեկույցի ներկայացմանը)՝ ակներևաբար գնահատման ենթակա պետք է լինի փաստացի կատարված լսարանային ցուցադրությունը: Սա պահանջում է գնահատման այնպիսի մեթոդների կիրառում, որոնք ուսանողներին հնարավորություն կտան լավագույնս ցուցաբերելու ձեռքբերած կրթական վերջնարդյունքները:

Գնահատման չափորոշիչները և դրանց սահմանումը



Չափորոշիչները նկարագրում են, թե ուսանողը գնահատման առաջադրանքում որքանով է ձեռք բերել կրթական վերջնարդյունքները (այսինքն, ձեռքբերման չափը կամ մակարդակը): Դրանք պարունակում են համառոտ և հստակ

տեղեկատվություն գնահատման տվյալ առաջադրանքում ուսանողի կատարողականի հնարավոր մակարդակների վերաբերյալ, ինչը տարբեր գնահատողներին հնարավորություն է տալիս կատարելու հիմնավորված գնահատում: Գնահատման չափորոշիչները կարող են ունենալ տարբեր ձևաչափ (սովորաբար դրանք նկարագրական բնույթի են): Հստակ սահմանված չափորոշիչները պետք է պարզ և հասկանալի լեզվով ուսանողին ներկայացնեն, թե ինչպե՞ս է գնահատվելու իր գիտելիքների մակարդակը: Այսինքն, դասընթացի գնահատման չափորոշիչները ձևակերպելիս հարկավոր է սահմանել կրթական վերջնարդյունքների ձեռքբերման հնարավոր մակարդակները: Դասախոսն օգտագործում է իր մասնագիտական հմտությունները գնահատման չափորոշիչները մշակելու և դրանցով ուսանողի գիտելիքների մակարդակը չափելու համար: Այնուհետև, ուսանողի կատարողականի (առաջադիմության) գնահատումը կատարվում է սահմանված չափորոշիչներին համապատասխան:

Գնահատման չափորոշիչները



- ❑ Օրինակ, **էսսե** գրելու պարագայում՝ գնահատման չափորոշիչը կարող է ձևակերպվել այսպես. «գրականության աղբյուրների **մանրագնին** վերլուծություն և **քննարկում**»:
- ❑ Այսպիսով, գնահատման **չափանիշները ներառված են** չափորոշիչների նկարագրությունում, սակայն վերջիններս **չպետք է տեղ գտնեն** չափանիշների ձևակերպումներում:

Չափորոշիչների մշակման և նկարագրման եղանակները տարբեր են ու բազմազան: Դրանք ներառում են ուսանողների գնահատման գործընթացի փորձի ուսումնասիրում, նախորդ տարիներին համանման առաջադրանքներում ուսանողների կատարողականների ամփոփում և այլն: Չափորոշիչների մշակման և սահմանման հիմնական խնդիրն է նկարագրել գնահատման առաջադրանքի կատարման ակնկալվող որակական մակարդակները գնահատման յուրաքանչյուր չափանիշի համար: Ընդ որում, առաջին քայլն այս ուղղությամբ պետք է լինի առաջադրանքի կատարման անցողիկ (շեմային) մակարդակի որոշումը, որից հետո արդեն կարելի է նկարագրել նաև վերին և ստորին մակարդակները: Անցողիկ մակարդակի որոշումը հաճախ կատարվում է հենց գնահատման առաջադրանքի մշակման ընթացքում, սակայն գործընկերների և այլ մասնագետների հետ այդ խնդրի քննարկումը կարող է նպաստել կայացված որոշման հուսալիությանը:

Գնահատման չափորոշիչների մակարդակների որոշումը



Չափորոշիչների հիմնական խնդիրն է նկարագրել գնահատման առաջադրանքի կատարման հնարավոր որակական մակարդակները գնահատման յուրաքանչյուր չափանիշի համար: Գնահատման չափորոշիչների մակարդակների քանակը պայմանա-

վորված է գնահատման առաջադրանքի կատարման որակի հստակ տարբերակման հնարավորությամբ և գնահատման սանդղակի պահանջներով: Այսպես, մասնագիտական չափորոշիչների մեծ մասն ընդամենը մեկ ձևակերպում է այն մակարդակի վերաբերյալ, որն անհրաժեշտ է մասնագիտական գործունեություն ծավալելու համար: Բազմամակարդակ չափորոշիչներն ավելի շատ մանրամասներ են տրամադրում հնարավոր որակական մակարդակների վերաբերյալ, ինչը կարևոր է ուսանողների աշխատանքն ավելի ճշգրիտ գնահատելու համար: Օրինակ, ամենապարզ սխեման առաջադրանքի կատարման գնահատումն է երեք մակարդակով (համապատասխանում է նվազագույն պահանջներին, գերազանցում է և ցածր է այդ պահանջներից): Եռամակարդակ սխեման ավելի հեշտ է մշակել, օգտագործել և բացատրել, սակայն այն կարող է բավարար չլինել առաջադրանքի կատարման որակի բոլոր հնարավոր մակարդակները տարբերակելու համար: Առաջին քայլն այս ուղղությամբ պետք է լինի առաջադրանքի կատարման անցողիկ (շեմային) մակարդակի որոշումը, որից հետո արդեն կարելի է նկարագրել նաև վերին և ստորին մակարդակները: Գնահատման առաջադրանքում ուսանողի գիտելիքներին ներկայացվող պահանջները սահմանելիս անհրաժեշտ է հատուկ ուշադրություն դարձնել անցողիկ մակարդակի որոշմանը՝ հավաստիանալու համար, որ այն նկարագրված է հստակ և հասկանալի:


Ստորև ներկայացվում է գնահատման մեկ չափանիշի համար անցողիկ և միջանկյալ մակարդակների չափորոշիչների որոշումը պարզաբանող օրինակ:

Օրինակ. Սահմանված գնահատման չափանիշի համար անցողիկ և միջանկյալ մակարդակների չափորոշիչների որոշում:

Օրինակ, եթե գնահատվում է ուսանողի էսսե կամ գեկույց գրելու կարողությունը, ապա չափանիշը կարող է ձևակերպվել այսպես. *«ցուցաբերել հանձնարարված գրականության հիմնական դրույթները վերլուծելու և ամբողջականացնելու, հիմնական միտքը շարադրելու և հղումներ կատարելու կարողություն»:*

Մակարդակ	Չափորոշիչեր
«Անբավարար»	Փոքր ինչ ծանոթ կամ անծանոթ է հանձնարարված կամ տիպական գրականությանը (տեքստերին), հիմնվում է հիմնականում ոչ գրախոսվող համացանցային աղբյուրների վրա, հղումները բացակայում են:
«Բավարար»	Հիմնականում հիմնվում է հանձնարարված կամ տիպական գրականության վրա՝ այլ աղբյուրներին նվազագույն հղումներ կատարելով կամ առանց հղումների:
«Բավարարից բարձր»	Համապատասխանում է «բավարար» շեմին, սակայն էսսեում տեղ են գտել նաև որոշ հղումներ համարժեք գրականությունից:
«Լավ»	Համապատասխանում է նախորդ շեմին, ի հավելումն օգտագործում է նաև համարժեք գրականության մեծ ցանկ և վերջին հետազոտություններից ստացված տվյալներ:

Մակարդակ	Չափորոշիչեր
«Գերազանց»	Համապատասխանում է «լավ» շեմին, ի հավելումն առաջարկում է գրականությունից ստացված գաղափարների նոր ընկալում: Տարբերակում է աղբյուրներն ըստ որակի և օգտագործում ոչ տիպական, բայց համարժեք աղբյուրներ:



Հաճախ գնահատման չափորոշիչները միավորում են մեկ ընդհանուր աղյուսակում և կազմում գնահատման ռուբրիկներ՝ գնահատման գործընթացն ավելի թափանցիկ և հուսալի դարձնելու նպատակով: Տարբերակում են գնահատման միասնական և վերլուծական ռուբրիկներ:

Միասնական ռուբրիկներն ընդհանրական ձևով նկարագրում են առաջադրանքի կատարման պահանջվող մակարդակը: Դրանք գնահատում են ուսանողների կատարողականի համընդհանուր մակարդակը, այլ ոչ թե առանձին բաղադրիչները և ավելի իրատեսորեն են ներկայացնում ուսանողի կարողություններն ու հմտությունները: Այս ռուբրիկների կիրառումը նախընտրելի է այն դեպքում, երբ գնահատման առաջադրանքի կատարման հանրագումարային արդյունքն (որակը) ավելի կարևոր է, քան նրա առանձին բաղադրիչներինը:

Վերլուծական ռուբրիկները նկարագրում են առաջադրանքի կատարման առանձին մակարդակներն ըստ յուրաքանչյուր չափանիշի: Դրանց կիրառումը հնարավորություն է տալիս ուսանողներին ավելի մանրամասն բացատրելու, թե նրանք որքանով են բավարարում գնահատման առաջադրանքի տարբեր բաղադրիչների պահանջներին: Այս չափորոշիչներն առավել կարևոր են այսպես

կոչված ֆորմատիվ (ձևավորող) գնահատման դեպքում, որի մասին կխոսվի հաջորդիվ: Ընդհանրապես, չափորոշիչների և չափանիշների նկարագրությունը պետք է պարունակի բավարար մանրամասներ, որպեսզի ուսանողները հստակ պատկերացում կազմեն առաջադրանքի կատարման մակարդակների մասին, սակայն չպետք է լինի չափազանց մանրատված՝ դրանով իսկ խրթին և դժվար ընկալելի:

Այս համատեքստում կարևոր կիրառական նշանակություն ունի նաև գնահատման սանդղակը: Գնահատման սանդղակը մի գործիք է, որը ներառում է գնահատման չափանիշները և չափորոշիչները և ծառայում է գնահատման արդյունքների նշագրման համար: Գնահատման սանդղակը կարող է ունենալ տարբեր ձևաչափ, ինչը պայմանավորված է չափորոշիչների ներկայացման ընտրված տարբերակով՝ միասնական կամ վերլուծական: Վերջինս, ինչպես արդեն նշվեց, սովորաբար ներկայացվում է աղյուսակի տեսքով և կոչվում է ռուբրիկ, իսկ միասնական չափորոշիչները կարող են նկարագրվել թե՛ աղյուսակի, և թե՛ պարզապես տեքստային ձևաչափով:

Գնահատման թվանշանները դասակարգում (տարբերակում) են գնահատման առաջադրանքի կատարման որակական մակարդակները: Դրանք պետք է ընտրել խնամքով՝ նախապատվությունը տալով դրական նշանակություն ունեցող բառերին (*սկսնակ, առաջանցիկ, զարգացող*) և խուսափելով բացասականներից (*թույլ, ոչ կոմպերենս, անբավարար*): Եթե միասնական չափորոշիչները գնահատման մեկ նիշ են տալիս գնահատման առաջադրանքի ամբողջ ծավալի կատարման համար, ապա վերլուծական չափորոշիչները, սովորաբար, բաշխում են նիշերն ըստ յուրաքանչյուր չափանիշի: Գնահատման սանդղակը պետք է նպաստի թվանշանների պարզ համակարգի կիրառմանը:

Այստեղ կարևորվում է մեկ հանգամանք ևս: Գնահատման գործընթացում չպետք է միմյանց հետ շփոթել ուսանողի առաջադիմության թվանշումը (գնահատական միավորների հատկացումը)

և ուսանողի գիտելիքների գնահատումը: Թվանշանները հաճախ հիմնված են լինում ոչ միայն կրթական վերջնարդյունքների վրա. թվանշանն չափանիշները հաճախ ներառում են նաև այնպիսի գործոններ, որոնք անմիջականորեն չեն առնչվում կրթական վերջնարդյունքների հետ, ինչպես, օրինակ, պարապմունքներին ներկայությունը և մասնակցությունը, վարքը, ջանասիրությունը և այլն: Չնայած այն հանգամանքին, որ թվանշանները ինչ-որ առումով կարող են փոխկապակցվել կրթական վերջնարդյունքների հետ և արժևորել դասընթացի այս կամ այն ասպեկտը, սակայն որպես կանոն, դրանք կրթական վերջնարդյունքների չափման միջոցներ չեն հանդիսանում: Այնուամենայնիվ, ուսումնառության գնահատումը կարող է և պետք է հիմնված լինի թվանշանների վրա, որոնք գնահատման կարևոր գործիքներ են: Դրանք պետք է ձևակերպված լինեն հստակ և կիրառվեն հետևողականորեն: Թվանշանների առանձին ենթամիավորներ պետք է կիրառվեն հիմնական բաղադրիչների՝ գիտելիքի, կարողությունների և հմտությունների գնահատման համար, որպեսզի հնարավոր լինի որոշել ուսանողի ուժեղ և թույլ կողմերը: Ուժեղ և թույլ կողմերի գնահատման այս մոտեցումն ապահովում է այնպիսի հետադարձ կապ, որն օգտակար է՝ (ա) ուսանողների համար, որովհետև կարող է ուղղորդել և կենտրոնացնել նրանց ուսումնառությունը, (բ) դասախոսի համար, քանի որ կարող է բացահայտել դասընթացի այն բաժինները և թեմաները, որոնք լրացուցիչ պարզաբանման կարիք ունեն, (գ) ուսումնական ստորաբաժանման համար, քանի որ կարող է մատնանշել պահանջվող փոփոխությունները կրթական ծրագրում:

Ինչպես արդեն նշվեց, գոյություն ունեն գնահատման տարբեր ձևեր ու մեթոդներ, որոնցից յուրաքանչյուրը պետք է կիրառել որոշակի կրթական վերջնարդյունքի գնահատման համար: Կրթական վերջնարդյունքների ձեռքբերումն արժանահավատորեն գնահատելու համար գնահատման յուրաքանչյուր տեսակ (օրինակ՝ քննություն, թեստ, նախազիծ, առաջադրանք և այլն) անհրաժեշտ է վերլուծել առավել կարևորվող կրթական վերջնարդյունքների տեսանկյունից: Միաժամանակ, հարկավոր է նախատեսել գնահատ-

ման տարբեր գործողություններ, որոնք պետք է կազմվեն և առաջադրվեն յուրաքանչյուր վերջնարդյունքի գնահատման համար:

Գնահատման արդյունահեն համակարգը գնահատման գործընթացի կառուցման, իրագործման և հետագա զարգացման հիմնական պատասխանատվությունը վերապահում է դասախոսին, քանի որ միայն նա կարող է փոխկապակցել դասընթացի կրթական նպատակներն ու վերջնարդյունքները դասավանդման և գնահատման մեթոդների հետ: Դասախոսն է (կամ դասախոսների մասնագիտական խումբը) սահմանում գնահատման չափանիշները և չափորոշիչները դասակարգելու համար կրթական վերջնարդյունքների գնահատման «գերազանց», «լավ», «բավարար» կամ «անբավարար» մակարդակները:

Գնահատման տեսակները



Կիրառվում է ուսանողների գնահատման երկու հիմնական ձև՝ այսպես կոչված ձևավորող (ֆորմատիվ), որը նախատեսված է ուսումնառության միջանկյալ փուլերում դասավանդման, ուսումնա-

ռության և գնահատման գործընթացների բարելավման նպատակով ուսանողների հետ հետադարձ կապ հաստատելու համար, և եզրափակիչ (սամատիվ), որը նախատեսված է դասընթացի (ուսումնական մոդուլի) ավարտին ուսանողների գիտելիքների գնահատման և նրանց կողմից ակնկալվող կրթական վերջնարդյունքների ձեռքբերման մակարդակը չափելու համար:



Ձևավորող գնահատումը ներառում է ուսանողների հետ հետադարձ կապի որոշակի մեխանիզմներ, քանի որ ուսանողներին և դասախոսին հնարավորություն է ընձեռում դեռևս ուսուցման փուլում տեղեկատվություն ստանալու դասավանդման և ուսումնառության արդյունավետության և ուսանողների ընթացիկ կատարո-

ղականի վերաբերյալ: Ուսանողներն այս դեպքում ստանում են դասախոսի մեկնաբանություններն իրենց թերացումների վերաբերյալ, ինչպես նաև համապատասխան առաջարկություններ՝ դրանք վերացնելու գործնական քայլերի մասին:

Բնական է, որ դասընթացի (կրթական մոդուլի) կամ դրա այս կամ այն հատվածի շրջանակներում առաջանում է նաև եզրափակիչ գնահատման անհրաժեշտություն: Հաճախ գնահատման այդ երկու՝ ձևավորող և եզրափակիչ տեսակները զուգակցվում են, և այդ դեպքում գնահատականն արտահայտում է ուսանողի աշխատանքի ամբողջական (ամփոփիչ) արդյունքը, իսկ դասախոսից ստացվող հետադարձ կապն ապահովում է գնահատման ձևավորող բաղադրիչը: Սակայն, ավանդաբար, հիմնականում գործածվում են եզրափակիչ գնահատման ձևերը, և ուսանողները ստանում են միայն գնահատականը, բայց ոչ գնահատման արդյունքների վերաբերյալ դասախոսի մեկնաբանությունները կամ առաջարկությունները: Միայն քննության արդյունքներով կազմակերպվող սեմինար քննարկման դեպքում կարելի է խոսել գնահատման ձևավորող բաղադրիչի մասին:



Ձևավորող և եզրափակիչ գնահատումներ

Ձևավորող և եզրափակիչ գնահատումների նշանակությունը և սկզբունքային տարբերությունը կարելի է պատկերավոր ներկայացնել կենցաղից վերցված հետևյալ հատկանշական օրինակով.



Այսպես, երբ խոհարարը դեռևս պատրաստման փուլում համտեսում է իր իսկ եփած ճաշատեսակը, նա անում է դա պատրաստման ընթացքը ստուգելու և ճիշտ իրականացնելու նպատակով: Սա ձևավորող գնահատումն է:



Իսկ երբ արդեն հյուրերն են համտեսում այդ նույն ճաշատեսակը, բնականաբար, նրանք գնահատում են նաև պատրաստման գործընթացի վերջնական արդյունքը՝ ճաշատեսակը: Սա ամփոփիչ գնահատումն է:

Ուսումնառության ընթացքում ձեռք բերած գիտելիքները և հմտությունները դրսևորելու (ցուցաբերելու) համար ուսանողներին անհրաժեշտ է համապատասխան ժամանակ: Ուսուցման գործընթացը պետք է կազմակերպվի այնպես, որ մինչև եզրափակիչ գնահատումը ուսանողներին պարբերաբար հնարավորություն տրվի իրենց գիտելիքները, կարողությունները և հմտությունները դրսևորելու համար: Օրինակ, մինչև եզրափակիչ գնահատումը պետք է նախատեսվի մեկ կամ երկու միջանկյալ (ընթացիկ) գնահատում, որի արդյունքում՝ ուսանողների հետ կքննարկվի նրանց կատարողականի որակը:

Գնահատման երկու ձևերը



- **Ձևավորող գնահատում**, որը նախատեսված է ուսումնառության միջանկյալ փուլերում՝ գնահատման և դասավանդման գործընթացի բարելավման նպատակով ուսանողների հետ հետադարձ կապ ապահովելու համար:
- **Եզրափակիչ գնահատում**, որը նախատեսված է ուսումնառության ավարտին ուսանողների գնահատման և նրանց կողմից ակնկալվող կրթական վերջնարդյունքների ձեռքբերման մակարդակը չափելու համար:

Ձևավորող (ախտորոշիչ) գնահատում

ԳՆԱՀԱՏՈՒՄ
ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ



Ձևավորող գնահատման նպատակն է
ԲԱՐԵԼԱՎԵԼ որակը

- Ուսանողներին և դասախոսին տրամադրում է պարզ և հուսալի հետադարձ կապ:
- Հետադարձ կապն օգնում է բարելավելու դասավանդման և ուսումնառության գործընթացները, ինչպես նաև ուսանողների կատարողականը:
- Ուսանողներին տեղեկացնում է իրենց ուսման առաջընթացի մասին:
- Ինտեգրված է դասավանդման և ուսումնառության գործընթացներին:
- Սովորաբար իրականացվում է դասընթացի մատուցման ընթացքում:
- Արդյունքները չեն ազդում ուսանողի արդյունաբար գնահատականի վրա:

Պրակտիկայում, ձևավորող և եզրափակիչ գնահատումներից բացի, հաճախ կիրառվում է նաև գնահատման երրորդ ձևը, որը կոչվում է շարունակական գնահատում: Այն իր բնույթով համապատասխանում է եզրափակիչ գնահատմանը, սակայն իրականացվում է ոչ թե դասընթացի ավարտին, այլ միջանկյալ փուլերում և ազդում է ուսանողի ամփոփիչ գնահատականի վրա: Նպատակը, հիմնականում, ոչ թե ուսումնառության բարելավումն է, այլ ուսանողի ընթացիկ (շարունակական) գնահատումը:

Եզրափակիչ գնահատում

ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ
ԳՆԱՀԱՏՈՒՄ



Եզրափակիչ գնահատման նպատակն է **ԳՆԱՀԱՏԵԼ** որակը

- Գնահատում է ուսանողի կողմից կրթական վերջնարդյունքների ձեռքբերման չափը/մակարդակը:
- Ամփոփում է ուսանողի կրթական ձեռքբերումները և առաջընթացը:
- Հիմք է ստեղծում գնահատականների կամ թվանշանների նշանակման համար:
- Սովորաբար իրականացվում է դասընթացի ավարտին՝ քննության ձևաչափով:
- Գնահատում է կրթական վերջնարդյունքների միայն մեկ մասը (չի կարող գնահատել բոլորը):

Վերջին հարցը, որն առաջանում է այս համատեքստում, հետևյալն է. արդյո՞ք պետք է գնահատվեն դասընթացի (կրթական մոդուլի) բոլոր ակնկալվող կրթական վերջնարդյունքները: Տեսականորեն՝ այո, բայց գործնականում դա հաճախ հնարավոր չէ իրականացնել, քանի որ դժվար է գնահատման համար տրամադրված սեղմ ժամանակահատվածում ստուգել բոլոր կրթական վերջնարդյունքների ձեռքբերման հանգամանքը, հատկապես, եթե դասընթացն ունի շատ վերջնարդյունքներ, գնահատումն իրականացվում է քննության ձևաչափով և միաժամանակ մեծ թվով ուսանողների համար: Այս պարագայում գնահատվում են միայն պատահականորեն ընտրված կրթական վերջնարդյունքները: Որոշ դեպքերում, սակայն, բոլոր կրթական վերջնարդյունքների ձեռքբերման գնահատումը պարտադիր է՝ պայմանավորված մասնագիտական գործունեություն ծավալելու պահանջներով (օրինակ՝ բժշկի, իրավաբանի, օդաչուի համար և այլն):

Շարունակական գնահատում



- Ձևավորող և եզրափակիչ գնահատումների համակցություն է:
- Սովորաբար ներառում է կրկնվող եզրափակիչ գնահատումներ:
- Գնահատականները գրանցվում են:
- Հետադարձ կապը թույլ է կամ բացակայում է:

Ուսումնառության միջավայրը

Ցանկացած միավոր դասընթացի կամ ամբողջական կրթական ծրագրի հաջող իրականացման նախապայմանը անհրաժեշտ ուսումնական միջավայրի առկայությունն է, որի որակն անմիջականորեն ազդում է դասընթացի կամ ծրագրի որակի վրա: Դասընթացի կամ ծրագրի նպատակներն ու խնդիրներն ըստ արժանվույն իրականացնելու համար անհրաժեշտ են համապատասխան մասնագիտական որակներ ունեցող դասախոսական և ուսումնաօժանդակ կազմեր: Ուսումնառության միջավայրը ներառում է նաև ուսումնական տարածքներն ու ենթակառուցվածքները, ուսումնական և հետազոտական գործունեության համար անհրաժեշտ նյութատեխնիկական բազան և այլն: Այս բոլորը ենթակա են շարունակական գնահատման և արդիականացման:

Ստորև ներկայացվում է կրթական ծրագիրը հաջողությամբ իրականացնելու համար անհրաժեշտ ուսումնառության հիմնական ռեսուրսների ցանկը:

- ❑ **Դասախոսական և ուսումնաօժանդակ կազմ:** Ծրագիրը պետք է ապահովված լինի համապատասխան մասնագիտական և մանկավարժական որակներ ունեցող դասախոսական և ուսումնաօժանդակ կազմերով՝ այն արդյունավետորեն իրականացնելու և շարունակաբար գնահատելու համար: Ընդ որում, դասախոսները պետք է տիրապետեն ոչ միայն ծրագրի մաս կազմող իրենց դասընթացներին կամ ուսումնական մոդուլներին, այլև ամբողջական ծրագրին՝ ուսուցումը ծրագրի համատեքստին համահունչ իրականացնելու համար: Կրթական ծրագրի և առանձին դասընթացի համար պետք է սահմանված լինեն դասախոսական կազմի մասնագիտական որակներին ներկայացվող հստակ պահանջներ:

- ❑ **Ուսումնասանթողական նյութեր:** Ծրագիրը պետք է ապահովված լինի բաղադրիչ դասընթացների իրականացման համար անհրաժեշտ հիմնական դասագրքերով, ուսումնական ձեռնարկներով և այլ տպագիր կամ էլեկտրոնային ուսումնական և օժանդակ/լրացուցիչ նյութերով (ինչպիսիք են գիտական պարբերականները, ամսագրերը, թերթերը, զանազան մուլտիմեդիա փաթեթները և այլն), որոնք բավարար քանակությամբ հասանելի են ուսանողներին: Բուհի գրադարանը այս ռեսուրսների տեղակայման և կառավարման հիմնական կառույցն է, սակայն կարևոր են նաև լրացուցիչ ռեսուրսները, ինչպիսիք են համացանցը, ուսումնական ստորաբաժանումների գրադարանները և այլն:
- ❑ **Տեխնիկական միջոցներ:** Ներառում է տեղեկատվության տեխնիկական միջոցները, տեսաձայնային սարքավորումները, լաբորատոր սարքավորումները, տեսապաստառները և այլն:
- ❑ **Ուսումնական տարածքներ:** Ծրագրի իրականացման բոլոր փուլերում ուսանողներին պետք է հատկացվեն համարժեք կահավորված ուսումնական տարածքներ՝ լսարաններ, լաբորատորիաներ, ընթերցասրահներ, մասնագիտացված դասասենյակներ և այլն:
- ❑ **Պրակտիկաների կազմակերպումը:** Պրակտիկաները կրթական ծրագրով սահմանված մասնագիտական մի շարք կարևոր կարողությունների ձևավորման և հմտությունների զարգացման հիմնական ծրագրային բաղադրիչներից են և պետք է իրականացվեն պատշաճ մակարդակով: Պրակտիկաները նույնպես պետք է ունենան հստակ սահմանված նպատակ և ակնկալվող կրթական վերջնարդյունքներ:

Օրինակներ

Ստորև ներկայացվում են գնահատման չափանիշների ձևակերպման, գնահատման չափորոշիչների սահմանման և գնահատման սանդղակում վերջիններիս միավորման մի շարք օրինակներ:

Օրինակ 1. Գնահատվում է ուսանողի «լսարանի առջև ելույթ ունենալու կարողությունը»:

Այս կրթական վերջնարդյունքի գնահատման համար սահմանված են գնահատման 4 չափանիշ և 12 չափորոշիչ, որոնք դասավորված են 3 մակարդակներում:

Գնահատման չափանիշները	Գնահատման չափորոշիչները		
	Գերազանց	Լավ	Բավարար
Գիտելիք	Ելույթն ընդգրկում է տեսական և գործնական հարուստ տեղեկատվություն, բոլոր փաստարկները հիմնավոր են, ներառված են թեմայի հիմնական գաղափարները:	Ընդհանուր առմամբ, ելույթը ներառում է տեսական և գործնական տեղեկատվություն, սակայն երբեմն թերի են հիմնավորումները, հիմնահարցերը միայն մասամբ են ներկայացված:	Միայն մասամբ է ներկայացվում տեղեկատվությունը, գրեթե բացակայում է հիմնավորված խոսքը: Թեման ներկայացված է թերի:
Մեկնաբանություններ և պատասխաններ հարցադրումներին	Ներկայացնողը հարցադրումներին տալիս է տրամաբանված պատասխաններ՝ փաստարկներով հիմնավորելով իր խոսքը:	Ներկայացնողը հարցադրումներին տալիս է հետևողական պատասխաններ, սակայն երբեմն մեկնաբանություններն այնքան էլ համոզիչ չեն:	Ներկայացնողը խուսափում է հարցադրումներից, պատասխանները հիմնավորված չեն:

Գնահատման չափանիշները	Գնահատման չափորոշիչները		
	Գերազանց	Լավ	Բավարար
Տեսողական և օժանդակ նյութերի կիրառումը	Ելույթն ուղեկցվում է համապատասխան և դյուրըմբռնելի տեսողական օժանդակ նյութերով, որոնք ելույթ ունեցողը կիրառում է տեղին՝ հղումներ կատարելով և մեկնաբանելով:	Բանավոր խոսքն ուղեկցվում է համապատասխան տեսողական օժանդակ նյութերով, սակայն դրանք բավական քիչ են: Օժանդակ նյութերն առանձնապես չեն առնչվում ելույթին, ելույթ ունեցողը մոռանում է զուգահեռներ անցկացնել և օգտագործված օժանդակ նյութերին հղումներ կատարել:	Ելույթը չի ուղեկցվում պատկերավոր օժանդակ նյութերով կամ ուղեկցվում է, սակայն ոչ տեղին, օգտագործված նյութերը քիչ են և խրթին:
Ելույթը	Ելույթ ունեցողը խոսում է հստակ և բարձր, լսարանի հետ առկա է անընդհատ կապ, կեցվածքը և շարժումները գրավում են ունկնդիրներին:	Ելույթ ունեցողը խոսում է հստակ և բավականաչափ բարձր լսելի լինելու համար, սակայն կապը լսարանի հետ արդյունավետ չէ:	Ելույթ ունեցողը խոսում է ցածր, ներկաները ձանձրանում են և գրեթե ներգրավված չեն: Լսարանը գրավելու ոչ մի փորձ չի արվում:

Օրինակ. 2. Գնահատվում է ուսանողի «լսարանի առջև ելույթ ունենալու կարողությունը»:

Այս կրթական վերջնարդյունքի գնահատման համար սահմանված են արդեն գնահատման 5 չափանիշ և 20 չափորոշիչ, որոնք դասավորված են 4 մակարդակներում:

Գնահատման չափանիշները	Գնահատման չափորոշիչները			
	Անբավարար	Բավարար	Լավ	Գերազանց
Խոսքի տրամաբանական կառուցվածքը	Լսարանը չի կարողանում հասկանալ նյութը, քանի որ չկա մտքերի տրամաբանական հաջորդականություն:	Լսարանը դժվարությամբ է հետևում մտքերի ընթացքին, քանի որ խոսքի տրամաբանական շղթան հաճախ ընդհատվում է:	Ուսանողի մտքերն աչքի են ընկնում տրամաբանական հաջորդականությամբ, և լսարանը կարողանում է հետևել խոսքի ընթացքին:	Ուսանողի մտքերն ունեն տրամաբանական կոռկառուցվածք, հետաքրքիր ընթացք, բերված օրինակները դիպուկ են և ուշագրավ, լսարանը ներգրավված է և հետաքրքրված:
Առարկայի իմացությունը	Ուսանողի իմացությունը թերի է, չի կարողանում հարցերին սպառիչ պատասխաններ տալ:	Ուսանողը նյութը լավ չի յուրացրել և կարողանում է պատասխանել միայն տարրական հարցերին:	Ուսանողը հեշտությամբ է գտնում բոլոր հարցերի պատասխանները, սակայն դրանք չի կարողանում հիմնավորել:	Ուսանողն ունի հիմնարար գիտելիքներ, տալիս է սպառիչ պատասխաններ՝ մեկնաբանություններով և գաղափարական նոր մոտեցումներով:
Ցուցադրական նյութը	Ուսանողը չի օգտագործում ցուցադրական նյութ, գծապատկերներ, որոնք անհրաժեշտ են նյութը հասկանալի դարձնելու համար:	Ուսանողն օգտագործում է ցուցադրական նյութ և գծապատկերներ, որոնք հազվադեպ են լրացնում տեսքերը և ելույթը:	Ուսանողի ներկայացրած ցուցադրական նյութը և գծապատկերներն առնչվում են տեսքերին և ելույթին, սակայն թերի կողմերը շտկելու անհրաժեշտություն կա:	Ուսանողը մեկնաբանում է ցուցադրական նյութն ու գծապատկերները և դրանցով ավելի բովանդակային դարձնում խոսքը: Բոլոր տեսողական պատկերներն արտահայտիչ են և նպաստում են նյութի ընկալմանը:

Գնահատման չափանիշները	Գնահատման չափորոշիչները			
	Անբավարար	Բավարար	Լավ	Գերազանց
Լեզվամտածողությունը	Ուսանողը ելույթի ընթացքում թույլ է տալիս քերականական և (կամ) արտասանական 4 և ավելի սխալ:	Ուսանողը ելույթի ընթացքում թույլ է տալիս քերականական և (կամ) արտասանական 3 սխալ:	Ուսանողը ելույթի ընթացքում թույլ է տալիս 2 և ոչ ավելի քերականական և (կամ) արտասանական սխալ:	Ուսանողի խոսքը գրագետ է, չկան քերականական և (կամ) արտասանական սխալներ:
Կապը լսարանի հետ	Ուսանողի զեկույցը անկենդան է, բացակայում է կապը լսարանի հետ:	Ուսանողը մեծ մասամբ ընթերցում է զեկույցը, երբեմն-երբեմն փորձում է կապ հաստատել լսարանի հետ:	Ուսանողը մեծ մասամբ պահպանում է կապը լսարանի հետ, սակայն հաճախ անդրադառնում է գրառումներին:	Ուսանողը պահպանում է կապը լսարանի հետ՝ հազվադեպ անդրադառնալով գրառումներին:

Օրինակ 3. Գնահատվում է ուսանողի «թիմային աշխատանքի արդյունքները մասնագիտական լսարանին ներկայացնելու կարողությունը»:

Այս կրթական վերջնարդյունքի գնահատման համար սահմանված են գնահատման 3 չափանիշ և 9 չափորոշիչ, որոնք դասավորված են 3 մակարդակներում:

Գնահատման չափանիշները	Գնահատման չափորոշիչները		
	Օրինակելի	Բավարար	Ենթակա է զարգացման
Ելույթը	Ելույթ ունեցողը խոսեց հստակ, դանդաղ և բավականաչափ բարձր, գեղեցիկ առոգանությամբ: Պահվածքը, շարժումները համապատասխանում էին ելույթի ձևաչափին (պաշտոնական կամ ոչ պաշտոնական): Արդյունավետ օգտագործվեց ելույթին հատկացված ամբողջ ժամանակը:	Ելույթը հասկանալի էր, բայց խոսքը՝ ոչ հստակ: Խոսողի պահվածքը չէր համապատասխանում ելույթի ձևաչափին, սակայն դա էական ազդեցություն չթողեց: Խոսողը չկարողացավ արդյունավետ օգտագործել ժամանակը, ավարտեց նախատեսված ժամանակից մի փոքր շուտ (կամ ուշ):	Խոսքը հստակ չէր, լսարանը դժվարությամբ հետևեց ընթացքին: Խոսողը հուզված էր, լսարանը դժվարությամբ էր կենտրոնանում նյութի բովանդակության վրա: Ելույթ ունեցողը չկարողացավ արդյունավետ օգտագործել ժամանակը, ավարտեց բավականին շուտ (կամ ուշ):
Թիմային աշխատանքը	Ելույթ ունեցողը կամ օգնականը լիարժեք օգտվեցին սարքավորումներից: Ելույթ ունեցողն իր թիմի բոլոր անդամներին արտահայտվելու հնարավորություն տվեց: Անհատական ելույթները տրամաբանորեն հաջորդեցին իրար:	Թիմում տեղի ունեցավ սխալ դերաբաշխում, սակայն դա մեծ ազդեցություն չունեցավ ընթացքի վրա: Թիմի որոշ անդամներ մյուսներին արտահայտվելու հնարավորություն չտվեցին: Անհատական ելույթները տրամաբանորեն հաջորդեցին միմյանց, սակայն որոշ դեպքերում կապը հստակ չէր:	Ելույթն անկազմակերպ էր, չկար հստակ դերաբաշխում: Մեկ կամ մի քանի հոգի իրենց վրա վերցրեցին հիմնական պատասխանատվությունը: Անհատական ելույթների միջև բացակայում էր տրամաբանական կապը:

Գնահատման չափանիշները	Գնահատման չափորոշիչները		
	<i>Օրինակելի</i>	<i>Բավարար</i>	<i>Ենթակա է գարգացման</i>
Բովանդակու- թյունը	Փաստերը կամ օրինակները մանրամասն էին, ճշգրիտ և տեղին: Տեսությունները, որոնց հղում էր արված, հստակ նկարագրված էին և ճիշտ օգտագործված: Վերլուծությունները, քննարկումները և եզրակացություններն առնչվում էին օրինակներին, փաստերին և տեսություններին:	Փաստերն ու օրինակները հիմնականում մանրամասն էին, ճշգրիտ և տեղին, սակայն կային վրիպումներ: Տեսություններին հղումներ արված էին, բայց դրանք հստակ չէին նկարագրված: Վերլուծությունների, քննարկումների և եզրակացությունների միջև կապն ակնհայտ չէր կամ ենթադրվում էր:	Փաստերում և օրինակներում բացակայում էին մանրամասները, օրինակները անհասկանալի էին և ոչ տեղին: Այն տեսությունները, որոնց հղումներ էր կատարված, նկարագրված էին ոչ հստակ և ճիշտ չէին օգտագործված: Ոչ մի տրամաբանական կապ չկար վերլուծությունների, քննարկումների և օրինակների, փաստերի և տեսությունների միջև:

Օրինակ 4. Գնահատվում է օտար լեզվի իմացության մակարդակը³:

Այս կրթական վերջնարդյունքի գնահատման համար սահմանված են գնահատման 5 չափանիշ (խմբավորված երեք կատեգորիաներում) և 30 չափորոշիչ, որոնք դասավորված են 6 մակարդակներում:

Գնահատման չափորոշիչները	Գնահատման չափանիշները			Գրել
	Հասկանալ	Կարդալ	Խոսել	
Ես առանց որևէ դժվարության հասկանում եմ ցանկացած խոսակցական լեզու, կենդանի, թե հեռարձակված, անգամ երբ այն մատուցվում է բնական արագությամբ, պայմանով, որ ժամանակ ունենամ վարժվելու առգանությունը (ակցենտին):	Ես կարող եմ հեշտությամբ հասկանալ ցանկացած գրավոր խոսք, այդ թվում՝ վերացական, կառուցվածքային և լեզվաբանական առումով բարդ տեքստերը, ինչպես, օրինակ, ձեռնարկներ, մասնագիտական հոդվածներ և գրական ստեղծագործություններ:	Ես կարող եմ առանց որևէ ջանքի մասնակցել ցանկացած խոսակցության կամ բանավեճի, ինչպես նաև ծանոթ եմ իդիոմատիկ ու խոսակցական արտահայտություններին: Կարող եմ ազատ արտահայտվել և հստակ փոխանցել իմաստային նրբերանգները: Բավ դժվարանալիս կարող եմ կրկնել և նույնքան սահուն վերաշարադրել նախադասությունն այնպես, որ մյուսներն անգամ չզգան առաջացած դժվարությունը:	Ես կարող եմ ներկայացնել հստակ, սահուն նկարագրություն կամ փաստարկ՝ համատեքստին համահունչ ոճով ու տրամաբանական կառուցվածքով, ինչը լսողին կօգնի գրառել և մտապահել կարևոր հատվածները:	Ես կարող եմ գրել հստակ, սահուն տեքստ՝ համապատասխան ոճով: Կարող եմ գրել բարդ նամակներ, հաշվետվություններ կամ հոդվածներ, որոնք ներկայացնում են կյոթը տրամաբանական հստակ կառուցվածքով, ինչն ընթերցողին կօգնի գրառել և մտապահել կարևոր հատվածները: Ես կարող եմ գրել համառոտագրեր, ինչպես նաև մասնագիտական ու գրական ստեղծագործությունների գրախոսականներ:

Վարպետ C2

3 Վերցված է Եվրոպական լեզվական փաթեթի մակարդակների նկարագրիչներից:

Գնահատման չափորոշիչները	Գնահատման չափանիշները					
	Հասկանալ		Խոսել		Գրել	
	Լսել	Կարդալ	Խոսակցական շիրում	Խոսքի վերարտադրություն	Գրել	Գրել
<p>Ես կարող եմ հասկանալ անգամ երկար խոսքը, երբ այն նույնիսկ հստակ կառուցավորված չէ, և երբ հարաբերությունները միայն ենթադրվում են: Կարող եմ հասկանալ հետադարձաբանությունները և ծրագրերն ու կիրառական առանց մեծ ջանքերի:</p>	<p>Ես կարող եմ հասկանալ երկար ու բարդ փաստագրական և գրական տեքստեր՝ արժևորելով ոճական տարբերությունները: Ես կարող եմ հասկանալ մասնագիտական հոդվածներ և բարդ տեխնիկական ձեռնարկներ, անգամ եթե դրանք չեն առնչվում իմ ոլորտին:</p>	<p>Ես կարող եմ անկաշիվանդ արտահայտվել առանց անհրաժեշտ արտահայտությունները փնտրելու ակնհայտ ջանքերի: Կարող եմ ճկուն և արդյունավետ օգտագործել լեզուն՝ սոցիալական և մասնագիտական նպատակներով: Ես կարող եմ հստակ ձևակերպել գաղափարներ ու կարծիքներ և վարկաբանություններ իմ կարծիքը հայտնել մյուս մասնակիցներին:</p>	<p>Ես կարող եմ հստակ և մանրամասն ներկայացնել բարդ երևույթների նկարագրությունները՝ ինտեգրելով ենթաթեմաները, գարգացնելով առանձին կետեր և եզրակացնելով համապատասխան եզրակացությամբ:</p>	<p>Ես կարող եմ արտահայտվել հստակ և լավ կառուցված տեքստի միջոցով, արտահայտելով որոշակի տեսակետներ: Կարող եմ նամակում, ակնարկում կամ հաշվետվությունում գրել բարդ կյոթերի շուրջ՝ ընդգծելով կարևորը: Ես կարող եմ ընտրել համապատասխան ոճ՝ հաշվի առնելով ընթացողի սանձը:</p>	<p>Ես կարող եմ արտահայտվել հստակ և լավ կառուցված տեքստի միջոցով, արտահայտելով որոշակի տեսակետներ: Կարող եմ նամակում, ակնարկում կամ հաշվետվությունում գրել բարդ կյոթերի շուրջ՝ ընդգծելով կարևորը: Ես կարող եմ ընտրել համապատասխան ոճ՝ հաշվի առնելով ընթացողի սանձը:</p>	
<p>Վարպետ C1</p>						

Գնահատման չափորոշիչ- ները	Գնահատման չափանիշները				Գրեճ	
	Հասկանալ		Խոսել			Գրեճ
	Լսել	Կարդալ	Խոսակցական շփում	Խոսքի վերարտադրություն		
<p>Ես կարող եմ հասկանալ երկար խոսքը և դասավորությունները, իսկ հաջորդական՝ փաստարկների բարդ շարքը, եթե թեման ինձ փոքր-ինչ ծանոթ է: Ես գրեթե կարող եմ հասկանալ հետադասարանական և ընթացիկ ծրագրերը: Կարող եմ հասկանալ կինոնկարները՝ մատուցված առօրյա լեզվով:</p>	<p>Ես կարող եմ կարդալ ժամանակակից խոսքերը և վերաբերող հոդվածներ և հաշվետվություններ, որտեղ հեղինակներն ունեն որոշակի մտտեցում կամ տեսակետ: Ես կարող եմ հասկանալ ժամանակակից գրական արձակագրությունները և ընթացիկ ծրագրերը: Կարող եմ հասկանալ կինոնկարները՝ մատուցված առօրյա լեզվով:</p>	<p>Ես կարող եմ որոշակի վարժությամբ, ինչպես նաև անմիջականորեն շփվել, ինչը միանգամայն հնարավոր է դարձնում մշտական շփումը լեզուն կրողների հետ: Ես կարող եմ ակտիվորեն մասնակցել ծանոթ թեմաների շուրջ բանական վեճերի՝ գնահատելով և պաշտպանելով իմ տեսակետները:</p>	<p>Ես կարող եմ հստակորեն և մանրամասն ներկայացնել իմ հետաքրքրությունների ոլորտի բավականին լայն շրջանակի կրթությունները: Կարող եմ բացատրել թեմատիկ խնդրի վերաբերյալ տեսակետներ՝ տալով հնարավոր տարբերակների առավելություններն ու թերությունները:</p>	<p>Ես կարող եմ գրել հստակ, մանրամասն տեքստ իմ հետաքրքրությունների ոլորտի վերաբերյալ: Կարող եմ գրել ակնարկ կամ հաշվետվություն: Ես կարող եմ գրել սամակներ՝ ընդգծելով դեպքերի և անձնական փորձառության կարևորությունը:</p>		

**Անկախ
B2**

Գեանհատման չափադրոշիչ- ները	Գեանհատման չափանիշները			
	Հասկանալ		Խոսել	Գրել
	Լսել	Կարդալ	Խոսակցական շփում	Խոսքի վերարտադրություն
Ես կարող եմ հասկանալ աշխատանքում, դպրոցում, հանգստանալիս պատահող ծանոթ կրթի շուրջ հստակ, ալիտրական խոսքի գլխավոր միտքը: Կարող եմ հասկանալ բազմաթիվ ռադիո և հեռուստածրագրերը ընթացիկ իրարժառայությունների կամ անձնական, մասնագիտական թեմաների վերաբերյալ, երբ մատուցումը համեմատաբար դանդաղ է և հստակ:	Ես կարող եմ հասկանալ տեքստեր, որոնք հիմնականում պարունակում են հաճախ հանդիպող ամենօրյա կամ աշխատանքին առնչվող բառապաշար: Ես կարող եմ հասկանալ անձնական նամակներ ու դեպքերի նկարագրությունը, արտահայտված գգացմունքներն ու ցանկությունները:	Ես ճանաչողությունը մեծ մասամբ կարող եմ հաղթանակել տվյալ լեզվով խոսող երկրում պատահող իրավիճակները: Ես կարող եմ հանապարհապես մտնել խոսակցության մեջ այն թեմաների շուրջ, որոնք ինձ ծանոթ են, իմ հետաքրքրության շրջանակներում են կամ առօրյա կյանքից (օրինակ՝ ընտանիք, հոբբի, աշխատանք, ճանաչողություն և այլն):	Ես կարող եմ պարզ կերպով կապել բառակապակցությունները, նկարագրել ալիտումներ և դեպքեր, իմ երազանքները, հույսերը և հավակնությունները: Ես կարող եմ հակիրճ պատճառաբանել և բացատրել կարծիքներն ու ծրագրերը: Ես կարող եմ շարադրել պատմություն կամ պատմել գրքի կամ կինոնկարի բովանդակությունը և նկարագրել իմ գգացողությունները:	

**Անկախ
B1**

Գնահատման չափորոշիչ- ները	Գնահատման չափանիշները					
	Հասկանալ		Խոսել		Գրել	
	Լսել	Կարդալ	Խոսակցական շփում	Խոսքի վերարտադրություն	Գրել	Գրել
Ես կարող եմ հասկանալ բառակապակցություններ և հաճախ գործածվող բառեր, որոնք անմիջականորեն վերաբերում են անձնական թեմաներին (օրինակ՝ խիստ պարզ անձնական և ընտանեկան տեղեկություններ, գնումներ, զբաղվածություններ, գնումներ, զբաղվածություն): Կարող եմ ըմբռնել կարճ, հստակ, պարզ ուղերձների ու հայտարարությունների հիմնական իմաստը:	Ես կարող եմ կարդալ շատ հակիրճ, պարզ տեքստեր: Ես կարող եմ քաղել հատուկ, կանխատեսելի տեղեկատվություն ամենօրյա պարզ կյանքից, ինչպիսիք են հայտարարությունները, տեղեկատվական գրքուկները, ցանկերը և ժամանակացույցները և կարող եմ հասկանալ հակիրճ, պարզ անձնական նամակները:	Ես կարող եմ շփվել պարզ և սովորական թեմաների շուրջ, որը պահանջում է ծանոթ իրավիճակների և գործողությունների մասին տեղեկատվության պարզ և անմիջական փոխանակում: Ես կարող եմ վարել շատ հակիրճ ընդհանուր խոսակցություններ, թեև սովորաբար չեմ կարող բավականաչափ երկար շարունակել խոսակցությունը:	Ես կարող եմ օգտագործել բառակապակցությունների և նախադասությունների շարքեր՝ պարզ բառերով և կարգազրկելու իմ ընտանիքը և այլ մարդկանց, կենսապայմանները, իմ մասնագիտական կրթությունն ու իմ ներկա և անցյալ աշխատանքը:	Ես կարող եմ առաջին անհրաժեշտության հարցերի շուրջ գրել հակիրճ, պարզ գրություններ և ուղերձներ: Ես կարող եմ գրել շատ պարզ անձնական նամակ, օրինակ՝ շտրիհակալություն հայտնել ինչ-որ մեկին ինչ-որ բանի համար:	Գրել	Գրել

**Բազային
A2**

Գնահատման չափորոշիչ- ները	Գնահատման չափանիշները					
	Հասկանալի		Խոսակցական շիտում		Գրեկ	
	Լսել	Կարդալ	Խոսակցական շիտում	Խոսքի վերարտադրություն	Գրեկ	Գրեկ
Բազային A1	Ես կարող եմ ըմբռնել ծանոթ բառերը և ինձ, իմ ընտանիքին և անմիջական շրջապատին վերաբերող շատ սովորական բառակապակցություններ, երբ մարդիկ խոսում են դանդաղ և հստակ:	Ես կարող եմ հասկանալ ծանոթ անուններ, բառեր և շատ պարզ նախադասություններ, որոնք հանդիպում են, օրինակ, պատմությունների և պատմությունների վրա կան տեղեկատուներում:	Ես կարող եմ շփվել պարզ ձևով, եթե գրուցակիցս պատրաստ է կրկնել կամ այլ ձևով վերաշարադրել իր ասածն ավելի դանդաղ և օգնել ինձ ձևակերպելու այն, ինչը ես փորձում եմ ասել: Կարող եմ տալ պարզ հարցեր առաջին անկախ շարժման կամ շատ ծանոթ թեմաների վերաբերյալ:	Ես կարող եմ օգտագործել պարզ բառակապակցություններ և նախադասություններ՝ նկարագրելով, թե որտեղ եմ ապրում և ում եմ ճանաչում:	Գրեկ	Գրեկ

Գործնական առաջադրանքներ

Առաջադրանք 21

Ներքոբերյալ աղյուսակի առաջին սյունակում գետեղված կրթական վերջնարդյունքների յուրաքանչյուր տեսակի համար ընտրեք գնահատման համապատասխան ձևեր և մեթոդներ, որոնք Ձեր կարծիքով լավագույնս կնպաստեն ուսանողների կողմից դրանց ձեռքբերման դրսևորմանը: Համապատասխանությունը ցույց տվեք սլաքների օգնությամբ (հնարավոր են մեկից ավելի ճիշտ պատասխաններ):

Առաջադրանք – 21.

Տրված կրթական վերջնարդյունքների յուրաքանչյուր տեսակի համար ընտրեք համապատասխան գնահատման ձևեր/մեթոդներ:

Կրթական վերջնարդյունքի տեսակը	Գնահատման ձևերը/մեթոդները (ինչպես պարզելու ուսումնասիրության արդյունքները ձեռք են բերվել, թե ոչ)
Գիտելիք	Գրավոր քննություն
Իմացություն	Բանավոր քննություն
Կիրառություն	Թեստ՝ ճիշտ/սխալ պատասխաններով
Վերլուծություն	Թեստ՝ բազմակի ընտրության հարցերով
Գնահատում	Կարճ պատասխաններ պահանջող հարցեր
Սինթեզ	Ինքնուրույն աշխատանքի ներկայացում
Այլ կարողություններ (նշել)	Խմբային աշխատանքի ներկայացում
Այլ կարողություններ (նշել)	Նախագծի պաշտպանություն
Այլ կարողություններ (նշել)	Լսարանային ցուցադրություն
Այլ կարողություններ (նշել)	Զեկույցի ներկայացում
և այլն	Կուրսային աշխատանքի պաշտպանություն
	Ավարտական աշխատանքի պաշտպանություն
	Թեզի/ատենախոսության պաշտպանություն
	Քննարկում
	Բանավեճ
	Դերախաղ
	Նախադեպերի վերլուծություն
	Ինդիք
	Էսսե
	Շարադրություն
	Գիտական հոդվածի պատրաստում
	Գրախոսում

Առաջադրանք 22

Օգտվելով **5-ից 7-րդ առաջադրանքներում** դասընթացի (ուսումնական մոդուլի) համար նախկինում սահմանված ակնկալվող կրթական վերջնարդյունքների ցանկից՝ լրացնել ստորև ներկայացված ձևաթերթը և յուրաքանչյուր կրթական վերջնարդյունքի համար ընտրել գնահատման այնպիսի ձևեր ու մեթոդներ, որոնք ուսանողներին հնարավորություն կտան լավագույնս դրսևորելու (ցուցաբերելու) այդ կրթական վերջնարդյունքների ձեռքբերումը:

Այս առաջադրանքը կատարելու համար կարող եք օգտվել **21-րդ առաջադրանքի** աղյուսակում ներկայացված գնահատման ձևերից ու մեթոդներից:

Առաջադրանք – 22.

Սահմանել _____ դասընթացի/ուսումնական մոդուլի գնահատման ձևերն ու մեթոդներն ըստ առանձին կրթական վերջնարդյունքների:

Դասընթացի/ուսումնական մոդուլի կրթական վերջնարդյունքներն ու գնահատման ձևերը/մեթոդները.

Դասընթացի/ուսումնական մոդուլի հաջող ավարտին ուսանողն ունակ կլինի.

Ուսանողը դրսևորում է ձեռքբերած գիտելիքը, իմացությունը և կարողությունները գնահատման հետևյալ ձևերի/մեթոդների օգնությամբ.

Ա. Մասնագիտական գիտելիք և իմացություն.

Գնահատման ձևերը/մեթոդները.

1. _____

1. _____

2. _____

2. _____

3. _____

3. _____

4. _____

4. _____

5. _____

5. _____

6. _____

6. _____

Բ. Գործնական մասնագիտական կարողություններ.

Գնահատման ձևերը/մեթոդները.

1. _____

1. _____

2. _____

2. _____

3. _____

3. _____

4. _____

4. _____

5. _____

5. _____

6. _____

6. _____

Գ. Ընդհանրական (փոխանցելի) կարողություններ.

Գնահատման ձևերը/մեթոդները.

1. _____

1. _____

2. _____

2. _____

3. _____

3. _____

4. _____

4. _____

ԱՄՓՈՓՈՒՄ



Այս գլխի ավարտին դուք կկարողանաք.

1. Մշակել կրթական վերջնարդյունքներին համապատասխան դասավանդման և ուսումնառության արդյունավետ ձևեր ու մեթոդներ:

2. Բացատրել արդյունավետ գնահատման սկզբունքները:
3. Ձևակերպել գնահատման չափանիշներ տրված կրթական վերջնարդյունքների համար:
4. Մշակել կրթական վերջնարդյունքներին համարժեք գնահատման ձևեր և մեթոդներ:
5. Սահմանել գնահատման չափորոշիչներ տրված չափանիշների համար:
6. Որոշել անհրաժեշտ թվով կատարողականի մակարդակներ գնահատման չափորոշիչների համար:
7. Կազմել գնահատման միասնական և վերլուծական ռուբրիկներ:
8. Կատարել ձևավորող (ֆորմատիվ), եզրափակիչ (սամատիվ) և շարունակական (միջանկյալ) գնահատումներ:
9. Միավորել գնահատման չափանիշները, չափորոշիչները և կատարողականի մակարդակները՝ գնահատման սանդղակում:



ԳԼՈՒԽ 3. ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՓԱՍՏԱԹՂԹԱՅԻՆ ՓԱԹԵԹԻ ԿԱԶՄՈՒՄԸ



Բովանդակային տեսանկյունից կրթական ծրագիրը սահմանում է, թե ինչ պետք է ուսուցանվի, որպեսզի ուսանողը պատրաստ լինի ապագա մասնագիտական գործունեությանը: Բացի այդ, կրթական ծրագիրը սահմանում է նաև ուսումնական գործընթացի կազմակերպումը, ինչպես նաև այն ժամաքանակը, որն անհրաժեշտ է ուսանողին ծրագրի բովանդակությունը հաջողությամբ յուրացնելու և ակնկալվող կրթական վերջնարդյունքները ձեռք բերելու համար: Այն սահմանում է նաև ծրագրում ներառված առանձին դասընթացների և ուսումնական մոդուլների յուրացման տևողությունը և հաջորդականությունը:

Կրթական ծրագիրը մի շարք փաստաթղթերի փաթեթ է, որը ներառում է.

- ծրագրի մասնագիրը (սպեցիֆիկացիան),
- ծրագրի ուսումնական պլանը,
- ուսումնական պլանի քարտեզը,
- դասընթացների և այլ ուսումնական մոդուլների համառոտագրերը և աշխատանքային ծրագրերը:

3.1. Կրթական ծրագրի ստեղծման առաջարկի հայտը

Յուրաքանչյուր կրթական ծրագիր անցնում է մշակման որոշակի փուլեր, որոնցից առաջինը ծրագրի ստեղծման առաջարկի հայտի կազմումն է համապատասխան ուսումնական ստորաբաժանման կողմից: Ստորև ներկայացված է կրթական ծրագրի ստեղծման առաջարկի հայտի ձևաթերթը: Այն լրացնում է ծրագրի մշակման աշխատանքային խումբը և ներկայացնում բուհի ուսումնական ղեկավարությանը հայտի գնահատման, և ծրագրի հետագա մշակումն արտոնելու համար:

1. Կրթական ծրագրի ընդհանուր բնութագիրը

Ֆակուլտետ

Կրթական ծրագրի անվանումը և մասնագիտության թվանիշը

.....

2. Ընդունելության չափաքանակները

Ընդունելության փաստացի չափաքանակները վերջին 5 տարում.

Ուստարի	2012/2013	2013/2014	2014/2015	2015/2016	2016/2017
Ընդունված ուսանողների թիվը					

Ընդունելության ակնկալվող չափաքանակը 2017/2018 ուստարում՝

3. Ծրագրի իրականացման հիմնավորումը

Ամփոփ ներկայացվում է նոր կրթական ծրագրի ներմուծման անհրաժեշտությունն ու նպատակահարմարությունը: Պարզաբանվում է նաև, թե ծրագրի ներմուծումը որքանով կնպաստի բուհի և (կամ) ուսումնական ստորաբաժանման առաքելության և հիմնական նպատակների իրականացմանը:

4. Աշխատաշուկայի վերլուծություն

Ներկայացվում են տվյալներ (պոտենցիալ գործատուների, մասնագետների ու շահագրգիռ կառույցների կարծիքներ, վիճակագրական և այլ առկա նյութեր) առաջարկվող կրթական ծրագրի վերաբերյալ՝ աշխատաշուկայի պահանջարկի առնչությամբ:

5. Ծրագրի մրցակցային դիրքը

Ներկայացվում են ամփոփ տվյալներ այլ բուհերում իրականացվող համանման կրթական ծրագրերի վերաբերյալ և գնահատվում են առաջարկվող կրթական ծրագրի մրցակցային առավելությունները և թույլ կողմերը: Հիմնավորվում է բուհի տվյալ ուսումնական ստորաբաժանումում ծրագրի իրականացման նպատակահարմարությունը: Թվարկվում են ազգային և/կամ միջազգային ծրագրային կողմնորոշիչների և չափորոշիչների պահանջները տվյալ մասնագիտության համար:

6. Ծրագրի նպատակները և կրթական վերջնարդյունքները

Թվարկվում են ներմուծվող կրթական ծրագրի հիմնական նպատակները և այն ակնկալվող կրթական վերջնարդյունքները

(գիտելիք, կարողություններ և հմտություններ), որոնք ուսանողները ձեռք կբերեն ծրագրի ավարտին:

7. Պրակտիկան

Մկարագրվում են ուսանողների ուսումնական և արտադրական պրակտիկաների անցկացման ձևերը և տևողությունը, ինչպես նաև այն ձեռնարկությունները և կազմակերպությունները, որտեղ հնարավոր է կամ նպատակահարմար դրանց անցկացումը:

8. Շրջանավարտների աշխատանքի հնարավորությունները

Ներկայացվում են ծրագրի շրջանավարտների հնարավոր աշխատատեղերի և կարիերայի հնարավորությունները: Եթե ծրագիրը նախատեսված է բավարարելու տեղական կամ միջազգային գործատուների (ձեռնարկությունների, կազմակերպությունների, պետական մարմինների) կոնկրետ պատվերները, այսինքն՝ ներմուծվում է նպատակային ձևով, ապա այն հավաստվում է համապատասխան փաստաթղթերով:

9. Դասախոսական կազմը

Այստեղ պետք է հավաստիանալ, որ առաջարկվող ծրագրի իրականացման համար ուսումնական ստորաբաժանումում առկա է անհրաժեշտ որակավորումով և թվակազմով դասախոսական անձնակազմ: Ներկայացվում են այն դասախոսների տվյալները (բուհում սահմանված ձևաչափի CV-ները), ովքեր պետք է սպասարկեն այդ ծրագիրը:

Ծրագրի մշակման աշխատանքային
խմբի ղեկավար՝

Անդամներ՝

.....
.....
.....
.....
.....
.....
.....

Ծրագրի մշակման հայտը քննարկվել և հավանության է
արժանացել ուսումնական ստորաբաժանման կողմից (որոշում
թիվ..... , _____ սեպտեմբերի, 2017թ.):

Ուսումնական ստորաբաժանման ղեկավար

Եզրակացություն կրթական ծրագրի մշակումն արտոնելու վե-
րաբերյալ.

.....
.....
.....
.....
.....

« _____ » հոկտեմբերի, 2017 թ.



3.2. Կրթական ծրագրի մասնագիրը (սպեցիֆիկացիան)

Մասնագիրը կրթական ծրագրի նպատակների, ակնկալվող կրթական վերջնարդյունքների, կառուցվածքի և բովանդակության, ընտրված դասավանդման, ուսումնառության և գնահատման ձևերի ու մեթոդների ամփոփ նկարագրությունն է: Այն նախատեսված է կրթական ծրագիրը մշակող աշխատանքային խմբի, դասախոսական կազմի, ուսանողների, արտաքին և ներքին գնահատողների (փորձագիտական գնահատում) և այլ շահակիցների համար:

Կրթական ծրագրի մասնագիրն օգտագործվում է որպես տեղեկատվական աղբյուր՝

- ուսանողների և դիմորդների համար, ովքեր ցանկանում են հասկանալ կրթական ծրագրի էությունը և առանձնահատկությունները, ծանոթանալ ծրագրի հիմնական նպատակներին և ակնկալվող կրթական վերջնարդյունքներին,
- գործատուների, փորձագետների և արտաքին գնահատողների համար՝ ծրագրի օգնությամբ ձևավորվող մասնագիտական և ընդհանրական կարողություններին ու հմտություններին ծանոթանալու նպատակով,
- մասնագիտական և/կամ ոլորտը կարգավորող իրավասու մարմինների համար, որոնք հավատարմագրում են բարձրագույն կրթության ծրագրերը կամ արտոնում են մասնագիտական գործունեությունը,
- կրթական ծրագրերը հաստատող բուհական կառույցների համար, որոնք պետք է հավաստիանան, որ ծրագրի նպատակները, ակնկալվող կրթական վերջնարդյունքները և բովանդակությունը համահունչ են միմյանց, սահմանված են հստակ, իրատեսական են և համապատասխանում են ՀՀ որակավո-

բումների ազգային և ոլորտային շրջանակների պահանջներին,

- բուհի տարբեր կառույցների և ուսումնական ստորաբաժանումների համար՝ ծրագրի որակի ներքին փորձաքննության, ընթացիկ մոնիթորինգի և պարբերական վերանայման գործընթացներն իրականացնելու համար,
- ուսանողների և շրջանավարտների համար, որոնք հետադարձ կապի օգնությամբ գնահատում են, թե ծրագիրը որքանով ապահովեց ակնկալվող կրթական վերջնարդյունքների ձեռքբերումն իրենց իսկ կողմից:

Կրթական ծրագրի մասնագրի ձևաթերթը ներկայացված է աղյուսակ 8-ում: Այն լրացնում է տվյալ ծրագիրը մշակող աշխատանքային խումբը:

Կրթական ծրագրի մասնագրում ներկայացվում է.

1. Կրթական ծրագրի (մասնագիտության) անվանումը և մասնագիտության թվանիշը:
2. Բուհի լրիվ անվանումը և հասցեովումը:
3. Մասնագիտական կամ այլ իրավասու մարմնի կողմից ծրագրի հավատարմագրված լինելու հանգամանքը (նշվում է, թե ծրագիրը ում կողմից և երբ է վերջին անգամ հավատարմագրվել կամ անցել պաշտոնական արտաքին գնահատում):
4. Շնորհվող որակավորման անվանումն ըստ ՀՀ բարձրագույն կրթության որակավորումների պաշտոնական ցանկի:
5. Ծրագրի մեկնարկի ուսումնական տարին (երբ է առաջին անգամ ծրագիրը մեկնարկել):
6. Ուսումնառության լեզուն (հայերեն):

7. Ուսուցման ձևը (առկա կամ հեռակա):
8. Ծրագրի ընդունելության պահանջները: Բակալավրի առկա ուսուցման ծրագրի համար հղում է տրվում ՀՀ Կառավարության կողմից հաստատված համապատասխան կարգին, իսկ հեռակա ուսուցման ծրագրի համար՝ ՀՀ Կրթության և գիտության նախարարության կողմից հաստատված համապատասխան կարգին (ներկայացվում է նաև ընդունելության քննությունների ցանկն ըստ առարկաների): Մագիստրոսի առկա և հեռակա ուսուցման ծրագրերի դեպքում հղում է կատարվում բուհի համապատասխան կանոնակարգերին (նշվում է նաև, որ նույն մասնագիտության շրջանակներում ընդունելությունն անցկացվում է առանց քննությունների, իսկ հարակից մասնագիտություններով դիմորդները հանձնում են համապատասխան մասնագիտության բակալավրի ավարտական ամփոփիչ քննությունը):
9. Ծրագրի նպատակները (նշել 2-4 նպատակ): Կրթական ծրագրի նպատակները լայն և ընդհանրական ձևակերպումներ են ուսուցման և դասավանդման մտադրությունների վերաբերյալ: Նպատակներն ընդհանուր գծերով մատնանշում են, թե ինչ է ուսուցանվելու ծրագրի շրջանակներում: Նպատակները սովորաբար սահմանվում են դասախոսական կազմի տեսանկյունից՝ ներկայացնելով ծրագրի ամենակարևոր դրույթները, բնութագրական առանձնահատկությունները և (կամ) ուղղվածությունը:
10. Ծրագրի կրթական վերջնարդյունքները և համապատասխան դասավանդման, ուսումնառության և գնահատման ձևերն ու մեթոդները: Կրթական վերջնարդյունքներն ակնկալվող այն գիտելիքները, կարողությունները և հմտություններն են, որոնք ցույց են տալիս, թե ծրագրի ավարտին հատկապես ինչ պետք է գիտենա, հասկանա և կարողանա անել ուսանողը: Կրթական վերջնարդյունքները ձևակերպվում են այնպես, որ ուսանողների կողմից գիտելիքների, կարողությունների

և հմտությունների ձեռքբերումը լինի դրսևորելի (դիտարկելի), չափելի և գնահատելի: Այդ նպատակով վերջնարդյունքի ձևակերպումը հարկավոր է սկսել ակտիվ, գործողություն ցույց տվող բայով⁴: Տարբեր տեսակի կրթական վերջնարդյունքների սահմանման համար խորհուրդ է տրվում օգտվել Բլումի տաքսոնոմիայի⁵ տարբեր մակարդակների իմացության ձևերից: Այսպես, մասնագիտական գիտելիքի և իմացության (խումբ Ա) ձևակերպման համար հարկավոր է օգտվել Բլումի տաքսոնոմիայի 1-2-րդ մակարդակների համար առաջարկվող բայերից, իսկ գործնական մասնագիտական կարողությունների (խումբ Բ) և ընդհանրական/ փոխանցելի կարողությունների (խումբ Գ) սահմանման համար՝ տաքսոնոմիայի 3-6-րդ մակարդակների բայերից: Բակալավրի ծրագրի համար սահմանվում են մինչև 16-20 կրթական վերջնարդյունք (ներառյալ 3-5 ընդհանրական վերջնարդյունք), իսկ մագիստրոսի ծրագրի համար՝ 14-18 (ներառյալ 2-4 ընդհանրական): Այստեղ ներկայացվում են նաև յուրաքանչյուր կրթական վերջնարդյունքին համապատասխան դասավանդման⁶ և ուսումնառության⁷ մեթոդները, որոնք ընտրվում են այնպես,

⁴ Հարկավոր է խուսափել *իմանալ, գիտենալ, սովորել, տեղյակ/ծանոթ լինել, հասկանալ, ընկալել, ըմբռնել, տիրապետել* և նման այլ բայերից, քանի որ դրանց դրսևորման և գնահատման եղանակներն անորոշ են:

⁵ Ուսումնառության գործընթացում իմացության մակարդակների դասակարգման եղանակ է (տաքսոնոմիա՝ նշանակում է դասակարգում), որը մշակել է ամերիկացի գիտնական Բենիամին Բլումը: Իմացության ձևերի այս հիերարխիկ դասակարգումն ունի 6 մակարդակ՝ ըստ աճող բարդության, սկսած փաստերի պարզ հիշողությունից ստորին մակարդակում, մինչև գնահատումը՝ ամենաբարձրում:

⁶ Ցույց է տալիս, թե ինչ է անում դասախոսը լսարանում. կարգում է դասախոսություն, վարում է գործնական կամ սեմինար պարապմունք, անց է կացնում քննարկում, կազմակերպում է լաբորատոր/դաշտային աշխատանք և այլն:

⁷ Ցույց է տալիս, թե ինչ են անում ուսանողները լսարանում և լսարանից դուրս. պասսիվ ունկնդրում, հանձնարարված գրականության ընթերցում, մասնակցություն քննարկումներին, փորձերի կատարում հատուկ սարքավորումներով, նախագծերի, ինքնուրույն կամ տնային աշխատանքների կատարում, խնդիրների լուծում, չափումների/դիտարկումների իրականացում, ինքնուրույն հետազոտություն, խմբային աշխատանք, խնդրի լուծման սցենարների կազմում, նախադեպերի վերլուծություն և այլն:

որպեսզի լավագույնս նպաստեն ուսանողների կողմից կոնկրետ կրթական վերջնարդյունքի ձեռքբերմանը: Տրվում է նաև, թե ինչ ձևերով են գնահատվելու ուսանողները ընթացիկ և եզրափակիչ քննությունների ու ստուգումների/ ստուգարքների ընթացքում: Գնահատման մեթոդներն⁸ ընտրվում են այնպես, որ գնահատման առաջադրանքում ուսանողները կարողանան լավագույնս դրսևորել/ցուցաբերել իրենց ձեռք բերած կրթական վերջնարդյունքները, իսկ դասախոսը արժանահավատ կերպով գնահատի/չափի ուսանողների կողմից այդ վերջնարդյունքների ձեռքբերման մակարդակը: Կրթական վերջնարդյունքի յուրաքանչյուր տեսակ (գիտելիք, իմացություն, տարբեր կարողություններ, հմտություններ և այլն) առավել արդյունավետ է գնահատվում համապատասխան ձևերով ու մեթոդներով:

11. Ծրագրի ուսումնական պլանը: Ներկայացնում է ծրագրի ընդհանուր կառուցվածքն ու բովանդակությունն ըստ հիմնական կրթամասերի (ներառյալ դրանց միջև կրեդիտների բաշխումը), ուսումնական մոդուլներն ըստ ուստարիների և կիսամյակների (ներառյալ դրանց հատկացված կրեդիտները), պրակտիկաները, քննությունների ու ավարտական ատեստավորման ձևերը և այլն: Լրացվում է ըստ բուհում սահմանված ձևաթերթի:

12. Ուսումնական պլանի քարտեզը: Ուսումնական պլանի քարտեզը կապ է հաստատում ծրագրի կրթական վերջնարդյունքների և այն ուսումնական մոդուլների միջև, որոնց օգնությամբ այդ վերջնարդյունքները ձևավորվում են ուսանողների մոտ: Քարտեզի սյունակների գլխամասում դասավորվում են ծրագրով սահմանված կրթական վերջնարդյունք-

⁸ Գրավոր կամ բանավոր քննություն, կարճ պատասխաններ պահանջող հարցումներ, ճիշտ/սխալ կամ բազմակի ընտրության թեստեր (թղթի վրա կամ էլեկտրոնային), բանավոր ներկայացման, զեկույցի, էսսեի, խմբային կամ ինքնուրույն/կուրսային աշխատանքի կամ նախագծի գնահատում, քննարկման/բանավեճի կամ դերախաղի արդյունքում գնահատում և այլն:

ները (ըստ համապատասխան դասակարգման՝ Ա, Բ և Գ խմբերում), իսկ տողերի սկզբնամասում՝ այն ուսումնական մոդուլները (դասընթացները և այլն), որոնք պետք է նպաստեն դրանց ձևավորմանը: Յուրաքանչյուր կրթական վերջնարդյունքի և այն ձևավորող հիմնական ուսումնական մոդուլ(ներ)ի հատման վանդակում դրվում է «+» նշանը՝ դրանք շաղկապելով միմյանց հետ: Լրացվում է ըստ ներկայացված ձևաթերթի: Ուսումնական պլանի քարտեզում նշվում է նաև ուստարին, որի ավարտին տվյալ կրթական վերջնարդյունքը ձեռք է բերվում ծրագրում ընդգրկված բոլոր ուսանողների կողմից:

13. Գնահատման համակարգը: Հակիրճ ներկայացվում է բուհում գործող գնահատման համակարգը՝ միջանկյալ և եզրափակիչ քննություններ, ստուգումներ/ստուգարքներ, գնահատման սանդղակը, գնահատման միավորների բաշխումն ըստ գնահատման ձևերի և այլն:
14. Շրջանավարտների ապագա կարիերայի հնարավորությունները: Ներկայացվում են ծրագրի շրջանավարտների հնարավոր աշխատատեղերը և կարիերայի հնարավորությունները: Եթե ծրագիրն իրականացվում է կոնկրետ գործատու(ներ)ի պատվերով (նպատակային ձևով), ապա նշվում է նաև այդ հանգամանքը:
15. Ուսումնառության օժանդակության ռեսուրսները և ձևերը: Նշվում են ծրագրում ընդգրկված ուսանողների համար հասանելի ուսումնառության ռեսուրսները (տպագիր, էլեկտրոնային, առցանց, տեսաձայնային ուսումնական ռեսուրսները և ենթակառուցվածքները), որոնք օգնում են ուսանողներին՝ ձեռք բերելու ծրագրով ակնկալվող կրթական վերջնարդյունքները: Նշվում են դասավանդման և ուսումնառության նորարարական եղանակները կամ միջոցները, որոնք կարևոր են տվյալ ծրագրի նպատակների հաջող իրականացման համար:

16. Հարկավոր է թվարկել ՀՀ կամ օտարերկրյա այն կրթական չափորոշիչները, ծրագրային կամ առարկայական հենանիշները (բենչմարկ), այլ բուհերի տվյալ մասնագիտության համանման կրթական ծրագրերը, Եվրոպական բարձրագույն կրթության տարածքի որակավորումների շրջանակը, ՀՀ բարձրագույն կրթության որակավորումների ազգային կամ ոլորտային շրջանակները, որոնք օգտագործվել կամ հիմք են հանդիսացել ծրագիրը մշակելիս կամ նրա կրթական վերջնարդյունքները սահմանելիս:
17. Լրացուցիչ տեղեկատվություն ծրագրի վերաբերյալ: Նշվում է լրացուցիչ տեղեկատվություն, որը ներկայացված չէ նախորդ բաժիններում, սակայն կարևոր նշանակություն ունի ծրագրի առանձնահատկությունները կամ հատուկ դերակատարությունն ընդգծելու համար (օրինակ՝ այլ բուհի հետ համատեղ իրականացվող ծրագրի, գործատուի պատվերով իրականացվող նպատակային ծրագրի պարագայում և այլն), եթե այդպիսիք կան:

Աղյուսակ 8. Կրթական ծրագրի մասնագրի (սպեցիֆիկացիայի) ձևաթերթը

ԲՈՒՏԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ

Ֆակուլտետ

նշել ֆակուլտետը

նշել կրթական ծրագրի անվանումը

ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՄՆԱԳԻՐ

1. Ծրագրի անվանումը և մասնագիտության թվանիշը	
2. Բուհը	
3. Ծրագրի հավատարմագրումը	
4. Շնորհվող որակավորումը	
5. Ծրագրի մեկնարկի ուսումնական տարին	
6. Ուսումնառության լեզուն	
7. Ուսուցման ձևը	

8. Ծրագրի ընդունելության պահանջները

--

9. Ծրագրի նպատակները

Ծրագրի նպատակն է.

-
-
-
-

10. Ծրագրի կրթական վերջնարդյունքները: Դասավանդման, ուսումնառության և գնահատման ձևերն ու մեթոդները

Ա. Մասնագիտական գիտելիք և իմացություն

Այս ծրագրի ավարտին ուսանողն ունակ կլինի.

Ա1.

Ա2.

Ա3.

Ա4.

Ա5.

Ա6.

Ա7.

Դասավանդման և ուսումնառության մեթոդները

Ուսանողը ձեռք է բերում մասնագիտական գիտելիքը և իմացությունը հետևյալ մեթոդներով.

1.

2.

3.

4.

Գնահատման մեթոդները

Ուսանողի մասնագիտական գիտելիքը և իմացությունը գնահատվում են հետևյալ մեթոդներով.

1.

2.

3.

<p>Բ. Գործնական մասնագիտական կարողություններ</p> <p>Այս ծրագրի ավարտին ուսանողն ունակ կլինի.</p> <p>Բ1.</p> <p>Բ2.</p> <p>Բ3.</p> <p>Բ4.</p> <p>Բ5.</p> <p>Բ6.</p> <p>Բ7.</p> <p>Բ8.</p>	<p>Դասավանդման և ուսումնառության մեթոդները</p> <p>Ուսանողը ձեռք է բերում գործնական մասնագիտական կարողությունները հետևյալ մեթոդներով.</p> <ol style="list-style-type: none"> 1. 2. 3. 4. <p>Գնահատման մեթոդները</p> <p>Ուսանողի գործնական մասնագիտական կարողությունները գնահատվում են հետևյալ մեթոդներով.</p> <ol style="list-style-type: none"> 1. 2. 3.
<p>Գ. Ընդհանրական (փոխանցելի) կարողություններ</p> <p>Այս ծրագրի ավարտին ուսանողն ունակ կլինի.</p> <p>Գ1.</p> <p>Գ2.</p> <p>Գ3.</p> <p>Գ4.</p> <p>Գ5.</p>	<p>Դասավանդման և ուսումնառության մեթոդները</p> <p>Ուսանողը ձեռք է բերում ընդհանրական կարողություններ հետևյալ մեթոդներով.</p> <ol style="list-style-type: none"> 1. 2. 3. <p>Գնահատման մեթոդները</p> <p>Ուսանողի ընդհանրական կարողությունները գնահատվում են հետևյալ մեթոդներով.</p> <ol style="list-style-type: none"> 1. 2.

11. Ծրագրի ուսումնական պլանը

Կցվում է ըստ բուհում ընդունված ձևաթերթի

12. Ուսումնական պլանի քարտեզը

Կցվում է ըստ կից ձևաթերթի

13. Գնահատման համակարգը

14. Շրջանավարտների ապագա կարիերայի հնարավորությունները

15. Ուսումնառության օժանդակության ռեսուրսները և ձևերը

16. Կրթական չափորոշիչները կամ ծրագրային կողմնորոշիչները, որոնք օգտագործվել են ծրագիրը մշակելիս

17. Լրացուցիչ տեղեկատվություն ծրագրի վերաբերյալ

նշել կրթական ծրագրի անվանումը

Ծրագրի կրթական վերջնարդյունքները

Ա. Մասնագիտական գիտելիք և իմացություն	Բ. Գործնական մասնագիտական կարողություններ
Ա1	Բ1
Ա2	Բ2
Ա3	Բ3
Ա4	Բ4
Ա5	Բ5
Ա6	Բ6
Ա7	Բ7
	Բ8

Գ. Ընդհանրական (փոխանցելի) կարողություններ

Գ1	Գ4
Գ2	Գ5
Գ3	

Ծրագրի կրթական վերջնարդյունքները

Ա1	Ա2	Ա3	Ա4	Ա5	Ա6	Ա7	Բ1	Բ2	Բ3	Բ4	Բ5	Բ6	Բ7	Բ8	Գ1	Գ2	Գ3	Գ4	Գ5	
Ուստարիւն, որի ավարտին տվյալ կրթական վերջնարդյունքը ձեռք է բերվում ծրագրում ընդգրկված ուսանողների կողմից																				

3.3. Դասընթացի համառոտագիրը

Կրթական ծրագրի բաղկացուցիչ դասընթացները և ուսումնական մոդուլները նկարագրվում են համառոտագրի օգնությամբ, որի ձևաթերթը ներկայացված է աղյուսակ 9-ում: Այն լրացնում է դասընթացը վարող դասախոսը կամ դասախոսների խումբը:

Դասընթացի (ուսումնական մոդուլի) համառոտագիրը ներառում է.

1. Դասընթացի թվանիշը: Տրվում է դասընթացի նույնականացման թվանիշը՝ բուհում ընդունված դասընթացների դասակարգման ձևաչափին համապատասխան:
2. Դասընթացի անվանումը: Տրվում է դասընթացի պաշտոնական լրիվ անվանումն առանց կրճատումների և հապավումների:
3. Դասընթացին հատկացված ECTS կրեդիտների թիվն ըստ ուսումնական պլանի:
4. Շաբաթական ժամերի ընդհանուր քանակն ըստ ուսումնական պլանի (օրինակ՝ 5ժամ/շաբաթական):
5. Շաբաթական ժամաքանակի բաշխումն ըստ պարապմունքի ձևերի (դասախոսություն, գործնական պարապմունք, լաբորատոր աշխատանք և այլն): Օրինակ՝ դաս.-2ժ, գործ.-1ժ, լաբ.-2ժ:
6. Կայացման կիսամյակը (օրինակ՝ 1-ին, 4-րդ կամ 8-րդ):
7. Գնահատման ձևը: Տրվում է, թե ինչ ձևերով է գնահատվելու ուսանողը (օրինակ՝ 2 ընթացիկ և 1 եզրափակիչ քննություն, միայն եզրափակիչ քննություն կամ ստուգարք և այլն):

8. Դասընթացի նպատակները (նշել 1-3 նպատակ): Դասընթացի նպատակները լայն և ընդհանրական ձևակերպումներ են ուսուցման և դասավանդման մտադրությունների վերաբերյալ: Նպատակներն ընդհանուր գծերով մատնանշում են, թե ինչ է ուսուցանելու դասախոսը դասընթացի շրջանակներում: Նպատակները սովորաբար սահմանվում են դասախոսի տեսանկյունից՝ ներկայացնելով դասընթացի ամենակարևոր դրույթները:

9. Դասընթացի կրթական վերջնարդյունքները: Կրթական վերջնարդյունքներն ակնկալվող այն գիտելիքները, կարողությունները և հմտություններն են, որոնք ցույց են տալիս, թե դասընթացի ավարտին հատկապես ի՞նչ պետք է գիտենա, հասկանա և կարողանա անել ուսանողը: Կրթական վերջնարդյունքները ձևակերպվում են այնպես, որ ուսանողների կողմից գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձեռքբերումը լինի դրսևորելի (դիտարկելի), չափելի և գնահատելի: Այդ նպատակով՝ վերջնարդյունքի ձևակերպումը հարկավոր է սկսել ակտիվ, գործողություն ցույց տվող բայով⁹: Տարբեր տեսակի կրթական վերջնարդյունքների սահմանման համար խորհուրդ է տրվում օգտվել Բլումի տաքսոնոմիայի¹⁰ տարբեր մակարդակների իմացության ձևերից: Այսպես, մասնագիտական գիտելիքի և իմացության (խումբ Ա) ձևակերպման համար հարկավոր է օգտվել Բլումի տաքսոնոմիայի 1-2-րդ մակարդակների համար առաջարկվող բայերից, իսկ գործնական մասնագիտական կարողությունների (խումբ Բ) և ընդհանրական/փոխանցելի կարողությունների (խումբ Գ)

⁹ Հարկավոր է խուսափել *ինանայ, գիտենայ, սովորել, տեսնել/ծանոթ լինել, հասկանայ, ընկալել, ըմբռնել, տիրապետել* և նման այլ բայերից, քանի որ դրանց դրսևորման և գնահատման եղանակներն անորոշ են:

¹⁰ Ուսումնառության գործընթացում իմացության մակարդակների դասակարգման եղանակ է (տաքսոնոմիա՝ նշանակում է դասակարգում), որը մշակել է ամերիկացի գիտնական Բենիամին Բլումը: Իմացության ձևերի այս հիերարխիկ դասակարգումն ունի 6 մակարդակ՝ ըստ աճող բարդության, սկսած փաստերի պարզ հիշողությունից՝ ստորին մակարդակում, մինչև գնահատումը՝ ամենաբարձրում:

սահմանման համար՝ տաքսոնոմիայի 3-6-րդ մակարդակների բայերից: Դասընթացի (կրթական մոդուլի) համար սահմանվում են մինչև 4-8 կրթական վերջնարդյունք¹¹ (ներառյալ 1-2 ընդհանրական վերջնարդյունք):

10. Դասավանդման, ուսումնառության և գնահատման ձևերն ու մեթոդները: Ներկայացվում են յուրաքանչյուր կրթական վերջնարդյունքին համապատասխան դասավանդման¹² և ուսումնառության¹³ մեթոդները, որոնք ընտրվում են այնպես, որ լավագույնս նպաստեն ուսանողների կողմից կոնկրետ կրթական վերջնարդյունքի ձեռքբերմանը: Գնահատման մեթոդներն¹⁴ ընտրվում են այնպես, որ գնահատման առաջադրանքում ուսանողները կարողանան լավագույնս դրսևորել/ցուցաբերել իրենց ձեռք բերած կրթական վերջնարդյունքները, իսկ դասախոսն արժանահավատ կերպով գնահատի/չափի ուսանողների կողմից այդ վերջնարդյունքների ձեռքբերման որակական մակարդակը: Կրթական վերջնարդյունքի յուրաքանչյուր տեսակ (գիտելիք և իմացություն, տարբեր կարողություններ ու հմտություններ և այլն) առավել արդյունավետ է ձեռք բերվում և գնահատվում համապատասխան ձևերի ու մեթոդների կիրառմամբ:

¹¹ Սովորաբար, 2 կրեդիտ ծավալով դասընթացի համար սահմանվում է մինչև 4 կրթական վերջնարդյունք, 6 կրեդիտ ծավալով դասընթացի համար՝ մինչև 8 կրթական վերջնարդյունք և այլն:

¹² Ցույց է տալիս, թե ինչ է անում դասախոսը լսարանում. կարդում է դասախոսություն, վարում է գործնական կամ սեմինար պարապմունք, անց է կացնում քննարկում, կազմակերպում է լաբորատոր/դաշտային աշխատանք և այլն:

¹³ Ցույց է տալիս, թե ինչ են անում ուսանողները լսարանում և լսարանից դուրս. պասսիվ ունկնդրում, հանձնարարված գրականության ընթերցում, մասնակցություն քննարկումներին, փորձերի կատարում հատուկ սարքավորումներով, նախագծերի, ինքնուրույն կամ տնային աշխատանքների կատարում, խնդիրների լուծում, չափումների/դիտարկումների իրականացում, ինքնուրույն հետազոտություն, խմբային աշխատանք, խնդրի լուծման սցենարների կազմում, նախադեպերի վերլուծություն և այլն:

¹⁴ Գրավոր կամ բանավոր քննություն, կարճ պատասխաններ պահանջող հարցումներ, ճիշտ/սխալ կամ բազմակի ընտրության թեստեր (թղթի վրա կամ էլեկտրոնային), բանավոր ներկայացման, գեկույցի, էսեի, խմբային կամ ինքնուրույն/կուրսային աշխատանքի կամ նախագծի գնահատում, քննարկման/բանավեճի կամ դերախաղի արդյունքում գնահատում և այլն:

11. Այս բաժնում հաջորդականությամբ ներկայացվում է, թե կրթական ծրագրի հատկապես որ վերջնարդյունք(ներ)ի ձևավորմանն է գլխավորապես նպաստում տվյալ դասընթացը կամ ուսումնական մոդուլը (օրինակ՝ Ա1. [անվանումը], Բ2. [անվանումը] և այլն):
12. Գնահատման ձևերը և չափանիշները: Ներկայացվում է, թե ինչ ձևերով են գնահատվելու ուսանողները ընթացիկ և եզրափակիչ քննությունների, ստուգումների/ստուգարքների ընթացքում, ինչպես նաև գնահատման ձևերից յուրաքանչյուրում ինչ չափանիշներ են կիրառվելու ձեռք բերված կրթական վերջնարդյունքների մակարդակը չափելու (գնահատելու) համար:
13. Դասընթացի բովանդակությունը: Ներկայացվում է դասընթացի (ուսումնական մոդուլի) խիստ համառոտ բովանդակությունն ըստ հիմնական բաժինների (խոշոր գլուխների կամ մասերի, բայց ոչ ըստ մանրամասն վերնագրերի, առավելագույնը՝ մինչև 1/5 էջի սամաններում):
14. Հիմնական գրականություն: Տրվում է դասընթացը (ուսումնական մոդուլը) հաջողությամբ յուրացնելու համար պահանջվող հիմնական գրականության ցանկը (առավելագույնը մինչև 5 անուն՝ վերջին 10-15 տարիների հրատարակություն):

Աղյուսակ 9. Դասընթացի համառոտագրի ձևաթերթը

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՄԱՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ

կրթական ծրագիր

նշել կրթական ծրագիրը

նշել դասընթացի անվանումը

ԴԱՍԸՆԹԱՑԻ ՀԱՄԱՌՈՏԱԳԻՐ

1. [թվանիշ] ¹⁵	2. [դասընթացի անվանումը]	3. [թիվ] ECTS կրեդիտ
4. [շաբաթական ժամերի քանակ] ժամ/շաբ.	5. [ժամաքանակի բաշխումն ըստ պարապմունքի ձևերի]	
6. [կիսամյակ]	7. [զնահատման ձևը]	
8. Դասընթացի նպատակներն են.		
<ul style="list-style-type: none"> • • • 		
9. Դասընթացի կրթական վերջնարդյունքները Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի. (<i>ս. մասնագիտական գիտելիք և իմացություն</i>) ա1. ա2.	10. Դասավանդման, ուսումնառության և գնահատման մեթոդները Ուսանողը ձեռք է բերում մասնագիտական գիտելիքը և իմացությունը հետևյալ մեթոդներով. 1. 2. 3. Ուսանողի մասնագիտական գիտելիքը և իմացությունը գնահատվում են հետևյալ մեթոդներով.	

¹⁵ Լրացնելուց հետո ջնջել ուղղանկյուն փակագծերը և այնտեղ գրված ուղղորդող տեքստը:

ա3.

(բ. գործնական մասնագիտական կարողություններ)

բ1.

բ2.

բ3.

(գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ, եթե կան)

գ1.

գ2.

1.

2.

3.

Ուսանողը ձեռք է բերում գործնական մասնագիտական կարողություններ հետևյալ մեթոդներով.

1.

2.

3.

Ուսանողի գործնական մասնագիտական կարողությունները գնահատվում են հետևյալ մեթոդներով.

1.

2.

3.

Ուսանողը ձեռք է բերում ընդհանրական/փոխանցելի կարողություններ հետևյալ մեթոդներով.

1.

2.

3.

Ուսանողի ընդհանրական/փոխանցելի կարողությունները գնահատվում են հետևյալ մեթոդներով.

1.

2.

3.

11. Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունք(ներ)ը.

1.

2.

12. Գնահատման ձևերը և չափանիշները.

1. 1-ին ընթացիկ քննություն. [ներկայացնել գնահատման ձևը և չափանիշները]:
2. 2-րդ ընթացիկ քննություն. [ներկայացնել գնահատման ձևը և չափանիշները]:
3. Եզրափակիչ քննություն. [ներկայացնել գնահատման ձևը և չափանիշները]:
4. Ստուգաք. [ներկայացնել գնահատման ձևը և չափանիշները]:

13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.

14. Հիմնական գրականության ցանկ.

- 1.
- 2.
- 3.
- 4.
- 5.

ԱՄՓՈՓՈՒՄ



Այս գլխի ավարտին դուք կկարողանաք.

1. Կազմել կրթական ծրագրի ստեղծման առաջարկի հայտը:
2. Կազմել և լրացնել կրթական ծրագրի մասնագիրը (սպեցիֆիկացիան):
3. Մշակել կրթական ծրագրի ուսումնական պլանի քարտեզը:
4. Կազմել ծրագրի բաղկացուցիչ դասընթացների համառոտագրերը:
5. Կազմել կրթական ծրագրի ամբողջական փաստաթղթային փաթեթը:



ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Բուդաղյան Ա. Ս., Կարաբեկյան Ս. Բ., Կոմպետենցիաների ձևավորմանն ուղղված կրթական ծրագրերի կառուցում և իրականացում. Մեթոդական ուղեցույց: Բարձրագույն կրթության ռազմավարական հետազոտությունների ազգային կենտրոն, 110 էջ, Թայմթուպրինթ, Երևան, 2010:
2. Robert M. Diamond. Designing and Assessing Courses and Curricula. A Practical Guide (3-rd edition). Jossey-Bass, San Francisco, 2008. 487 pages.
3. Judith G. O'Brein, Barbara J. Millis, Margaret W. Cohen. The Course Syllabus. A Learning-Centered Approach (2-nd edition). Jossey-Bass, San Francisco, 2008. 132 pages.
4. Declan Kennedy. Writing and Using Learning Outcomes. A Practical Guide. University College Cork, Ireland, 2007. 100 pages.
5. Brian Bowe, Marian Fitzmaurice. Guide to Writing Learning Outcomes. Learning and Teaching Centre. Dublin Institute of Technology. Dublin. 13 pages.
6. Writing and Assessing Course-Level Student Learning Outcomes. Office of Planning and Assessment. Texas Tech University. 45 pages.

ՏԵՐՄԻՆԱԲԱՆԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ

<p>Ակադեմիական շարժունություն</p>	<p>Ուսանողների, դասախոսների և հետազոտողների տեղափոխություն ուսումնական, կրթական կամ հետազոտական նպատակներով, ինչպես բուհից բուհ, այնպես էլ երկրից երկիր</p>
<p>Աշխատանքային գործունակություն</p>	<p>Աշխատանքային իրավունքներ ձեռք բերելու և իրականացնելու, աշխատանքային պարտականություններ ստեղծելու ու դրանք կատարելու անձի ունակությունը</p>
<p>Բնագավառ</p>	<p>Գիտելիքի կամ մասնագիտական գործունեության միասնական տիրույթում ընդգրկված հարակից ոլորտների ամբողջություն</p>
<p>Գիտելիք</p>	<p>Ուսման, աշխատանքի կամ անձնական փորձառության ընթացքում տեղեկատվության յուրացման արդյունք, որը փաստերի, տվյալների, սկզբունքների և տեսությունների ամբողջություն է: Բնութագրվում է ըստ խորության, ընդգրկույթի, բարդության և տեսակի: Գիտելիքի դրսևորման ձևերից են հիշելը, մտապահելը, վերարտադրելը և այլն: Սովորաբար նկարագրվում է հետևյալ բայերի գործածությամբ՝ թվարկել, վերարտադրել, նկարագրել, պատմել, ներկայացնել, ցույց տալ, ուրվագծել և այլն</p>
<p>Գնահատում (1)</p>	<p>Առկա տեղեկատվության հիման վրա դատողություններ/եզրահանգումներ անելու և դրանք արժևորելու ունակություն, որը սովորաբար նկարագրվում է հետևյալ բայերի գործածությամբ՝ արժևորել, գնահատել, հարաբերել, համեմատել, համադրել, հակադրել, դասակարգել, տարբերակել, դատել, չափել, հաշվել</p>
<p>Գնահատում (2)</p>	<p>Գործընթաց, որը չափում է սովորողի կրթական ձեռքբերումներն ըստ սահմանված չափանիշների</p>

Գործատու	Աշխատանքային հարաբերության կողմ, որն աշխատանքային պայմանագրի հիման վրա և/կամ օրենքով սահմանված կարգով օգտագործում է անձի աշխատանքը
Դասավանդում	Ուսումնական հաստատությունում դասախոսի կողմից իրականացվող գործունեություն, որի նպատակն է սովորողներին հաղորդել/ տրամադրել համապատասխան գիտելիք, կարողություններ և հմտություններ
Եվրոպական բարձրագույն կրթության տարածք (ԵԲԿՏ)	Բոլոնիայի գործընթացի մասնակից պետությունների բարձրագույն կրթության համակարգերի աստիճանական ինտեգրման արդյունքում ձևավորված համագործակցություն, որի նպատակն է այդ համակարգերի համադրելիության և համատեղելիության ապահովումը: Պաշտոնապես գործարկվել է 2010 թ-ին
Եվրոպական բարձրագույն կրթության տարածքի որակավորումների շրջանակ	Որակավորումների ազգային շրջանակների համակցման մեխանիզմ, որն ապահովում է եվրոպական երկրների բարձրագույն կրթության որակավորումների ազգային շրջանակներում ներառված որակավորումների փոխադարձ կապը՝ դրանք դարձնելով դյուրընթացելի՝ միաժամանակ նպաստելով ուսանողների և աշխատողների շարժունությանը և հարատև կրթությանը
Ընդհանրական կարողություններ	Տարբեր մասնագիտական ոլորտներում արդյունավետ գործունեություն ծավալելու համար անհրաժեշտ, մասնագիտությանն անմիջականորեն չառնչվող կարողություններ (օր.՝ թիմում աշխատելու, որոշումներ կայացնելու, նախագծեր մշակելու և կառավարելու և այլն)
Իմացություն	Ուսումնասիրած տեղեկատվությունը հասկանալու և մեկնաբանելու ունակություն: Սովորաբար նկարագրվում է հետևյալ բայերի գործածությամբ՝ պարզաբանել, բացատրել, մեկնաբանել, քննարկել, հիմնավորել, լուսաբանել, ձևակերպել և այլն

Կարողություն	Առաջադրանքներ կատարելու և խնդիրներ լուծելու նպատակով գիտելիքը և իմացությունները կիրառելու ունակություն, որը կարող է լինել ինչպես մտավոր (իմացական), այնպես էլ գործնական (պրակտիկ)
Կիրառություն	Որոշակի պայմաններում և/կամ նոր իրադրություններում գիտելիքը և իմացությունը գործածելու (կիրարկելու) ունակություն: Սովորաբար նկարագրվում է հետևյալ բայերի գործածությամբ՝ կիրառել, օգտագործել, կատարել, գործածել, լուծել, մշակել և այլն
Կրեդիտ	Գաղնթացի/ծրագրի կրթական վերջնարդյունքների ձեռքբերման համար սովորողից պահանջվող լրիվ (լսարանային և արտալսարանային) աշխատաժամանակի չափման պայմանական միավոր: Սովորաբար, 1 եվրոպական կրեդիտը (ECTS) համարժեք է ուսանողի 30 ժամ ուսումնական լրիվ բեռնվածությանը, իսկ 1 ամերիկյան կրեդիտը՝ ուսանողի շաբաթական 2 ժամ լսարանային բեռնվածությանը
Կրթական ծրագիր	Որակավորման տվյալ մակարդակի ավարտին ակնկալվող կրթական վերջնարդյունքների ձեռքբերմանը միտված դասընթացների և այլ ուսումնական մոդուլների ամբողջություն, որն իրականացվում է սահմանված ժամկետներում՝ որոշակի տրամաբանական հաջորդականությամբ և ուսուցման համապատասխան մեթոդների կիրառմամբ
Կրթական միջավայր	Մասնագիտական, նյութատեխնիկական, կազմակերպական, մշակութային և սոցիալ-հոգեբանական արտաքին և ներքին բաղադրիչների այն ամբողջությունը, որը ձևավորում է կրթական գործընթացի իրականացման պայմանները
Կրթական պահանջմունք	Գիտելիքն ընդլայնելու, ինչպես նաև այս կամ այն աշխատանքը կատարելու կամ խնդիրը լուծելու համար անհրաժեշտ գիտելիքների և կարողությունների զարգացման անհրաժեշտություն և/կամ ցանկություն

<p>Կրթական վերջնարդյունքներ</p>	<p>Գ-ասընթացի կամ կրթական ծրագրի ուսումնասիրման արդյունքում սովորողից ակնկալվող գիտելիքի, կարողությունների և հմտությունների սահմանված ձևաչափի նկարագրություն</p>
<p>Հաղորդակցման կարողություններ</p>	<p>Որակավորման տվյալ մակարդակի պահանջներին համապատասխան՝ բանավոր և գրավոր տեղեկատվությունը հստակ և ընկալելի կերպով հաղորդելու, ինչպես նաև մասնագիտական և ոչ մասնագիտական լսարանի հետ փոխադարձ շփումն ապահովելու ունակություն</p>
<p>Համակարգված գիտելիք</p>	<p>Գիտելիք, որը ներառում է տվյալ ոլորտին առնչվող փոխկապակցված տեղեկատվություն՝ ուսումնասիրության օբյեկտների և երևույթների բոլոր ներքին տրամաբանական կապերի վերաբերյալ</p>
<p>Համակողմանի գիտելիք</p>	<p>Գիտելիք, որը ներառում է տվյալ ոլորտին առնչվող ամբողջական և ընդգրկուն տեղեկատվություն՝ ուսումնասիրության օբյեկտների և երևույթների բոլոր կողմերի (ասպեկտների) վերաբերյալ</p>
<p>Հավաստագրում</p>	<p>Անձի գիտելիքի, կարողությունների, հմտությունների և/կամ փորձառության պաշտոնական ճանաչման գործընթաց՝ համաձայն գնահատման ընդունված չափանիշների և ընթացակարգերի</p>
<p>Հավատարմագրում</p>	<p>Պաշտոնական գործընթաց, որի միջոցով իրավասու մարմինը գնահատում և հավաստում է ուսումնական հաստատության կամ կրթական ծրագրի համապատասխանությունը սահմանված նվազագույն չափանիշներին և չափորոշիչներին</p>
<p>Հարատև կրթության որակավորումների եվրոպական շրջանակ</p>	<p>Որակավորումների նկարագրման համընդհանուր շրջանակ, որը հնարավորություն է ընձեռում համեմատելու և փոխկապակցելու եվրոպական տարբեր երկրների որակավորումները՝ դրանք առավել դյուրընթեռնելի և հասկանալի դարձնելու նպատակով, դրանով իսկ նպաստելով հարատև կրթությանը և քաղաքացիների (աշխատուժի) շարժունությանը երկրների միջև</p>

Հետազոտություն	Կանոնավոր կերպով իրականացվող տեսական և փորձարարական աշխատանք, որն ուղղված է առկա գիտելիքի ընդլայնմանը և խորացմանը, ինչպես նաև նոր գիտելիքի ստեղծմանն ու կիրառմանը
Հմտություն	Աշխատանքում, ուսումնառության, մասնագիտական և անձնական փորձառության ընթացքում գործնական և տեսական գիտելիքի, ձեռքբերած փորձի պատշաճ կիրառման ունակություն (վարպետություն, արհեստավարժություն), ինչը հնարավորություն է ընձեռում արդյունավետ գործելու ստեղծված անձանոթ իրադրություններում
Ճանաչում	Իրավասու մարմնի կողմից որակավորման իսկության պաշտոնական վավերացում՝ կրթական նոր (սովորաբար՝ ավելի բարձր) աստիճան և/կամ աշխատաշուկա մուտքն արտոնելու նպատակով
Մակարդակի նկարագրիչներ	<p>Որակավորումների շրջանակի յուրաքանչյուր մակարդակի ավարտին ակնկալվող կրթական ձեռքբերումների ընդհանրական ձևակերպումներ: ՀՀ ՈԱԾ-ի մակարդակի նկարագրիչներն ունեն հինգ չափայնություն՝</p> <ul style="list-style-type: none"> – գիտելիք և իմացություն, – գիտելիքի և իմացության կիրառում, – հաղորդակցման, ՏՀՏ և տվյալների հետ աշխատելու կարողություններ, – ընդհանրական իմացական կարողություններ (ներառյալ դատողություններ անելը), – ինքնուրույնություն և պատասխանատվություն (ներառյալ սովորելու կարողությունները)
Մասնագիտական գործունեություն	Մասնագիտության շրջանակներում իրականացվող գործունեություն, որը պահանջում է տվյալ ոլորտին հատուկ գիտելիքների, կարողությունների և հմտությունների պատշաճ կիրառում՝ սահմանված գործընթացներն իրականացնելու և/կամ խնդիրները լուծելու նպատակով

Մասնագիտական հանրություն	Տվյալ մասնագիտական կամ հարակից ոլորտներում գործունեություն ծավալող անձինք, ովքեր ծանոթ են ոլորտի մեթոդաբանությանը, խնդիրներին և դրանց լուծման ուղիներին
Մասնագիտական ոլորտ	Աշխատանքի և գիտության ասպարեզ, որը բնութագրվում է գործունեության ընդհանուր օբյեկտով, գիտելիքի և կարողությունների բնորոշ լրակագմով և կիրարկման հատուկ մեթոդաբանությամբ
Մասնագիտացում	Մասնագիտության շրջանակներում իրականացվող խորացված (ներ մասնագիտացված) ուսուցում, որը չի հանգեցնում նոր որակավորման, օրինակ՝ «Քվանտային ֆիզիկա» մասնագիտացում՝ «Ֆիզիկա» մասնագիտության շրջանակներում, «Հանրային կառավարում» մասնագիտացում՝ «Կառավարում» մասնագիտության շրջանակներում և այլն
Մասնագիտացված գիտելիք և կարողություններ	Նեղ մասնագիտական ուղղվածության գիտելիք և կարողություններ, որոնք ձևավորվում են որոշակի առարկայական ուղղությամբ կատարված խորը և մանրակրկիտ ուսումնասիրության արդյունքում
Մասնագիտություն	Ուսումնառության որոշակի առարկայական ուղղություն, որը բնութագրվում է գիտելիքի և կարողությունների բնորոշ լրակագմով և հանգեցնում է համապատասխան որակավորման շնորհման, օրինակ՝ «Ֆիզիկա» մասնագիտություն - Ֆիզիկայի բակալավր, «Կառավարում» մասնագիտություն - Կառավարման մագիստրոս և այլն
Մեթոդ	Որոշակի ոլորտում գործադրվող հնար, միջոց, եղանակ, որն ուղղված է առաջադրված խնդրի լուծմանը
Մեթոդաբանություն	Ուսումնասիրության մեթոդների, կանոնների և մոտեցումների ամբողջական համակարգ

<p>Շահակից</p>	<p>Անձ, խումբ, պետական կամ հասարակական կառույց, որը ներդրում և մասնակցություն ունի որոշակի (այստեղ՝ կրթական) համակարգում, կարող է ներգործել համակարգի վրա կամ կրել վերջինիս ազդեցությունը: Տարբերում են ներքին (կրթական գործընթացի անմիջական մասնակիցներ՝ ուսանողներ, դասախոսական և վարչական կազմ) և արտաքին (կրթական գործընթացի անմիջական կողմ չհանդիսացող մասնակիցներ՝ կառավարություն, գործատուներ, ապագա ուսանողներ և նրանց ծնողները և այլն) շահակիցներ</p>
<p>Շրջանավարտ</p>	<p>Անձ, ով ավարտել է ուսումնական հաստատության հիմնական կրթական ծրագիրը կամ վերապատրաստման դասընթաց(ներ)ը և ստացել է համապատասխան որակավորում կամ վկայական/հավաստագիր</p>
<p>ՈԱՇ-ի մակարդակներ (շրջափուլեր)</p>	<p>Կրթական ձեռքբերումների հարաբերական բարդությունը և/կամ խորությունը, ինչպես նաև այդ ձեռքբերումների դրսևորման, կիրարկման կամ օգտագործման համար պահանջվող ինքնուրույնության աստիճանը բնորոշող մակարդակներ, որոնց համաձայն դասակարգվում են կրթական որակավորումները: ՀՀ ՈԱՇ-ը բաղկացած է ութ մակարդակից, որոնցից ամենաբարդը ութերորդն է</p>
<p>Ոլորտ</p>	<p>Մասնագիտական գործունեության հարակից ուղղությունների ամբողջություն, որի հիմքում տնտեսական գործառույթի, արտադրանքի, ծառայության կամ տեխնոլոգիայի ընդհանրությունն է</p>
<p>Որակավորման աստիճան</p>	<p>Բարձրագույն կրթության որակավորում (բակալավր, մագիստրոս, գիտությունների թեկնածու և այլն), որն ամբողջապես բավարարում է որակավորումների ազգային շրջանակի տվյալ մակարդակի բոլոր նկարագրիչների պահանջները</p>

<p>Որակավորման նկարագրի</p>	<p>Որակավորման ընդհանրական բնութագիր, որը ներկայացնում է տվյալ որակավորման համար սահմանված գիտելիքի և կարողությունների շրջանակն ու կիրառման տիրույթը</p>
<p>Որակավորման նկարագրիչներ</p>	<p>Ձևակերպումների լրակազմ, որը նկարագրում է ՈԱՇ-ում ներառված յուրաքանչյուր որակավորման շնորհման համար պահանջվող կրթական վերջնարդյունքները՝ արտահայտված գիտելիքի, կարողությունների և հմտությունների եզրույթներով</p>
<p>Որակավորում</p>	<p>Գնահատման և վավերացման գործընթացների պաշտոնական արդյունք (դիպլոմ, հավաստագիր և այլն)՝ ստացված իրավասառու մարմնի որոշման հիման վրա, առ այն, որ անձը ձեռք է բերել տվյալ մակարդակի համար սահմանված չափորոշիչներին համապատասխան կրթական վերջնարդյունքներ: Որակավորումների ազգային շրջանակի համատեքստում այդպիսի չափորոշիչներ են մակարդակների նկարագրիչները</p>
<p>Որակավորումների ազգային համակարգ</p>	<p>Ուսումնառության արդյունքների ճանաչմանն ուղղված գործընթացների և մեխանիզմների ամբողջություն, որն ապահովում է կրթության և ուսուցման կապը աշխատաշուկայի և հասարակության հետ: Որակավորումների ազգային համակարգը բաղկացած է մի շարք ենթահամակարգերից, որը ներառում է ինչպես որակավորումների ազգային շրջանակը, այնպես էլ որակի ապահովմանը, գնահատմանը և որակավորումների շնորհմանն առնչվող գործընթացներ և մեխանիզմներ</p>
<p>Որակավորումների շրջանակ</p>	<p>Կրթական տարբեր մակարդակների համար սահմանված նկարագրիչներին համապատասխան՝ որակավորումների դասակարգման գործիք, որի նպատակն է փոխկապակցել ազգային որակավորումները և համապատասխանեցնել աշխատաշուկայի և հասարակության պահանջներին՝ դրանք դարձնելով թափանցիկ և հասկանալի</p>

<p>Որակավորումների ոլորտային շրջանակ</p>	<p>Որակավորումների շրջանակ, որը որակավորումների ազգային շրջանակին համապատասխան՝ որոշակի մասնագիտական ոլորտի համար սահմանում է գիտելիքի, կարողությունների և հմտությունների անհրաժեշտ նվազագույն կազմը</p>
<p>Որակի ապահովում</p>	<p>Ուսումնական հաստատության կամ կրթական ծրագրի որակի մշտադիտարկման, գնահատման և բարելավման շարունակական գործընթաց, որն իրականացվում է հաստատության (որակի ներքին ապահովում) կամ այլ իրավասու մարմնի (որակի արտաքին ապահովում) կողմից</p>
<p>Ուսանող</p>	<p>Որակավորում շնորհող կրթական ծրագրով ուսումնական հաստատությունում ուսումնառող անձ</p>
<p>Ուսումնական մոդուլ</p>	<p>Կրթական ծրագրի բաղադրիչ հանդիսացող ամբողջական դասընթաց կամ դասընթացի ինքնուրույն մաս, որի վերջնարդյունքների ձեռքբերումը ենթակա է գնահատման՝ սահմանված կրեդիտների շնորհմամբ: Որոշ դեպքերում մոդուլը նաև առանձին դասընթացների մի ամբողջություն է, որը միտված է սերտորեն փոխկապակցված կրթական վերջնարդյունքների ձևավորմանը</p>
<p>Ուսումնառություն</p>	<p>Գործունեություն, որն ուղղված է նոր գիտելիքի, արժեքների, կարողությունների և հմտությունների ձեռքբերմանը կամ զարգացմանը: Այն կարող է լինել ինչպես նպատակային (ֆորմալ կամ ոչ ֆորմալ), այնպես էլ ոչ նպատակային (ինֆորմալ)</p>
<p>Միևթեզ</p>	<p>Տեղեկատվության, փաստերի, նյութերի առանձին տարրերի՝ ցանկալի հատկանիշներով, նոր ամբողջություն ստանալու նպատակով համակցելու/միավորելու գործընթաց: Սովորաբար նկարագրվում է հետևյալ բայերով՝ համադրել, համակցել, նախագծել, մշակել, ստեղծել, կազմել, ստանալ, դուրս բերել, կառուցել, միավորել, պատրաստել, հայտնագործել, վերափոխել և այլն</p>
<p>Սովորող</p>	<p>Անձ, ով ներգրավված է ֆորմալ, ոչ-ֆորմալ և ինֆորմալ ուսումնառության ձևերում</p>

Վերլուծություն	<p>Տեղեկատվությունը, փաստերը, նյութը բաղկացուցիչ մասերի կամ իմաստային բաղադրիչների տրոհելու գործընթաց՝ դրանց նշանակությունը, փոխհարաբերությունը կամ կառուցվածքային կապերը վեր հանելու և հասկանալու նպատակով: Մովորաբար նկարագրվում է հետևյալ բայերով՝ տարրալուծել, բաժանել, բացահայտել, որոշել, տարբերակել, տարանջատել, տրոհել, մասնատել, քննել, զննել, ուսումնասիրել և այլն</p>
-----------------------	--



Co-funded by the
Tempus Programme
of the European Union



TEMPUS “ARMENQA” PROJECT
543817-TEMPUS-1-2013-1-SE-TEMPUS-SMHES
“IMPLEMENTATION OF NATIONAL AND
SECTORIAL QUALIFICATIONS FRAMEWORKS IN ARMENIA”

**DEVELOPMENT OF LEARNING
OUTCOME BASED COURSES AND
EDUCATIONAL PROGRAMMES**

**TEACHER’S
GUIDEBOOK**

A. Budaghyan, A. Grigoryan

YEREVAN 2017

Authors

A. Budaghyan, A. Grigoryan

Editor

M. Santurjyan

Development of learning outcome based courses and educational programmes. Teacher's Guidebook.- Yerevan. 2017.- 284 p.

The Guidebook is addressed to all stakeholders involved in the educational process of Armenian HEIs - teaching staff, work groups developing educational programmes and administrative staff. The state-of-the-art approaches and ways of developing learning outcome based courses and educational programmes, the modern requirements and criteria demanded of them are presented, as well as examples and practical assignments are given in the Guidebook.

© Budaghyan A., 2017

ISBN 978-9939-872-14-8



The project has been funded with support from the European Commission.

This publication reflects the views only of the author, and the Commission cannot be held responsible for any use which may be made of the information contained therein.

CONTENTS

INTRODUCTION.....	6
CHAPTER I. DEVELOPMENT OF LEARNING OUTCOME BASED COURSES AND EDUCATIONAL PROGRAMMES	9
1.1. Principles of design and development of learning outcome based educational programme	12
1.2. Definition of educational programme goals.....	18
Examples.....	19
Practical tasks.....	24
1.3. Definition of course goals.....	27
Examples.....	28
Practical tasks.....	32
1.4. Formulation of course learning outcomes	35
Bloom’s Taxonomy of knowledge types	42
Main characteristics of learning outcomes.....	58
How to formulate course learning outcomes.....	62
Examples.....	69
Practical tasks	76
1.5. Formulation of programme learning outcomes	86
How to formulate programme learning outcomes.....	99
Gradual growth of knowledge in educational programme.....	104
Examples	108
Practical tasks	115
1.6. Definition of structure and content of educational programme.....	124
Curriculum map of educational programme	126
Practical tasks	130
1.7. ECTS credit system.....	136
Basics of ECTS credit system	138
Allocation of credits to a course.....	140

Examples.....	158
Practical tasks	161
SUMMARY	165
CHAPTER 2. CHOICE OF TEACHING, LEARNING AND ASSESSMENT METHODS	167
2.1. Teaching and learning methods	167
Examples.....	175
Practical tasks	180
2.2. Criteria based assessment of students	184
Main principles of effective assessment	187
Formulation of assessment criteria	192
Assessment modes and methods and their choice	198
Assessment standards and their definition	206
Definition of assessment standards levels	208
Assessment types.....	214
Learning environment.....	220
Examples.....	222
Practical tasks	234
SUMMARY	238
CHAPTER 3. COMPOSITION OF DOCUMENT PACKAGE OF EDUCATIONAL PROGRAMME	239
3.1. Proposal for development of educational programme.....	240
3.2. Educational programme specification.....	244
3.3. Course description	257
SUMMARY	264
USED LITERATURE.....	265
TERMINOLOGICAL GLOSSARY.....	266



Նշումների համար

ԱՐԴՅՈՒՆԱՀԵՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ԵՎ
ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՄՇԱԿՈՒՄ

**ԴԱՍԱԽՈՍԻ
ՁԵՌՆԱՐԿ**

Հեղինակներ՝
Ա. Բուդաղյան, Ա. Գրիգորյան

Խմբագիր՝
Մ. Սանթրուքյան

ISBN 978-9939-872-14-8



9 789939 872148